

7203

Whose

Young by whom
hearing worse
young &


281(09)
U-38



28109
5-38

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ

ՀԱՄԱԼՈՏ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ



ՄԵԾ ՆԵՐՍԻ Ս

Կ Ա Զ Մ Ե Ց

ՅՈՎԱՆՆԻՍ ԱԽԱԳ-ՔԱՀ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
սոյց Թիֆլիսի օրիորդական Աղմագիօնի և Անդրկով-
կասեան իգական ինստիտուտի:

280
06-ԱԱ

Չորրորդ տպագրութիւն (բարեփոխած):



Թ Ի Ֆ Լ Ի
Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7
1914

Թ 81(09)
ԵՊՀ ՅԱ. ԽՈՎ 2009

280 Ս-38 Մ.

06-ՄԱՀԱՅԱ ԵԿԵՂԵՑՈՒԻ

ՀԱՄԱԼՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ




Կ Ա Զ Մ Ե Ց

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱԻԱԳ-ԲՈՀ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Կրօնուսոյց Թիֆլիսի օրիորդական Արքայական գիմնազիոնի և Անդրկովկասեան իդական ինստիտուտի:

Հորրորդ տպագրութիւն (բարեփոխած).



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Ն. Աղամենակի, Պոլից. 7
1914

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՎՃԱՐԱՎԱՐ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

ԳՐՔՈՑԿԻՍ ԼՈՅԱ ՀՆԾԱՅԵԼՈՒ ԱԲԻԹՈՂ

Երկար տարիներ անընդհատ կրօնուսուցչի պաշտօն վարելով
Թիֆլիզի օրիորդական երրորդ գիմազիօնում, մեծ անյարմարու-
թիւնների էի հանդիպում առհասարակ կրօնագիտութեան բոլոր
դասագրքերի վերաբերմամբ, նամանաւանդ Հայոց եկեղեցական
պատմութեան դասագրքի. որովհետեւ եղածներից ոչ մինը չէ յար-
մարեցրած պետական դպրոցների տարեկան դասընթացի ծրա-
գրին, ուսանողների զարգացողութեան և մայրենի լեզուի գիտու-
թեան աստիճանին:

Առաջին տարիներում իբրև փորձ ստիպուած էի զանազան
հեղինակութիւններից, զլխաւորապէս Յուսիկ վարդապետ (այժմ
Կափսկոպոս) Մովսէսիանի և Յովսէփ ա.-քահանանց Օրբէլու դա-
սագրքերից միմիայն պատմութեան ամենակարենոր հատուածները
քաղուածք անել և բերանացի աւանդել աշակերտուհիներիս:

Բայց նրանք առանց դասագրքի շատ էին գժուարանում դա-
սերը պատրաստել: Իբրև դասագիրք նշանակում էի Օրբէլու եկե-
ղեցական պատմութիւնը և միշտ լսում էի հետեւել խօսքերը.
«Տէր-հայր, մեղ տուէք մի գիրք այնպիսի բովանդակութեամբ,
ինչպէս որ գուշ էք պատմում, այն ժամանակ մենք հեշտու-
թեամբ կը պատրաստենք մեր դասերը»:

Աշակերտուհիներիս ցանկութեամբ կազմելով ներկայ «Դա-
սագիրքը» համաձայն մինչև ցայսօր աւանդած ծրագրի և ուղ-
ղութեան, նուիրում եմ նոյն գիմազիօնի Սանուհիներիս, իբրև
սկզբնապատճառի գրքոյկիս լոյս լնծայելուն և ցանկանում նը-
րանց բոլորին բարոյական զարգացումն Քրիստոնէական ճշմարիտ
հաւատի, յոյսի և սիրոյ մէջ:

Իսկ սոյն չորրորդ տպագրութեամբ, բաւականաչափ ընդար-
ձակելով և բարեփոխելով, նպատակայարմար համարեցի կցել
դասագրքին նաև բարեէզ, որպէսզի աշակերտ-աշակերտուհիների
համար դասերը լինեն աւելի տպաւորիչ:

Յ. ա. ք. Մ.

ՁԱՅՆ ՎՐԱՅԻ ՎՐ

ԿՈՎՈՒՅ ԽՈՀՅԱՅ ԱՅՍ ԱՎԵՐԵՐԱՐ

Խայդամի հուշարձն վեցտառողջ ուսմքըցմա զմանակ դաշտ
-ապանդաման նկան հանօժքամեջ բզորդ մաքրդությա գրեթեց
դոյլ մասկ սակածքամոջը բայց առանձան նորդուր ոչ պահեցի
մաքրդը սկսած բայց առանձան պահեցացի պահարան
-դոյլ և այս չափու ուժութեար առենից պայքար մասեւ ուսուա
-սուէ մասնաւ մաքեցու վեճացուր մաքանա նայրըն
-առաջ քարդ վեճուն և մասկ սորդուր պահերուաւ ուժու

Հստ բարձու հրամանի նորին Ա. Օծութեան Վեհափառ Հայ-
-րապետի ազգիս Տ. Տ. ՄԿՐՅՉԻ, Դիւանս թոյլատրէ տպագրու-
թիւն դասագրքոյս, որ ընդ անուամբս «Հայոց եկեղեցու համա-
-ռոտ պատմութեան դասագիրք»:

Դիւանապետ Կորիւն վարդապետ

3 Դեկտեմբերի 1902 ամի սպառաւը մոց յանուանուր
ի Տիմիս: մէ Խառ ուշին և զարդարուար մաքանուց
և 1672.

Պահան ուշարձնաց ուժու մըսկուց սմէնի պահանաց
-ուան միամին զբուր առա մայուսուակա և մայուսուան Ս
-տուայ ճակա Եկեղեց նուսուս դո ամբարդը մ միսն
խոյի ունակ մատուցու մաքանացու զուամանեա իւն
-առաջնուն և դու առա առաջնուն առաջնուն առաջնուն առաջնուն առաջնուն

ՃՐՇԱՆ Ա

ՔՐԻՍՈՆԷԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԿՐԲՆԱՀՈՐՈՒԹԻՒՆԸ, ՄԱ-
-ՏԱԹԻԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԵԿ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳԱԼՈՒՍՏԸ
1

Այն փրկութեան աւետիսը՝ որ Աստուած խոստացել էր
մարդկութեան իր նահապետների և մարդարէների միջո-
ցով, կատարուեց այն ժամանակ, երբոր ծնուեց խոստա-
-ցած Փրկիչը Յիսուս Քրիստոս:
Յիսուս 12 տարեկան հասակում իր ծնողների հետ
գնաց երուսաղէմի տաճարը և Քահանայապետների ու
Պալիրների առաջ ցոյց տուաւ իր Աստուածային իմաստու-
թիւնը:

Երեսուն տարեկան մկրտուեց Յորդանան գետի մէջ
և ապա յայտնեց իր անձը աշխարհին, քարոզեց մարդ-
կանց սէր և խոնարհութիւնն, տուաւ նոր ուխտի օրէնքնե-
րը, գործեց հրաշքներ, չարչարուեց, մեռաւ խաչի վրայ,
թաղուեց գերեզմանում և երրորդ օրը յարութիւն առնե-
լով փրկեց ամբողջ մարդկութիւնը, որով և դրեց Քրի-
ստոնէական եկեղեցու հաստատուն հիմք:

Յիսուս Քրիստոսի համբարձումից յետոյ, երբ նրա
առաքեալները վերադարձան Զիթենեաց սարից, միւս ա-
շակերտների հետ ժողովուեցին երուսաղէմ և հաւատա-

ցեալների միջից ընտրեցին երկու բարեպաշտ անձինք՝ Մատաթիային և Բարսաբային. ապա բոլորը միասին աղօթեցին և խնդրեցին, որ Աստուած յայտնէ թէ ո՞րն է նրանցից արժանաւորը առաքելական պաշտօնի համար. Վիճակ գցեցին և վիճակն ընկաւ Մատաթիային, որ և համարուեց տասներկուերորդ առաքեալ՝ մատնիչ Յուդայի փոխանակ:

Հրէաները՝ Պասէքի տօնից յիսուն օր յետոյ Պենտեկոստէի տօնն էին կատարում որպէս յիշատակ Սինայի օրէնստութեան. Այդ օրը (Համբարձումից տասն օր յետոյ) Յիսուսի աշակերտները և միւս հաւատացեալները, որոնց հետ էր նաև Տիրամայրը, թուով 120 հոգի, բոլորը միասին ժողովուած էին Երուսաղէմի վերնատանը, ուր մի սիրտ և մի հոգի դարձած աղօթում էին և անհամբեր սրտով սպասում սուրբ հոգու շնորհքն ընդունելու, ինչպէս որ Փրկիչը նրանց խոստացել էր: Յանկարծ լսուեց մի երկնային ձայն՝ քամու պէս, և շարժեց այն տունը, ուր հաւատացեալներն էին. Սուրբ հոգին իջաւ բոլորի վրայ հրեղէն լեզուների նման և առաքեալները զօրացան սուրբ հոգու շնորհքով, սկսան խօսել զանազան լեզուներով, ինչպէս որ ս. Հոգին նրանց թելադրում էր:

2

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԱԾՈՒՄՆ ԵՐՈՒՍԱԼԵՄՈՒՄ ԵՒ ԵՕԹՆ ՍԱՐԿԱԽՍԳՆԵՐԻ ՀՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Պենտեկոստէի տօնի օրը՝ երբ առաքեալները զօրացած սուրբ հոգով խօսում էին ամեն լեզուներով, տօնի պատճառով շատ հրէաներ էին եկած Երուսաղէմ. նրանք լսելով առաքեալների խօսակցութիւնը, զարմանում էին, Պետրոս առաքեալը այս ժամանակ սկսեց քարոզել նրանց և բացատրել Յիսուս Քրիստոսի վրկարար վարդա-

պետութիւնը, Նրա մահը և յայտնութիւնը: Այս առաջին քարոզութիւնով 3000 հոգի ընդունեցին Քրիստոնէութիւն: Իսկ երկրորդ անգամ, երբ Պետրոս և Յովհաննէս առաջեալները ցեղեկուայ ինսը ժամին գնում էին տաճար աղօթելու, Պետրոսը Յիսուս Քրիստոսի անունով բժշկեց ՚ի ծնէ կաղին, որ տաճարի դռան մօտ նստած անցուգարձ անողներից ողորմութիւն էր խնդրում: Այդ օրը նոյնպէս իր ազդու քարոզութիւնով 5000 հոգու դարձրեց Քրիստոնեայ:

Սրանից յետոյ քրիստոնեայ եկեղեցին ամենամեծ յաղթանակով յառաջադիմում էր Երուսաղէմում և հաւատացեալների թիւը օրէցօր աւելանում առաքեալների կատարած քարոզութիւնով և հրաշքներով:

Առաքեալների կեանքն ու վարքը այնպէս անարատ էին, որ շատերն էին գրաւելում, որովհետեւ առաջին հաւատացեալները ապրում էին իբրև մի գերդաստանի անդամներ. ով ինչ ստացուածք որ ունէր, այն ամենքին էր պատկանում. ամեն բան հասարակաց էր և նրանց բոլորին միմեանց հետ կապողն էր քրիստոնէական հաւատի ուսմունքը:

Եւ որովհետեւ հաւատացեալների թիւը այսպէս զգալի կերպով աճում էր, իսկ առաքեալները չէին կարողանում կատարել միաժամանակ՝ թէ նրանց հոգեկան պիտոյքները և թէ ծառայել հասարակաց սեղանին, ուստի հաւատացեալների միջից ընտրեցին եօթը բարեպաշտ մարդկանց և ձեռք գնելով նրանց գլխին՝ ձեռնադրեցին սարկաւագ և նշանակեցին հասարակաց սեղանին սպասաւոր, որոնք ազատ ժամերին, իբրև օգնականներ, քարոզում էին հաւատացեալներին Քրիստոսի վարդապետութիւնը: Սրանց մէջ ամենից նշանաւորը սուրբ Ստեփանոս սարկաւագն էր՝ որպէս ճարտար և աներկիւղ քարոզիչ:

3 և զնան այս գումարով պահպանական քրիստոնեական եկեղեցու ԱռԱջին Թշուկութիւնը, ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱԼԱՇԱՆՔԸ ՀՐԵՒՑ ԵՒ ՀԵԹԱՆՈՍ ԱՋԳԵՐԻՑ

Առաքեալների եռանդուն քարոզութիւններով որքան աւելանում էր հաւատացեալների թիւը, նոյն չափով էլ աւելանում էր Հրէից ազգի նախանձն ու ատելութիւնը դէպի քրիստոնեաները:

Հրէից քահանապետները գրգռուած քրիստոնէական եկեղեցու յառաջադիմութիւնով, իրանց ժողովների մէջ որոշեցին, որ առաքեալները չվստահանան քարոզել Յիսուս Քրիստոսի անունով: Բայց չնայելով այդ խստութիւններին, աշակերտները դարձեալ շարունակում էին աւետարանական քարոզութիւնները, ուստի և հրէանները՝ նրանց վախեցնելու համար, երկու անգամ բանտարկեցին. սակայն նրանք Աստուածային հրաշքով ազատուեցին բանտից և շարունակեցին իրանց քարոզութիւնը Երուսաղէմի տաճարում և դուրս:

Այս տեսնելով, քահանայապետները ատեան կազմեցին և կանչելով Յիսուսի աշակերտներին, կամենում էին նրանց մահուան պատիժ տալ: Ժողովականները Գամազիէլ անունով մի օրէնուսոյց փարիսեցու խորհրդով վճռեցին այս անգամ բաւականանալ միայն թեթեւ պատիժ տալով, բայց և խստիւ արգելել, որ այլևս չշարունակեն իրանց քարոզութիւնը Յիսուս Քրիստոսի անունով: Առաքեալները աներկիւդ պատասխանեցին. «Մենք պարտաւոր ենք աւելի Աստծուն լսել, քան թէ մարդկանց», և դուրս գնալով նրանց մօտից, աւելի ևս եռանդուն կերպով սկսեցին քարոզել քրիստոնէութիւնը:

Այս հալածանքի ժամանակ առաջին նահատակը դար-

ձաւ սուրբ Ստեփաննոսը, եօթը սարկաւագներից մինը, որ իւր ազատ հայեացքների համար հակառակ հրէական օրէնքների և ծէսերի, քարկոծուեցաւ նոյն հրէայ ժողովրդից: Երբ նրան քարկոծում էին, նա իբրև ճշմարիտ հետևող Քրիստոսի, աղօթում էր իրան քարկոծողների համար ասելով. «Տէր, ներից սրանց, որովհետեւ իրանք էլ չգիտեն՝ թէ ինչ են անում»:

Սուրբ Ստեփաննոսի յիշատակը մեր եկեղեցին տօնում է ղեկամբերի վերջում, Յիսուսի ծննդեան տօնից առաջ:

ՍՈՂՈՍԻ ԴԱՐՁԼ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՈՒԽԸ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑԻ ԴՈՒՐԱ

Սուրբ Ստեփաննոսի մահից յետոյ, քրիստոնէական եկեղեցին սաստիկ հալածում էր, ուստի բոլոր հաւատացեալները ցրուեցին Երուսաղէմից և գնացին գանազան քաղաքներ, բացի առաքեալներից: Այս հալածողների մէջ կար մի տարսոնացի հրէայ Երիտասարդ, Սողոս անունով: Նա ս. Ստեփաննոսի նահատակութեան ժամանակ ներկայ էր. և այնքան էր ատում Քրիստոսի աշակերտներին և առհասարակ բոլոր հաւատացեալներին, որ աշխատում էր բոլորովին ջնջել նրանց երկրի Երեսից: Սրանով չբաւականացած, երբ իմացաւ թէ հաւատացեալների մեծ բազմութիւն է գտնուում Դամասկոսում, քահանայապետից հրաման ստացաւ, որ այստեղից նրանց կապած բերի Երուսաղէմ:

Եւ երբ իր մարդկանցով գնում էր Դամասկոս, յանկարծ երկնքից մի լոյս փայլատակեց ու ընկաւ գետնի վրայ և երկնքից ձայն լսուեց, որ ասում էր. «Սողոս, Սողոս, ինչու ես ինձ հալածում»:

Սողոսը հարցրեց. «Ո՞վ ես դու, որին ես հայածում եմ»։

Զայնը պատասխանեց. «Ես Յիսուսն եմ, որին դու հալածում ես»։

Սողոսը ուշքի գալով հարցրեց. «Տէր, ինչ ես կամենում, որ ես անեմ»։

Զայնը պատասխանեց «Վեր կաց, գնա Դամասկոս և այստեղ կը գտնես Յիսուսի աշակերտ Անանիային և նրանից կը մկրտուես»։

Այդ տեսիքից յետոյ Սողոսը կուրացաւ, նրա մարդիկ ձեռքից բռնած տարան Դամասկոս։ Անանիան, Յիսուսի աշակերտը, Աստուածային ցուցմամբ եկաւ նրա մօտ, բժշկեց նրա աշքերը և մկրտեց։ Սողոսը Պօղոս անուանուեց և մնաց Դամասկոսում եղող հաւատացեալների մօտ. նա սկսեց քարոզել Քրիստոնէութիւնը, և շուտով դարձաւ գլխաւոր առաքեալներից մինը, իւր եռանդուն և արդիւնաւոր քարոզութեան համար։

Սամարիայում քրիստոնէութիւնը քարոզում էր Փիլիպոսը, որ եօթ սարկաւագներից մինն էր. նա այնտեղ շատերին քրիստոնեայ դարձնելով՝ մկրտեց, երբ առաքեալներն այդ լսեցին՝ Երուսաղէմից Սամարիա ուղարկեցին Պետրոսին և Յովհաննէսին, որոնք ձեռք դնելով հաւատացեալների վրայ, տալիս էին դրոշմի խորհուրդ։

Սամարիայում հաւատացեալների թւում կար մի մոգ Սիմոն անունով. սա երբ տեսաւ թէ Պետրոսն ու Յովհաննէսը ում վրայ որ ձեռք են դնում, իջնում է նրա վրայ և Հոգու շնորհքը, կամեցաւ կաշառքով գնել այդ արտօնութիւնը և ստանալ իրաւունք, որ եթէ ինքն ես ձեռք դնէ մի որևէ մարդու գլխին՝ ս. հոգին իջնի։ Պետրոս առաքեալը արհամարհելով այդ անարժան խնդիրը, մերժեց. Դրանից յետոյ՝ Աստուածային շնորհքը վաճառողներն ու գնողները կոչուեցին սիմոնականք Սիմոն մոգի անունով։

Ապա նա ուրացաւ իր հաւատը և սկսեց զանազան մոլորութիւններ քարոզել և համարուեց գլխաւոր հերձուածող։

Հրէութիւնից դարձած հաւատացեալներն սկզբում կարծում էին, թէ քրիստոնէութիւնը կարող են ընդունել միայն Մովսէսականները. իսկ հեթանոսութիւնից դարձածները, ճշմարիտ քրիստոնեայ լինելու համար, պարտաւոր էին կատարել մովսէսական ծէսերը և ճանաչել նրանց օրէնքները։ Բայց Աստուած մի առանձին տեսիքով բացարձաւ Պետրոս առաքեալի միտքը, որ իմանայ թէ հեթանոսների համար ևս բաց է քրիստոնէական եկեղեցու դուռը։

Պաղեստինէի կեսարիա քաղաքում մի հարիւրապետ կար, Կուռնէլիոս անունով. Մի անգամ, երբ նա աղօթում էր Աստուածն, հրեշտակը երկաց և ասաց. «Կուռնէլիոս, մարդ ուղարկիր և որոնիր Պետրոսին, որ նա դայ և սովորցնի քեզ թէ ինչ պէտք է անես»։ Կուռնէլիոսն իսկոյն ուղարկեց իր մարդիկը Յոպակ քաղաքը՝ հրաւիրելու Պետրոս առաքեալին։ Դեսպանները երբ մօտեցան քաղաքին, Պետրոսը բարձրացել էր տանիքի վրայ և աղօթում էր. Յանկարծ երկինքը բացուեց և մի մեծ անօթ կտաւի պէս իջաւ նրա առաջ, որի մէջ կային ամեն տեսակ չորքոտանի կենդանիներ՝ սողուններ ու թռչուններ և երկնքից ձայն լսուեց, որ ասում էր. «Պետրոս, մորթիր և կեր»։ Պետրոսն ասաց. «Ո՞չ, Տէր, մինչև այսօր պիղծ բան չեմ կերած և հիմա էլ չեմ ուտիլ»։ Զայնը դարձեալ կրկնեց և ասաց. «Այն, որ Աստուած սրբել է, դու իրաւունք չունիս պիղծ համարելու» և ապա անօթը վեր բարձրացաւ։

Մինչդեռ Պետրոսը զարմացած մտածում էր այս տեսիքի վրայ, եկան կուռնէլիոսի ուղարկած մարդիկ և հրաւիրեցին նրան կեսարիա։ Կուռնելիոսի մօտ ժողովուած

էին նրա բոլոր ազգականներն ու բարեկամները, երբ Պետք
բոսը կուռնէլիոսի տուն մտաւ. նա նրանց քարոզեց և
պատմեց Յիսուսի անօրէնութիւնների մասին: Քարոզելու
ժամանակ ս. Հոգին իջաւ ամենքի վրայ: Ապա Պետքոսը
Յիսուս Քրիստոսի անունով մկրտեց կուռնէլիոսին և նրանց
բոլորին, որոնք նրա մօտն էին և ամենքը փառաբանում
էին Աստծուն:

5

ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՃԱՆՍՊԱՐՀՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԻՒԾ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՎԱԽՃԱՆԸ,

Պօղոս առաքեալը՝ իր դարձից երեք տարի յետոյ
սկսեց իր ճանապարհորդութիւնը Դամասկոս քաղաքից:

Հրէաները տեսնելով, որ Պօղոսը փոխանակ քրիստո-
նեաներին հալածելու, իր քարոզութեամբ աւելի ևս հաս-
տառում է նրանց քրիստոնէական հաւատի մէջ, պահա-
պաններ դրին քաղաքի դռների մօտ, որ բռնեն նրան և
սպանեն. բայց հաւատացեալները գիշերով պարսպից վեր
հանցին և նա ազատուելով փախաւ երուսաղէմ. այդտե-
ղից գնաց իր հայրենի կիլիկիայի Տարսոն քաղաքը, ապա
սուրբ Բառնաբասի հետ գնաց Անտիոք քարոզելու:

Անտիոք քաղաքում հաւատացեալների թիւը հետզհե-
տէ մեծանում էր. ուր առաջին անգամ Փրկչի հաւատա-
ցեալներն ստացան «քրիստոնեայ» անունը. Անտիոքից
Պօղոսն ու Բառնաբասը գնացին Երուսաղէմ 51—52 թ.
տանելով իրանց հետ այնտեղի հաւատացեալների տուրքը
և յետոյ կրկին վերադառնալով Անտիոք, 52 թ. ճանապարհ
ընկան դէպի Կիպրոս ու Փոքր-Ասիայի կողմերը. ապա Մա-
կեդոն, Ցունաստան և այնտեղ եկեղեցիներ հաստատեցին:
Պօղոսը երկու տարուց աւելի մեալով Եփեսոսում, ապա

Ասիայի զանազան կողմերում քարոզելուց յետոյ գնաց
երուսաղէմ, ու հազիւ կարողացաւ ազատուել հրէաների
ձեռքից, որոնք կամենում էին նրան սպանել:

Հռովմայեցոց հազարապետը նրան ազատելով մահից,
ուղարկեց, ինչպէս Հռովմայ քաղաքացու՝ կեսարիա, Փե-
լիքս դատաւորի մօտ, ուր երկու տարի մնաց բանտի մէջ.
ապա դատաւորի մահից յետոյ ուղարկուեց Հռովմայ: Այդ-
տեղ Պօղոսը երկու տարի շարունակ քարոզեց և հեթա-
նոսներից շատերին դարձնելով քրիստոնեայ՝ կոչուեց հե-
թանոսների առաքեալ:

Քրիստոնէութեան առաջին դարում Հռովմայեցոց կայ-
սրներից ներոնը եղաւ առաջինը, որ սաստիկ հալածանք
սկսեց քրիստոնեաների դէմ: Դրա պատճառն այն էր, որ
65 թուին մեծ հրդեհ պատահեց Հռովմում և այրուեց քա-
ղաքի երրորդ մասը. ժողովուրդը յանցաւոր էր համարում
ներոնին, սա էլ իր կողմից մեղադրում էր քրիստոնէա-
ներին, որ կարողանայ ժողովրդին գրգռել դէպի նրանց:
Հալածանքն սկսուեց նախ Հռովմի մէջ և ապա տարա-
ծուեց գաւառները. այդ ժամանակ շատ անմեղ քրիստո-
նեաներ բռնուեցին և անտանելի տանջանքներով նահա-
տակուեցին:


Պետքոս և Պօղոս առաքեալները զանազան կողմեր
քարոզելուց յետոյ 64 թուին Հռովմումնահատակուեցին.
Պօղոսը գլխատուեց, իսկ Պետքոսը խաչուեց: Միւս առա-
քեալները ցրուելով զանազան երկիրներ, սկսեցին քարո-
զել սուրբ Աւետարանը: Դրանցից իւրաքանչիւրը նահա-
տակուեց իր քարոզած տեղում, իսկ ս. Ցովհաննէս առա-
քեալը, նոյն և աւետարանիչ, սուրբ կոյսի վերափոխու-
մից յետոյ, փոքր Ասիայի կողմերը երկար ժամանակ քա-
րոզելուց յետոյ, հաստատեց Եփեսոսի եկեղեցին և մեռա-
բնական մահով, մօտաւորապէս հարիւր տարեկան հասա-
կում:

« նում: Ես երբ լսեցի այդ ամեն հրաշագործութիւնները,
« մտքումս հաստատ գրեցի՝ երկուսից մինը՝ Դու կամ Աս-
« տուած ես երկնքից իջած և կամ Աստուծոյ Որդի: Ֆւ
« ես այդ պատճառով գրեցի այդ թուղթը՝ որ քեզ աղա-
« չեմ, աշխատես գաս ինձ մօտ և ինձ բժշկես հիւանդու-
« թիւնից: Լսած եմ Նոյնպէս, որ Հրէաները տրտնջում
« են Քո վրայ և կամենում են Քեզ չարչարել. ես ունիմ
« մի փոքրիկ, բայց գեղեցիկ քաղաք, նա բաւական կը-
« լինի մեզ երկուսիս:

Այս նամակը Աբգարն ու-

ղարկում է գեսպանների ձեռ-
քով երուսաղէմ, Նոյնպէս և
մի պատկերանան, որ եթէ
Փրկիչը չգար, պատկերը հա-
նէին և բերէին: Դեսպաննե-
րը հասան այն օրը, երբ Յի-
սուս Քրիստոսը մեծ հանդէ-
սով մտնում էր երուսաղէմ.
Նրանք չկարողանալով ան-
ձամբ մօտենալ և նամակը
տալ Յիսուսին, առաքեալնե-
րի միջոցով տուին Նրան:
Յիսուս Քրիստոս տեսնելով
Աբգարի մեծ հաւատը, պա-
տուիրեց Թովմաս առաքեա-
լին գրել հետեւեալ պատասխանը.

« Երանի այն մարդուն, որ չտեսած կը հաւատայ
« ինձ. գրուած է, թէ ով որ կըտեսնի ինձ, չի հաւատալ,
« իսկ ով որ չի տեսնիլ, նա կը հաւատայ և կապրի: Իսկ
« այն որ գրում ես իմ գալու մասին, չեմ կարող գալ,
« որովհետեւ ինձ պէտք է այստեղ կատարել այն ամենը,
« որի համար ուղարկուած եմ ես, և երբ կը կատարէմ,



ԾՐ Զ Ա Ն Բ

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑՈՒԻ ՀԱՄԱԴԻՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ

6.

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒԻ ՍԿՃԲՆԱՀՈՐՈՒԹԻՒՆՆԸ ՀԱ-
ՅԱՍՏԱՆԻ ԵԴԵՍԻԱ ՔԾԱԱՔՈՒՄ ԵՒ ՆԱԽԿԻՆ ԼՈՒՍԱ-
ԻՈՐԻՉՆԵՐ.—Ս. ԹԱԴԵՈՍ ԵՒ ԲԱՐԴՈՒՂԻՄԵԼՈՍ
ԱՌԱՔԵԱԼՆԵՐ

Միջագետքի Եղեսիա քաղաքի Հայոց Աբգար թագա-
ւորը իր գեսպաններից լսելով, որ Յիսուս երուսաղէմում
քարոզում է և մարդկանց բժշկում և մինչև անգամ մեռած-
ներին յարութիւն է տալիս, իսկոյն հաւատաց, որ նա Աս-
տուած է կամ Աստուծոյ որդի: Լսեց նաև այն, որ Հրէից
մեծամեծները Նրանից գժգոն լինելով, կամենում են սպա-
նել տալ, և որովհետեւ ինքը անբուժելի հիւանդութիւն ու-
նէր, նամակ գրեց Փրկիչն՝ խնդրելով որ գայ Եղեսիա
իրան բժշկի, իր մօտ ապրի՝ խաղաղ և հանգիստ:

Աբգարի գրած նամակը Յիսուսին հետեւեալն է.

« Արշամի որդի Աբգար՝ Յիսուս Փրկիչն և Բարերա-
րին, որ երկնեցաւ երուսաղէմ աշխարհում, ողջոյն:

« Լսած եմ այն հրաշալի բժշկութիւնների և հրաշքնե-
« րի մասին, որ լինում են Քո ձեռքով առանց գեղի և ար-
« մատների, որովհետեւ, ինչպէս պատմում են՝ Դու կոյ-
« բերին աչք ես տալիս, կաղերին՝ ոտք, բորբոներին՝ բժշ-
« կում ես, դեկերին հանում և մեռածներին կենդանաց-

« այն ժամանակ կը համբառնամ Նրա մօտ, ով որ իսձ « ուղարկել է. և երբ կը համբառնամ, կ'ուղարկեմ իս « աշակերտներիցս մինին, որ քո ցաւը բժշկէ և կեանք « տայ քեզ և քոյայնոց»:

Յիսուս իր գրաւոր պատասխանի հետ ուղարկեց Արդարին նաև իր անձեռագործ պատկերը, որ Արդարն սրանալով երկրպագութիւն տուաւ և պահելով իր մօտ, սպառում էր Յիսուսի խոստման կատարելուն։ Այդ պատկերը կոչուեց դաստառակ Քրիստոսի։

Յիսուս Քրիստոսի համբառնալուց յետոյ Թոփմաս առաքեալը՝ Փրկչի 33 թուին, Յիսուսի պատուէրի համաձայն, Թադէոսին, որ եօթանասուն աշակերտներից մինն էր, ուղարկեց Եղեսիա՝ բժշկելու Արդարին և քարոզելու քրիստոնէութիւնը։ Երբ Թադէոսը մտաւ Եղեսիա, Արդարը լսելով նրա սքանչելագործութեան համբաւը, կանչել տուաւ առաքեալին իր մօտ։ Թադէոսը ձեռքը գնելով նրա գլխին բժշկեց, մկրտեց նրան, նրա հետ և շատերին՝ թագաւորական տանից, նախարարներից և ժողովրդից։ Քանդեց կոատունները և նրանց տեղ հաստատեց քրիստոնէական եկեղեցիներ։

Ս. Թադէոսը թագաւորի թագ կարող Ադէին եպիսկոպոս ձեռնադրեց, կարգեց Եղեսացոց վրայ հովիւ և Արդարի հրովարտակով գնաց քարոզելու վերին Հայաստանի կողմերը, ուր կուսակալ էր Արդարի քեռորդի Սանատուկը որ մկրտուեց իր ընտանիքով։ Ս. Թադէոսը այդտեղ էլ եպիսկոպոս ձեռնադրեց Զաքարիա անունով մէկին, կարգեց նրանց վրայ հովիւ և գնաց քարոզելու Աղուանից և կապադովկիայի կողմերը։

Արդար թագաւորը քրիստոնէութիւնն ընդունելուց յետոյ թուղթ գրելով՝ Հոռվմայեցոց կայսեր, Ասորոց և Պարսկաստանի թագաւորներին, յորդորում է նրանց ընդունել քրիստոնէութիւնը և ազատութիւն շնորհել քրիստոնէա-

— Հ. Ա. Ռ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈBLIČNAYA BIBLIOTECAS
7 / 11. Կ 922 պատուական
ՀԱՄԱԳՈՐԾՎԱԾ ՎԵՐԱԿՐՈՒՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՈՒՄ
Արդարի մահից յետոյ քրիստոնէութիւնը առաջանում
է Հայաստանում։ յաջորդները՝ նրա որդի Անանէն և քեռորդի Սանատորուկը են քրիստոնէութիւնը։ Անանէն նահատակել տուաւ Ադէին, որովհետև չուզեց նրա պամար թագ կարել. իսկ Սանատորուկը նահատակեց իր աղջկի Սանդուխտ կոյսին, որ չուրացաւ քրիստոնէութիւնը, և հրամայեց Արդարի բոլոր ազգատոհմը ջնջել, որպէսզի ինքն ազատ կերպով թագաւորէ ամբողջ Հայաստանի վըրայ։ Այս լուրը Թադէոս առաքեալը լսելուն պէս կապագովկիայից վերագարձաւ դէպի Հայաստան։ Ճանապարհին նրան պատահեցին Հոռվմայեցի հինգ դեսպան, որոնք գնում էին Սանատորուկի մօտ։ Թադէոս առաքեալը նրանց քարոզեց, բոլորին մկրտեց և իրանց գլխաւորին, որի անունն էր Ոսկի, ձեռնադրեց քահանայ։ Ոսկու անունով նրա ընկերները կոչուեցին Ոսկեանք։ Երբ Սանատորուկը լսեց այս, կանչեց Թադէոսին Շաւարշան քաղաք և այնտեղ սպանել տուաւ, որի մարմինը ամփոփուած է Մակու քաղաքի մօտ եղած Ս. Թադէոս առաքեալի վանքում։

Ս. Թադէոսի նահատակութիւնից յետոյ ս. Բարդուղիմէոս առաքեալը, որ երկոտասան աշակերտներից էր, Մարիամ և կոյսի մահից յետոյ նրա պատկերը հետն առած եկաւ Հայաստան, սկսեց քարոզել և հաւատացեալների թիւը հետզհետէ աւելացնել։ Տիգրիս գետի ափին մի եկեղեցի շինեց ս. կոյսի անունով, որ յետոյ կոչուեցաւ «Հոգեաց վանք»։ բազմեցրեց այնտեղ Տիգրամօր պատկերը և շարունակեց եր քարոզութիւնը։ Մակայն սա ևս երկար ժամանակ չկարողացաւ քարոզել Հայաստանում։ Սանատորուկը սրան ևս նահատակել տուաւ։ Թէպէտ ս. Թադէոս և Բարթուղիմէոս առաքեալները չկարողացան ամբողջ հայ ազգը քրիստոնեայ դարձնել, բայց նրանց քարոզութիւնը և թափած արիւնը

Հայաստանի հողի վրայ անօդուտ չանցան։ Դրանք էին որ առաջին անգամ Հայաստանում քրիստոնէական եկեղեցու հիմը դրին, ուստի և մեր եկեղեցին դրանց անուանում է Հայոց եկեղեցու առաջին լուսաւորիչներ, որոնց յիշատակը տօնում է ամեն տարի։

7.

ԱՆԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԼՅ ԵՒ Ս. ԳՐԻԳՈՐ ԵՐԿՐՈՐԴ
ՀՈՒՍՍԻՈՐՉԻ ԽՈՐՎԻՐԱՊ ԳՅՈՒԻԼՅԸ,

Պարսից Արտաշիր թագաւորը յաղթուելով Հայոց Խոսրով թագաւորից, աշխատում էր գտնել մի հնար, որով կարողանար Խոսրովից իր վրէժն առնել և ահա առաջարկում է իր պալատականներին՝ «Ով որ կարողանայ սպանել Խոսրովին, խոստանում եմ նրան դարձնել իմ երկրորդը»։ Անակ Պահլաւունի նախարարը խոստացաւ կատարել Արտաշը ցանկութիւնը. նա վերցրեց իր ընտանիքը և գնաց Խոսրովի մօտ իբրև փախստական Արտաշը. Խոսրովը չիմանալով նրա գալու բուն նպատակը, սիրով ընդունեց և երբ մի օր գնում էր որսի, Անակին ևս իր հետ տարաւ որպէս մտերիմ բարեկամի. բայց Անակն այդ օրը խորամանկութեամբ առանձնացնելով Խոսրովին, յարձակուեց նրա վրայ և սպանեց. Անակը փախչելիս՝ երասի գետի կամքջի վրայ հայոց զօրքից ազատուելու համար ընկաւ գետը և խեղդուեց. Խոսրովը գեռ ևս չմեռած՝ հրամայեց Անակին իր ընտանիքով կոտորել։ Այդ կոտորածից միայն ազատուեցին նրա երկու որդին. մեծին՝ որի անունն էր Սուրէն, փախցրին Պարսկաստան, իսկ փոքրը՝ որ հազիւ երկու տարեկան էր, իր ծծմայր Սօֆիան փախցրեց կեսարիա, որ քրիստոնէութեան նշանաւոր կենարոն էր համարւում, ուր մը կը տեղ տուաւ և անուանեց Գրիգոր. Գրիգորը զարգացաւ


քրիստոնէական հաւատքի մէջ և ամուսնացաւ Դաւիթ անունով մի հաւատացեալի Մարիամ աղջկայ հետ։

Խոսրովի մահից յետոյ Արտաշիրը զօրքով մտաւ Հայաստան, երկիրը քարուքանդ արաւ և հրամայեց բոլորովին ջնջել Խոսրովի ցեղը. սակայն այդ կոտորածից ազատուեցին Խոս-

րովի երկուզաւակները՝ Տըրդատիւն կեսարիա և այնտեղից Հոռվմ, ուր Տըրդատը մեծանում էր կայսեր պալատում Լիկիանոս իշխանի ձեռքի տակ։

Գրիգորը երբ իմացաւ Խոսրովի և նրա ընտանիքի անիրաւ սպանութեան մասին,

որ կատարուել էր իր ձեռքով 280 թ., գնաց Հոռվմ և սկսեց Տըրդատին ծառայութիւն անել, որպէսզի դրանով կարողանայ իր հօր յանցանքը քաւել. նրա կին Մարիամը իր փոքր որդի Սօֆիակսի հետ մտաւ կուսանոց, իսկ Վրթանէու մաց կեսարիայում։



ՄԵ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԿԱՆՈՒԶ

Տրդատը իր արտասովոր քաջութեամբ կարողացաւ
գրաւել Դիոկղեատիանոս կայսեր սիրտը, 286 թ. ստանալով
Հայաստանի թագաւորութիւնը, հոռվմէական զօրքով եկաւ
Հայաստան՝ իր հօր գահը ժառանգելու, Երբ հասաւ Եկե-
ղեաց գաւառի Երիզա գիւղը, ուր գտնւում էր Հայոց Անա-
հիտի կուռքը, շնորհակալութեան զոհեր է անում, պսակ-
ներով զարդարում է կուռքը և Գրիգորին ևս հրամայում
նոյնը անել: Գրիգորը, որ մինչև այդ ժամանակ իր քը իս-
տոնէութիւնը ծածուկ էր պաշտում, բացարձակ մերժում
է Տրդատի առաջարկութիւնը, ասելով՝ թէ ինքը քրիստո-
նեայ է, չի կարող կուռքին Երկրպագութիւն տալ: Տրդա-
տը սաստիկ բարկանում է և խիստ յանդիմանութիւննե-
րով աշխատում է համոզել. բայց Երբ Գրիգորը հաստատ
է մնում իր խօսքին, հրամայում է տանջել նրան. իսկ Երբ
յետոյ էլ իմանում է, որ նա իր հօր սպանողի՝ Անակի որ-
դին է, հրամայում է կապել ձեռք ու ոտքը և տանել գցել
Արտաշատի խորվիրապը, ուր զցում էին միայն մահապարտ-
ներին: Սուրբ Գրիգորը մնաց խորվիրապի մէջ 15 տարի։
Ինչպէս աւանդութիւնն ասում է՝ մի կին ամեն օր մի
հաց և ջուր էր տալիս, և նա ապրում էր այնտեղ:

8.

Ա. ՀՈՒՓՍԻՄԵԱՆՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԼՐ, ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒ-
ՆԸ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ԽՈՐՎԻՐԱՊՈՒՑ ԴՈՒՐՄ ԵԼՆԵԼԸ

Այն ժամանակներում, Երբ ս. Գրիգորը Արտաշատի
մահապարտների խորվիրապի մէջ էր, Հոռվմայեցոց Դիոկ-
ղեատիանոս կայսեր հալածանքից ազատուելու համար Հոռվ-
մից եկան Հայաստան 37 կոյս: Դրանք ընդամենը 75 հոգի
էին, որոնց թւում կային նաև քահանաներ, ապրում էին
Հոռվմի մօա գտնուած Գայիանէ մայրապետի կուսանոցում

Նրա խնամատարութեան տակ: Այստեղ էր նաև Հոփիսիմէ
ս. կոյսը, որ հոչակուած էր իր բարեպաշտ կեանքով, զար-
դարուած Աստուածային իմաստութեամբ և հրաշալի գե-
ղեցկութիւնով: Ա. Գայիանէ կոյսը զգալով, որ վտանգը
մօա է, վերցրեց Հոփիսիմէին իր բոլոր ընկերուհիներով
և վախաւ Հայաստան Վասպուրականի Վարագ սարը, ուր
ս. Հոփիսիմէն թաղեց գետնի մէջ այն խաչը, որ կրում
էր իր վզին: Այստեղից 37 հոգով գնացին Վաղարշապատ,
Էջմանեցին քաղաքի ծայրում գտնուած այգիների մէջ մի
հնձանում: Այդտեղ նրանք ապրում էին իրանց ձեռքի աշ-
խատանքով: Դիոկղեատիանոսը յանձնարարական թղթեր զը-
րեց զանազան Երկրների թագաւորներին, մի թուղթ ևս
գրեց մեր Տրդատ թագաւորին, առաջարկելով հալածել
Քրիստոնեաներին:

Տրդատը Երբ Դիոկղեատիանոսից ստացաւ յիշեալ թուղ-
թը, մարդիկ ուղարկեց՝ որոնելու քրիստոնեաներին, և նը-
րանք գտան Վաղարշապատի հին հնձաններից մէկի մէջ.
յայտնեցին թագաւորին, պատմելով նաև ս. Հոփիսիմէի
աննման գեղեցկութեան մասին: Տրդատը հրամայեց որ
արքունիք քերեն նրան: Ուղարկած մարդիկ գնացին և ձեռ-
նունայն վերադարձան, որովհետեւ ս. Հոփիսիմէն չցանկա-
ցաւ գնալ: Այն ժամանակ թագաւորը բռնի կերպով տա-
րաւ. և տեսնելով ս. Հոփիսիմէի հրաշալի գեղեցկութիւնը,
կամեցաւ ամուսնանալ նրա հետ. բայց ս. կոյսը այս ան-
գամ ևս չհնազանդելով նրա կամքին, ազատուեց նրա ձեռ-
քից և վախաւ գնաց իր ընկերուհիների մօա: Թագաւորը
յոյսը զըրեց Գայիանէի վրայ և առաջարկեց, որ նա համոզէ
Հոփիսիմէին. սակայն Գայիանէն հակառակ թագաւորի
ցանկութեան համոզեց ս. կոյսին՝ հաստատ մնալ իր խոստ-
ման և անարատ պահել իր կուսութիւնը:

Երբ Տրդատը տեսաւ, որ իր ջանքերն իզուր անցան,
յուսահատուեց և հրամայեց դառն տանջանքներով նահա-

տակել բոլոր կոյսերին; Թագաւորի հրամանը կատարուեց-
դահիճները եկան երորդին կոտորեցին Փրկչի 301թ.: Նահա-
տակուած ո. կոյսերի մարմինները մնացին անթաղ ինն օր:

Տրդատը իր այս խստաշրտութեան համար ստանում է
իր պատիժը. նա խղճի խայթից ու մտատանջութիւնից
կորցնում է մարդկային բնաւորութիւնը, և երեսկայելով
թէ ինքը խոզ է դարձել, խելագարուածի պէս ճահիճների
և տղմերի մէջ է թափառում: Տրդատի քոյր Խոսրովիդուխար
երազումը տեսնում է Աստուծոյ հրեշտակին, որ յայտնում
է թէ Տրդատին կարող է բժշկել միմիայն Գրիգորը, որ
գտնում է Արտաշատի խորվիրապի մէջ, Երազը սկզբում
շատ անհաւատալի թուաց. որովհետև ոչ ոք չէր կարծում,
թէ Գրիգորը կարող էր 15 տարի կենդանի մնալ խորվի-
րապում. բայց երբ մի քանի անգամ կրկնուեց երազը, Օտայ
նախարարին ուղարկեցին Արտաշատ, և նա տեսնելով որ
ո. Գրիգորը կենդանի է, հանում է նրան խորվիրապից, և
բերում է Վաղարշապատ: Այդտեղ քաղաքից բաւական ճե-
ռու դիմաւորում է նրան խելագարուած: Տրդատը իր նա-
խարարներով և ժողովրդով, Դրանք ամենքն էլ ո. Գրի-
գորին հաւատալով՝ ջերմեռանդութեամբ երկրպագութիւն
տուին: Ա. Գրիգոր աղօթքով բժշկեց հիւանդ թագաւորին
և ուրիշներին և ապա սկսեց քարոզել Դրանից յետոյ հար-
ցուփորձ անելով ո. կոյսերի նահատակութեան մասին՝
ամենից առաջ ժողովեց նրանց մարմինները և իրանց պա-
տառտուն զգեստների մէջ փաթաթելով, ամփոփեց նրանց
հէնց իրանց նահատակուած տեղում: Ա. Գրիգորը 66 օր
շարունակ քարոզում էր, որից յետոյ կատարելապէս բը-
ժշկեց Տրդատին և բոլոր հիւանդներին: Անուհետև Տրդա-
տը իր կին Աշխէնթագունու և քոյր Խոսրովիդխարի հետ շինեց
նահատակուած կոյսերի գերեզմանների վրայ ո. Հոփիսի-
մէի, ո. Դայիանէի և այժմեան Շողակաթ կոչուող երեք
վանքերը, որոնք այժմ էլ կանգուն են ո. էջմիածնի մօտ:

9.

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱԿՈՐՉԻ ՏԵՍԻԼՔԸ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԻ:

Ա. Գրիգորը ոգևորուած քրիստոնէական հաւատով՝
երբ քարոզում էր ժողովրդին Վաղարշապատի արքունիքի
մօտ, տեսիլք է տեսնում: Տեսնում է որ միլուսեղէն մարդ
իջնում է երկնքից և Վաղարշապատ քաղաքի մէջտեղը խը-
փում է ոսկէ մուրճով. գետինը դղրդում է և խորքերից լըս-
ւում են ձայներ, ապա տեսնում է թագաւորական պալա-
տի վրայ լուսեղէն գմբէթ, իսկ գմբէթի ծայրին փայլում
է խաչը: Երբ ո. Գրիգորը մտածում էր տեսիլքի մասին,
երեսում է Աստուծոյ հրեշտակը և բացատրում նրա նշա-
նակութիւնը՝ թէ իջնող լուսեղէն մարդը՝ է մեր Տէր Յի-
սուս Քրիստոսը. Աստուծոյ միածին Որդին, իսկ պալատի
վրայ յայտնուած լուսեղէն գմբէթը և խաչը նշանակում
է, թէ Աստուծ դրանով ցոյց է տալիս, որ այնտեղ պէտք
է շինեն եկեղեցի: Ա. Գրիգորն շտապեց յայտնել այս բո-
լորը Տրդատին. իսկ այնտեղը, ուր իջել էր Միածին Որ-
դին, որմով պատեց՝ եկեղեցի շինելու համար:

Ա. Գրիգորը Տրդատին և նրա հետ հայ ժողովրդի մե-
ծագոյն մասին քրիստոնէական հաւատի մէջ հաստատելուց
յետոյ, շըջեց Հայաստանի ամենայն կողմերը, կործանեց
հեթանոսական կուտունները՝ նրանց տեղ հաստատելով
քրիստոնէական եկեղեցի:

Տրդատը նախարարներից և բոլոր ժողովրդի ներկա-
յացուցիչներից ժողով կազմեց և միաձայն հաւանութեամբ
ընտրեցին ո. Գրիգորին Հայոց հովուապետ: Տրդատը ո. Գրի-
գորին 302 թ. մեծ հանդէսով ուղարկեց կեսարիա քա-

դաք, ուրնաձեռնադրուեցս. Ղեռնդիոս հայրապետից Հայոց առաջին քահանայապետ ս. Թաղէոս առաքեալի յաջորդ:


Ս. Գրիգորը երբ մեծ պատուով վերադառնում էր Կեսարիայից, Ղեռնդիոս պատրիարքից ստացաւ ս. Յովհաննու կարապետի և Աթանագինեայ եպիսկոպոսի մասունքները: Ս. Գրիգորը բերաւ իր հետ նաև Անտօն և Կրոնիդէս կրօնաւորներին՝ Հայաստանում կրօնաւորական կարգը տարածելու, երբ հասաւ Տարոն գաւառի իննակնեան կոչուած տեղը, կուռքերի շատ արձաններ կործանեց և նըրանց տեղը կանգնեցրեց Քրիստոսի սուրբ Խաչը: Նա այնտեղ մի վանք ևս շինեց ս. Կարապետի անունով. դրաւ այնտեղ ս. Յովհաննու կարապետի մասունքը, թողեց հետը բերած կրօնաւորներին և նորակառոյց վանքի համար նըշանակեց վանահայր Զենոբ եպիսկոպոս Գլակին, որի անունով վանքը կոչուեց Գլակայ վանք: Ապա այնտեղից ս. Գրիգորն ուղիորուեց դէպի Արարատեան երկիրը. ճանապարհին բազմաթիւ կոասուններ կործանեց և քարոզելով հեթանոսներից շատերին քրիստոնեայ դարձրեց:

10.

ՍՈՒԻՐԲ ԳՐԻԳՈՐԸ ՄԿՐՏՈՒՄ Է ՏՐԴԱՏԻՆ ԵՒ ՆՐԱ ՀՆՏԱՆԻՔԻՆ.—Ս. ԷՉՄԻԱԾՆԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՀՈՐՈՒԹԻՒՆԸ

Սուրբ Գրիգորը իր ուղեկիցներով երբ հասաւ Բագրեւանդ գաւառի Բագուան քաղաքը, Տրդատը իր գերդաստանի և բոլոր պալատականների հետ նրան մեծ պատուով ընդունեց: Այդտեղ ևս մի ամսուան ընթացքում ուսուցանելով քրիստոնէութիւնը, ս. Գրիգորը պատուիրում է, որ մկրտութիւնն ընդունելուց առաջ բոլորն էլ հինգ օք ծոմ ու պաս պահեն:

Այս շաբաթական պասը մեր եկեղեցին անուանել է «Առաջաւորաց» պահք և որովհետև շաբաթ օրը կատարւում է ս. Սարգիս զօրավարի տօնը, ահա այդ է պատճառը որ ժողովուրդը սխալմամբ անուանում է «ս. Սարգսի պաս»: Հինգօրեայ պահեցողութիւնից յետոյ ս. Գրիգորը Եփրատ գետի մէջ մկրտում է Տրդատին, նրա ընտանիքի անդամներին և բոլոր ժողովրդին՝ ընդամենը 400,000 հոգի. մկրտութեան ժամանակ Տրդատին անուանում է Յովհաննէս:



Ապա գալով Վաղարշապատ քաղաք, ս. Գրիգորը ՅՈՒ. Էջմիածնի հոյակապ շինութեան հիմքն է դնում այնտեղ, ուր յայտնի տեսիլքն էր տեսել և՝ նախքան ձեռնադրուելու գնալը, պարապով պատել:

Մեր բոլոր վանքերի մէջ ամենից նշանաւորը թէ իւր անցեալով և թէ ներկայով հանդիսանում է ս. Էջ-

միածինը, որովհետեւ այնտեղ է գտնուում Հայոց Հայրապետի Աթոռը, այնտեղ են օծւում մեր կաթողիկոսները և եպիսկոպոսները, այնտեղ է օրհնուում և. Միւռոնը և նա է իսկապէս հայ քրիստոնեաների կրօնական միութեան և լուսաւորութեան կենդրոնը:

Ս. Գրիգորը եջմիածնի շինութիւնից յետոյ Տրդատի հետ միասին շրջուում է Հայաստանի բոլոր քաղաքներն ու գիւղերը, քարոզում, մկրտում է հաւատացեալներին և նրանց վրայ նշանակուում հովիւներ, ձեռնադրում եպիսկոպոսներ և քահանաներ, քանդում է շատ կուտուններ և դրանց տեղ հիմնում քրիստոնէական եկեղեցիներ. բաց է անում դպրոցներ, ժողովում է մանուկներ և սովորեցնում յունարէն և ասորերէն. Այդ ժամանակ գեռ հայերէն գիր չկար: Եւ այսպէս Հայաստանը լուսաւորելով քրիստոնէական հաւատի լուսով, կոչուեց երկրորդ լուսաւորիչ Հայաստանի:

11.

ՀՈՒՍԱՀՈՐՁԻ ԱՌԱՆՁՆԱՆԱԼԸ ԵՒ ՄԱՀԸ

Ս. Լուսաւորիչը՝ Տրդատի օգնութեամբ լուսաւորելով Հայոց աշխարհը քրիստոնէական հաւատի լուսով և կարգաւորելով մեր եկեղեցական Աստուածալաշտութեան կարգերը, սահմանելով Տէրունական և Աստուածածնայ տօները, ինչպէս նաև և. Հոփիսիմեանց և Գայիշանեանց յիշատակի օրերը,—իր ծերութեան օրերում երբեմն երբեմն առանձնանում էր անապատները և այնտեղ միայնակեցութեան մէջ աւելի կազդուրելով իրան աղօթքով, դարձեալ այցելում էր իր հօտին հաստատելու քրիստոնէական հաւատի մէջ: Մի անգամ գնաց Դարանաղեաց գաւառի Սեպուհ լեառը, ուր մի քարայրի մէջ ճգնում էր

ս. Հոփիսիմէի ընկերուհիներից Մանիա անունով մի կոյս Սուրբ կոյսը զգալով իր վախճանը, խնդրեց մնալ այնտեղ: Երեք օրից յետոյ երբ կոյսը վախճանուեց, ս. Գրիգորը թաղեց նրան և ինքն սկսեց ճգնուել նրա քարայրի մէջ: Հաւատացեալ ժողովուրդը, նրանց հետ և իշխաններից ու մանք լսելով, որ ս. Լուսաւորիչը երկու որդի ունի, կամեցան նրանցից մէկին ընտրել իր հօր փոխանորդ: Դեսպաններ ուղարկեցին Կեսարիա, որոնք գնացին տեսան, որ մեծ որդին՝ Վրթանէաը ամուսնացած է, իսկ փոքրը՝ Արիստակէաը կրօնաւոր է, որին և բերին Վաղարշապատ և խնդրեցին Լուսաւորչին, որ նրան ձեռնադրէ եպիսկոպոս: Ս. Գրիգորը կատարելով ժողովուրդի ցանկութիւնը, 318 թ. Արիստակէաին ձեռնադրեց եպիսկոպոս և կարգեց իրան օգնական և փոխանորդ:

Ս. Գրիգորը 30 տարի հայրապետական իշխանութիւնը վարելուց յետոյ վախճանուեց իր ճգնարանում. հովիւները գտան նրա մարմինը և թաղեցին այնտեղ: Ապա յիները տարուց յետոյ Գառնիկ անունով մի ճգնաւոր Աստուածային յայտնութիւնով գտնելով ս. Լուսաւորչի գերեզմանը, ս. մարմինը տարաւ ամփոփեց Թորդանում, ուր թաղուած էին նրա որդիքն ու թոռները:

Ժայոց երախտապարտ ս. եկեղեցին սահմանել է տարին երեք անգամ տօնել ս. Լուսաւորչի յիշատակը, այն է՝ նրա չարչարանքի և խորվիրապ մտնելու յիշատակը Մեծ պասի մէջ հինգերորդ շաբաթ օրը. Խորվիրապից դուրս գալու յիշատակը Հոգեգալստից երկու շաբաթ յետոյ՝ Հոփիսիմեանց տօների շաբաթ օրը. Իսկ մարմինը գտնելու յիշատակը երկրորդ տօնից երկու շաբաթ յետոյ՝ յունիս ամսում:

12.

ՍՈՒԻՐԲ ԽԾՉԻ ԳԻՒՏԸ, ԳԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ,

Յիսուս Քրիստոսի խաչելութիւնից յետոյ, Նրա խաչը երկու աւաղակների խաչերի հետ մնացին ընկած Գողդոթա սարի վրայ. հաւատացեալները գնում էին և Յիսուսի խաչին երկրպագութիւն տալիս: Հրէաները և հեթանոսները նախանձելով այդ բանին, Գողդոթա սարի վրայ մի հոր փորեցին, խաչերը գցեցին մէջը և անհետացրին: Վերջին ժամանակները հեթանոս հռովմայեցիք մի կուատուն շինեցին Յիսուսի գերեզմանի վրայ և այդպիսով քրիստոնեաներին զրկեցին Յիսուսի խաչին և Նրա գերեզմանին երկրպագելու մխիթարութիւնից:

Բայց երբ կոստանդիանոս կայսրը քրիստոնէութիւն ընդունեց, նրա բարեպաշտ մայր Հեղինէ թագուհին գնաց Երուսաղէմ, ուր տեսնելով սուրբ Վայրերը տակնուվրայ եղած, որոշեց ամենից առաջ գտնել Յիսուսի ո. խաչը: Այս մասին շատերին հարցուփորձ անելուց յետոյ երբ մի հրէայ ծերունուց տեղեկացաւ, թէ Յիսուսի խաչը թաղուած է Գողդոթայի վրայ, քանդել տուաւ ցոյց տուած տեղը, ուր գտնուեցին Յիսուսի և երկու աւաղակների խաչերը: Ստուգելու համար, թէ ո՞րն է նրանցից Յիսուսի խսկական խաչը, մօտեցրին նրանց մի մերձիմահ հիւանդ. խաչերից մէկը հիւանդին կենդանութիւն շնորհեց: Ահա այդ կերպով ստուգուեց, որ այդ է Յիսուսի խաչը, Հեղինէ թագուհին խաչի համար շինել տուաւ մի արծաթեայ պահարան թանկագին ակներով զարդարած և Գողդոթա սարի վրայ կառուցանելով մի եկեղեցի՝ սուրբ Յարութեան անունով, դրաւ այնտեղ: Նոյնպէս շինել տուաւ ուրիշ երկու եկեղեցի ևս՝ մինը Բեթղեհէմ Յիսուսի ծննդեան տեղը, միւսը Զիթենեաց սարի վրայ՝ Յիսուսի համ-

բարձման յիշատակին և ապա վերադարձաւ իր որդումօտ:

Այսպէս Քրիստոսի խաչը գտնուում էր Երուսաղէմ սուրբ Յարութեան տաճարում, որը կառուցած էր Գողդոթա լերան վերայ: Պարսից Խոսրով թագաւորը 614 թ. յարձակուեց Երուսաղէմի վերայ, կողոպտեց քաղաքը և շատ գերիների հետ տարաւ Պարսկաստան և Քրիստոսի խաչը: Ապա ժամանակ անցնելուց յետոյ Յունաց Հերակլ կայսը ոյժ ստանալով յարձակուեց Պարսից վերայ և վրէժինդրութեան հոգւով լցուած, այն անարգանքի փոխարէն, որ պարսիկները հասցրել էին քրիստոնէական եկեղեցուն, նորանոր յաղթութիւններով յետ վերցրեց այն երկիրները, որ նրանք գրաւել էին: Եւ երբ յաղթութիւնից յետոյ հաշտութեան պայմաններն էին կապում, այդ ժամանակ պարսիկները խոստացան վերադարձել և Քրիստոսի խաչը: Հերակլ կայսը 628 թ. մեծ յաղթանակով մտաւ Պօլիս և յաջորդ տարին 629 թ. մեծ հանդիսով սեպտեմբեր ամսում ո. խաչը անձամբ տարաւ Երուսաղէմ և բարձրացնելով իւր ուսերի վերայ, հաստատեց Գողդոթա լերան վերայ իւր առաջուան տեղը: Աոյն անցքի յիշատակին Երուսաղէմի պատրիարքը խուռն բազմութեան ներկայութեամբ խաչը բարձրացրեց ի տես ժողովրդեան և տօն կատարեց, որը անուանեց «խաչվերացի տօն» և մինչև ցայսօր կատարում է և Հայոց եկեղեցին սեպտեմբեր ամսի 14-ին մօտիկ պատահող կիրակի օրը:

13

ՍՈՒԻՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՀՈՐՁԻ ՅԱԶՈՐԴԻՆԵՐ ԱՐԻՄԱՆ ԿԵՍ, ՎՐԹԱՆԵՍ, ՅՈՒՍԻԿ ԵՒ ԴԱՆԻԿ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆԵՐ:

Սուրբ Գրիգոր Լուսաւորչին յաջորդեց 332 թ. իր փոքր որդի Արիստակէսը, որ նրա նման ամենայն որբու-

թեամբ կատարում էր Ազգի և Եկեղեցու պայծառութեան գործերը, շինում էր վանքեր և եկեղեցիներ։ Ս. Արիստակէսը միշտ անուղղայ և վատաքարոյ նախարարներին յանդիմանելով աշխատում էր ուղղել նրանց անկարգ կեանքը, Այսպիսի մի հանգամանքի պատճառով Զորբորդ Հայոց Արքեղայոս իշխանը 339 թ. սպանեց նրան։ Աշկերտները նրա մարմինը տարան և թաղեցին Ծոփաց գաւառի Թիլն աւանում։ Ս. Արիստակէսը իր հօրից յետոյ եօթը տարի կառավարեց հայրապետական գահը։

Ս. Արիստակէսին յաջորդեց իր մեծ եղբայր ս. Վըրթանէսը 339 թ.։ Սա ևս իր հօր և եղբօր շաւղով գնալով, մեծ եռանդով հոգս էր տանում եկեղեցու պայծառութեան համար։ Ս. Վըրթանէսը եկեղեցում բարեկարգութեան հրահանգ խնդրեց Երուսաղէմի Մակարիոս պատրիարքից և ստացաւ ութ յօդուածով մի կանոնաթուղթ։ իսկ Յակոբ Մծբնայ հայրապետից, որ Լուսաւորչի հօրաքրոջ որդին էր՝ հաւատոյ վերաբերեալ մի գրուածք, որ կոչւում է «Զգօն», և այդ բոլորի վրայ ինքն ևս աւելացնելով մի քանի յաւելուածներ ու յարմարացնելով մեր եկեղեցու պաշտամանց ոգուն, ուղարկեց իր ստորագրեալ բոլոր եպիսկոպոսներին որ գործադրեն։

Այս ժամանակներում Տրդատ թագաւորը զգուելով նախարարների մոլի կեանքից, առանձնացաւ Սեպուհ սարը և սկսեց այստեղ ճգնուել, ուր ս. Լուսաւորիչն էր ճգնուում։ Երբ Տրդատը նախարարների թալիանձանքը չընդունեց և չըվերադառն իր գահը կառավարելու, 341 թ. մահաթոյնով սպանեցին ու մարմինը թաղեցին Թորդանում 85 տարեկան հասակում, 56 տարի թագաւորելուց յետոյ։

Ս. Վըրթանէս, որ ամուսնացած էր և ունէր երկու որդի, Տրդատի հաւանութեամբ և Աղուանից ժողովրդի խնդրանօք իր մեծ որդի Գրիգորիսին ճեռնադրեց արքեպիս-

կոպոս և ուղարկեց Աղուանից, որից սկիզբն առաւ Աղուանից կաթողիկոսութիւնը։ Գրիգորիսը Աղուանից երկրումը իր առաքինի կեանքով բարի օրինակ հանդիսանալով իր հօտին, անդադար քարոզում ու յանդիմանում էր վատաքարոյ իշխաններին իրենց վատ կեանքի համար։ Վերջիններս չ'կարողանալով տանել նրա արդար յանդիմանութիւնները՝ նահատակեցին, որի մարմինը իր սարկաւագները տարան թաղեցին Սիւնեաց գաւառի Ամարաս աւանի մէջ, որ դարձաւ Աղուանից կաթողիկոսութեան Աթոռ։

Ս. Վըրթանէս հայրապետը 15 տարի վարելով հայրապետական գահը, 355 թ. փոխուեց աշխարհիցս և թաղուեց Թորդան գիւղում։

Ս. Վըրթանէսին յաջորդեց իր փոքր որդի Յուսիկը, Սա ամուսնացած լինելով Տիրան թագաւորի աղջկայ հետ, ունէր երկու որդի՝ Պապ և Աթանագինէ։ Սա իր ամուսնու համաձայնութեամբ հրաժարուելով աշխարհային կեանքից, աղօթքով ու բարեգործութիւններով էր անցկացնում իր օրերը։ 356 թ. երբ ընտրուեց կաթողիկոս և զբաղուած էր՝ իր նախորդների օրինակին հետևելով, եկեղեցու զանազան բարեկարգութիւններով, Յունաց ուրացող Յուլիանոս կայսրը իր պատկերը տալով Հայոց Տիրան թագաւորին, ցանկացաւ որ գրուի եկեղեցում։ Երբ Տիրանը կամենում էր կատարել կայսեր այդ ցանկութիւնը, ս. Յուսիկը դիմադրեց Խլեց թագաւորի ճեռքից պատկերը, զցեց գետին և ոտով վշրեց։ Տիրանը իսկոյն հրամայեց այնքան ծեծել, մինչև որ երանելի հայրապետը աւանդեց հոգին՝ վեց տարի հայրապետական գահը կառավարելուց յետոյ։ Նա թաղուեց Թորդանում իր հօր գերեզմանի մօտ։

Ս. Յուսիկին յաջորդեց ս. Դանիէլ ծերունին 362 թ. որովեան Յուսիկի որդիքը հայրապետական աստիճանին արժանաւոր անձինք չէին։ Դանիէլը ազգաւ ասորի էր

և աշակերտ ս. Գրիգոր Լուսաւորչի և նրանից էր ընդունել քահանայական կոչումն, Սա շատ կարճ ժամանակ՝ եղաւ կաթողիկոս, որովհետև երբ առաջին անգամ իր ընտրությունը յետոյ ներկայացաւ Տիրան թագաւորին և յանդիմանեց նրան Յուլիանոսի պատկերը եկեղեցում դնելու և Յուսիկին սպանելու համար, թագաւորը սրան ևս խեղդամահ արաւ:

Սրա մահից յետոյ կաթողիկոսութեան խնդիրը նորից հապարակ ելաւ և ամենքի ցանկութիւնն էր ընտրել լուսաւորչի ժառանգներից, բայց որովհետև միակ ժառանգ համարւում էր փոքրիկ Ներսէսը, Աթանազինէլ որդին, որ դեռ ուսանում էր Կեսարիայում, ընտրուեց Փառներսէնը, Տարօն գաւառի Աշտիշատ գիւղից, մի սըլքակրօն անձնաւորութիւն, որը երեք տարի վարելով հայրապետական գահը, վախճանուեց:

14.

ՄԵԾՆՆԵՐՍԷՍԵՍ

Ներսէս առաջինը իր ուսումն ստացել էր Կոստանդնուպոլսում և Կեսարիայում և Հայոց արքունիքում ծառայում էր իբրև սենեկապետ և թագաւորի գրակիր՝ Փառներսէնի մահից յետոյ Հայոց Արշակ թագաւորի, նախարարների և բոլոր ժողովրդի միաձայն համաձայնութեամբ Ներսէսն ընտրում է կաթողիկոս՝ իբրև Լուսաւորչի թոռան թոռը և արժանաւոր ժառանգ։ Ընտրութիւնից յետոյ 364 թ. մեծ հանդէսով դնաց Կեսարիա, ուր և օծուեց կաթողիկոս ամենայն Հայոց։

Ներսէսը Հայրապետական գահը ժառանգելուց յետոյ՝ ամենից առաջ իր հայրական ուշադրութիւնը դարձրեց

ժողովրդի ներքին կեանքի և նրա բարեկեցութեան վրայ։ Նա մի քանի անգամ եկեղեցական ժողով գումարեց Տարոն գաւառի Աշտիշատում և հետեւեալ կարեոր որոշումներն արաւ։ Ամեն գաւառի և նշանաւոր քաղաքների մէջ շինել տուաւ աղքատանոցներ, հիւանդանոցներ, ճանապարհների վրայ իջևաններ և այլ սոյնանման աստուածահանութիւններ, որոնց թւում կային շատ դպրոցներ, եկեղեցիներ և վանքեր և այս բոլոր հաստատութիւնները ապահովացրեց անշարժ կալուածներով, որ իբրև նուէր ստանում էր ժողովրդից։ Ներսէսին այս բոլոր գործերին օգնական և գործակից էր նրա հաւատարիմ սարկաւագը, որի անունն էր Խաղ, որ յետոյ դարձաւ եղիսկոպոս և տեղապես։

Ներսէսը բնաւորութեամբ լինելով շատ քաղցր, ոիբրում էր ամենքին միատեսակ, այսօր նա ճաշում էր թագաւորի պալատում, վաղը գտնուում էր աղքատի խըրձիթում, իսկ մի ուրիշ անզամ երեւմ էր հիւանդի անկողնի մօտ՝ միխթարելու նրան։ Սրա համար և ստացել էր «Հասարակաց հայր» անունը։ Աշխատեց ժողովրդի միջից արմատախիլ անել միքանի անկարգ հեթանոսական սովորութիւններ, այն է՝ մերձաւոր ազգականների միմեանց հետ պսակուելը, որ յաճախ պատահում էր նախարարների և ազնուականների մէջ, և մեռելների վրայ այլանդակ ձերով և անյոյս սուբ անելն ու շոայլ կերպով սկեր հանգնելը, որ ոչ մի միտք չունի։ Ներսէսը իր խաղաղաւու բնաւորութիւնով շատ անգամ թագաւորին նախարարների հետ հաշտեցնում էր, երբ որ նրանց մէջ մի որևէ էվէճ էր պատահում։ Նա մինչև անգամ իր իմաստուն և համոզիչ խօսքերով ազդում էր օտար թագաւորների և զօրավարների վրայ, օրինակ՝ երբ Յունաց Վաղենտիանոս կայսեր հրամանով Թէոդոս, զօրավարը գալիս էր մեծ զօրքով՝ աւերելու Հայաստանը,

Ներսէսը գնաց նրա առաջ, հաշտեցրեց Հայոց թագաւորի հետ և ազատեց Հայաստանը այդ վտանգաւոր պատերազմից. Սակայն Վաղենտիանոսի յաջորդ Վաղէսի ժամանակ գնալով կ. Պօլիս՝ դարձեալ կամեցաւ նոյն միջնորդի դերը կատարել. բայց Վաղէսն առաջարկեց նրան ընդունել Արիոսեան աղանդը և երբ Ներսէսը չընդունեց, աքսորեցին նրան մի անմարդաբնակ կղզի. Ութ ամիս մնալով այնտեղ և իր անձը ենթարկելով ամեն տեսակ նեղութիւնների, ազատուեց միայն Վաղէսի յաջորդ Մեծն թէոդոսի ժամանակ և գալով կոստանդնուպօլիս՝ մասնակցեց երկրորդ տիեզերական ժողովին, ապա այնտեղից պատուվ վերադարձաւ Հայաստան. Այս ժամանակ Արշակ թագաւորը անձնատուր լինելով Պարսից Շահպուհ թագաւորին՝ մեռնում է Անյուշ բերդում. Ներսէսը թէոդոսի օգնութեամբ Արշակի որդի Պալիս թագաւորեցնում է Հայոց վրայ:


Ներսէսի այս մեծամեծ և օգտաւէտ գործերը տեսնելով հայ ժողովուրդը, թագաւորի և նախարարների համաձայնութեամբ ժողով արաւ և վճռեց, որ այսուհետեւ մեր կաթողիկոսները անուանուեն «Պատրիարք Կաթողիկոս» և նրանք ըստ հին սովորութեան այլևս չօծուեն կեսարիայում, այլ ո. Էջմիածնում հայ եպիսկոպոսների ձեռքով.

Ներսէսը, որ շատ բարոյական և խստակրօն մարդ էր, նկատելով Պալ թագաւորի վատ և շուայլ կեանքը և նախարարների հետ անհաշտ լինելը, շարունակ խրատում էր թագաւորին, որ հեռանայ իր շուայլ կեանքից և սիրով վարուի նախարարների հետ, բայց նա փոխանակ ուղղելու իր մոլի կեանքը, թունաւորում է նրան, որպէսզի ազատուի Հայրապետի իրաւացի և ողջամիտ յանդիմանութիւններից. Այսպիսի վախճան ունեցաւ այն մեծագործ մարդը, որ երկար տարիներ վարելով Հայրապետական գահը, իբրև վառ ճրագ լուսաւորում էր Հայաստանը, և

որին անաչառ պատմութիւնը վարձատրեց՝ «Մեծ» անունը չնորհելով. իսկ եկեղեցին նրա յիշատակը կատարում է Յունիս ամսում:

Մեծն Ներսէսի մահից յետոյ յաջորդեցին Շահակ Մանազկերտցին, Զաւէն, Ասպուրակէս: Վերջինիս կաթողիկոսութեան ժամանակ Հայոց թագաւորութիւնը արդէն բաժանուած էր երկու մասի, մի մասի վրայ իշխում էր Պալ թագաւորի որդին Արշակը, երկրորդ մասի վրայ երկրորդ որդին Վաղարշակը, մինը յունական, միւսը Պարսկական բանում:

Ասպուրակէսին յաջորդեց Սահակ Պարթևը՝ Մեծն Ներսէսի որդին:



իր ուսումն ստանալով կետարիայում և Կ. Պօլսում, լաւ գիտէր յունական լեզուն, հմուտ աստուածաբան էր, և որ աւելին է, օրինակելի վարք ու բարք ունէր։ Նախարարներից ոմանք թագաւորի հետ անմիաբան լինելով՝ նրա

ԵՐԶԱՆ Գ


15

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՔԻ. — Ս. ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՅ. — ՀԱՅ ԿԱԿԱՆ ՏԱՐԵՐԻ ԳԻՒՑԼ ԵՒ Ս. ԳՐԻՒ ԹԱՐԳՄԱՆՈՒ ԹԻՒՆԸ

Չորրորդ դարի վերջին տարիներում և հինգերորդ դարի սկզբին Աստուածային նախախնամութիւնը պարզեց հայ եկեղեցուն երկու ընտիր Հայրեր, որոնք իրանց անխոնջ աշխատութեամբ իրեկ երկու պայծառ ջաներ լուսաւորեցին հայ ժողովրդին և եկեղեցուն։ Սրանք էին, որ տուին մեզ մեր լեզուի այբուբենը և Աստուածաշունչը թարգմանած հայ լեզուով։


Թէկ ս. Գրիգոր Լուսաւորչի քարողութիւնով քրիստոնէութիւնը հաստատուեց Հայաստանում և հետզհետէ նրա արժանաւոր յաջորդների աշխատանքով յառաջադիմում էր, բայց անցել էր այն օրից զրեթէ հարիւր տարի, որ Հայերի սեպհական գիր չունենալու պատճառով եկեղեցիներում բոլոր ժամակարգութիւնը և ծիսակատարութիւնները լինում էին յոյն և ասորի լեզուներով, որից ժողովուրդը ոչ մի խօսք չէր հասկանում։

Այսպիսի մի ժամանակում 390 թ. ազգի և Խոսրով Գ. թագաւորի հաւանութեամբ ընտրւում և հաստատւում է կաթողիկոս Մեծն Ներսէսի որդիսուրբ Սահակը։ Ս. Սահակը



վըայ չարախսութիւն արին Պարսից Շապուհ թագաւորի մօտ, որ իրեկ թէ առանց նրա հաւանութեան է կարգուել յունասէր Սահակը կաթողիկոս։ Այս պատճառով Շապուհը բարկացաւ, ս. Սահակին աթոռից հրաժարեցրեց և կան-

չեց իր մօտ Խոսրովին էլ փակել տուաւ Անյուշ բանտում: Շապուհի որդի Արտաշիրը յաջորդելով իր հօրը, նորից պատուով վերադարձրեց ս. Սահակին իր Աթոռը: Այդ ժամանակից սկսեց ս. Սահակը իր ազգօդուած գոր-



ծունէութիւնը. իբրև կաթողիկոս՝ բարեկարգեց եկեղեցիները, շինեց նորանոր վաճքեր և եկեղեցիներ, նորոգել տուաւ Հոփիսիմէի տաճարը, որ Շապուհը քանդել էր տուել: Այս ժամանակներում որքան Հայաստանի քաղաքական

վիճակը աննախանձելի էր, նոյնքան մխիթարական էր եկեղեցական վիճակը, որովհետեւ հայ հայրապետները ընտիր հոգեստրականների հետ մտածում էին ժողովրդի բարոյական զարգացման համար: Այս տեսակ հայրապետներից առաջինը եղաւ Ս. Սահակը իրեն օգնական ունենալով Մեսրոպ Մաշտոցին:

Այսպէս Մեսրոպ Մաշտոց, բոլորովին համախոհ լինելով կաթողիկոսին, մեծ օգնութիւն ցոյց տուաւ նրան: Ս. Մեսրոպ Տարոն գաւառի Հացեկաց գիւղիցն էր, Վարդան անունով մի բարեպաշտ մարդու որդի. սա համարում է Մեծն Ներսէսի աշակերտ և նրա գրադիրը. գետէր յոյն, ասորի և պարսից լեզուները և քաջ տեղեակ լինելով այդ լեզուներին, Ներսէսի մահից յետոյ նշանակուեց թագաւորի պալատում քարտուղար, Սակայն ս. Մեսրոպին աշխարհային այս մեծ պաշտօնները չկարողացան գրաւել: Նա եօթը տարի միայն արքունիքում իր պաշտօնը վարելով, գնաց Գողթան գաւառի մի վանք մտաւ, իսկ երբ իմացաւ ս. Սահակի կաթողիկոսանալը, ինքը ես ձեռնադրուեց վարդապետ: Երբեմն երբեմն հեռանալով իր վանքից քարոզում էր ժողովրդին, կարդում էր ս. Գիրքը և ապա թարգմանում, որից թէ ինքն էր մեծ նեղութիւն կլում և թէ ժողովուրդն էր շատ քիչ օգտառում. իսկ միւս հոգեստր հայրերը, որոնք չգիտէին յոյն և ասորի լեզուները, կարդացածից ոչ իրանք էին բան հասկանում և ոչ ժողովուրդը: Ահա այդպիսի հանգամանքներից ծնուեց ս. Մեսրոպի մէջ այն միտքը թէ պէտք է անպատճառ գտնել Հայոց լեզուի նշանագրերը և իր միտքը իրականացնելու համար գնաց ս. Սահակի մօտ և յայտնեց նրան: Ս. Սահակը, որ ինքը ևս զբաղուած էր այդ մտքով, շատ ուրախացաւ և իսկոյն յայտնեց այդ մտադրութիւնը Վուամշապուհ թագաւորին և եպիսկոպոսների ժողովին, որոնք ի սրտէ համակրութիւն ցոյց տալով, այս առիթով

ունեցան խորհրդակցութիւններ, թագաւորը, որ մասնակցում էր ժողովին, յայտնեց, թէ ինքը լսել է, որ Հայոց հին նշանագրերը գտնւում են Միջագետքում Դանիէլ առունով մի ասորի եպիսկոպոսի մօտ. ուստի անմիջապէս կարգադրեցին ուղարկել այնտեղ Հարէլ ասորի քահանան և մի իմաստուն մարդ Վահրիճ անունով, որոնք Միջագետքից բերին յիշեալ նշանագրերը: Ա. Սահակ և ս. Մեսրոպ փորձեր արին և գտան, որ այդ նշանագրերն անբաւարար են մեր լեզուի համար, որովհետև մեր լեզուի բոլոր հնչիւնները լրիւ չէին կարողանում արտայայտել: Ա. Մեսրոպ անձամբ գնաց թէ Միջագետք և թէ այլ նշանոր մարդկանց մօտ. բայց բոլորն էլ անօգուտ անցան, Ս. Մեսրոպն այնուհետև իր յոյսը կտրելով մարդկանցից, մի ջերմեռանդ աղօթքով դիմում է Աստծուն և խընդրում, որ օգնէ այս զործում, և երբ խորին մտածմունքի մէջ խորասուզուած աղօթում էր, երկաց նրա աչքին մի աներևոյթ մարդու ձեռք, որ գրեց քարի վրայ իր ցանկացած տառերը, Ս. Մեսրոպը՝ տպաւորելով իր մտքի մէջ, ձեակերպեց յիշեալ ատոերը և իսկոյն վերադարձաւ վաղարշապատ, որին մեծ պատուով ընդունեցին ուսումնասէր Վուամշապուհ թագաւորը և ս. Սահակ կաթողիկոսը ժողովրդի հետ միասին 406 թուին: Սրանից յետոյ, երբ փորձը ցոյց տւաւ, թէ արդէն լրիւ են բոլոր հնչիւնները և յարմար մեր լեզուի համար, ամենից առաջ թարգմանեցին չին: Կտակարանից Սողոմոնի առակաց գրքերը, իսկ յարմար մեր լեզուի համար, ամենից առաջ թարգմանեցին չին: Կտակարանից Սողոմոնի առակաց գրքերը, իսկ բացներ բաց անելով ժողովեցին աշակերտներ և հայ լեզուի գրագիտութիւնն սկսեցին տարածել:

Փոքը ժամանակից յետոյ ս. Մեսրոպ Վրացոց և Աղուանից մեծամեծների խնդրանաց համաձայն գնաց նրանց երկիրը, նրանց համար ևս գրել հնարեց և այնտեղից վերադառնալով ս. Սահակի մօտ, տեսաւ որ շարունակւում

է ս. Գրքի թարգմանութիւնը կլիսաւորապէս ասորերէնից, որովհետև յունարէն բնագիրը պարսիկները ոչնչացրել էին: հայերին կոապաշտ դարձնելու չար նպատակով:

Այնուհետև ս. Սահակ և ս. Մեսրոպ, ինչպէս երկու լուսաւոր ջահեր, աստուածգիտութեան լոյսը և հայ լեզուի դպրութեան գործը անձնուէր ջանքով տարածեցին Հայաստան աշխարհում: Ա. Սահակ ճոխացրեց նաև մեր եկեղեցական ժամերգութիւնը նորանոր երգերով ու աղօթքներով: իսկ ս. Մեսրոպ կարգաւորեց մեր Ծիսարանը, որ նրա անունով կոչուեց Մաշտոց: Ապա ժողովելով աշակերտներ՝ սովորեցնում էին և երբոր վերջացնում էին, նրանցից ընդունակներին և յառաջադէմներին ուղարկում էին Աթէնք, կոստանդնուպօլիս և Աղէքսանդրիա քաղաքները, ուր կային հռչակաւոր դպրոցներ և ծաղկած էր ուսումն ու գիտութիւնը: Սրանք ունեցան շատ աշակերտներ, որոնցից նշանաւորներն են՝ Յովսէփ կաթողիկոս, Ղևոնդ երէց, Դաւիթ անյաղթ փիլիսոփայ, Մովսէս Խոբենացի, Եղնիկ կողբացի, Կորիւն, Ղազար Փարպեցի: Մրանք իրանց ուսումը կատարելագործելուց յետոյ վերադառնալով Հայաստան՝ թէկ տեսան վախճանուած ս. Սահակ և ս. Մեսրոպ ուսուցիչներին, այնուամենայնիւ չյուսահատուեցին, այլ կատարելով նրանց վափագը՝ վերջացրին ս. Գրքի թարգմանութիւնը: Այսպէս ս. Սահակ կաթողիկոսը ամեն ջանք գործ գրեց եկեղեցու պայծառութեան և ազգի բարօրութեան համար, և ապա խորին ծերութեան մէջ վախճանուեց Բագրեանդ գաւառի Բլուր գիւղում 438 թ., 51 տարի վարելով Հայրապետական աթոռը: Նրա մարմինը մեծ հանդէսով թաղում են Տարոնի Աշտիշատ գիւղում:

Ս. Սահակի տեղակալ համարւում է ս. Մեսրոպը*),

*.) Ս. Սահակի կեղանութեան ժամանակ պարսից Վասարգաւորը թէկ միմեանց յետեւից կարգեց երեք անարժան կաթու

որ միայն վեց ամիս վարելով կաթողիկոսական իշխանութիւնը, վախճանուեց առանց կաթողիկոսական օծումն ստանալու։ Նրա մարմինը վահան Ամատունի հազարապետը տարա թաղեց իր սեպհական Օշական գիւղում։

Ս. Սահակ և ս. Մեսրոպ համարւում են թարգմանիչներ, որոնց տօնը մեր եկեղեցին կատարում է յունիտ ամսում։ իսկ նրանց աշակերտների տօնը որոնցից շատերը արժանացել են կաթողիկոսական, եպիսկոպոսական աստիճանի, կոչւում են թարգմանիչ վարդապետներ՝ կատարւում է հոկաեմբեր ամսում։

16

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Քրիստոնեայ հաւատացեալները սկզբներում իրանց հաւատի դաւանութիւնը յայտնում էին հետևեալ երեք խօսքով՝ Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Երբ հաւատացեալներից յայտնուեցան այնպիսի անձինք, որոնք աստուածային գաղտնիքները քննադատեցին և շեղուելով ուղիղ դաւանութիւնից, ընկան մոլորութեան մէջ, այդ ժամանակ քրիստոնեայ եկեղեցու ողջամիտ վարդապետները՝ կամենալով մոլորութիւնների առաջն առնել, կազմեցին տիեզերական ժողովներ։ Մեր եկեղեցին ընդունում է միայն երեք տիեզերական ժողով։

Առաջին տիեզերական ժողովը գումարուեց Նիկիա քաղաքում Քրիստոսի 325 թ. 318 հայրապետների մասնակցութեամբ։ Այդ ժողովների մէջ դատապարտեցին Աղէքսանդրացի յոյն երեց Սրբոսի մոլորութիւնը, որ ուրանալով Քրիստոսի աստուածութիւնը, չէր դաւանում Քրիստոսին Աստուած և Աստուծոյ Որդի, այլ լոկ արագիկոսներ՝ Սուրմակ երեց, Բբքիշոյ և Շմուէլ ասորիներին, բայց դրանք իրանց անարժան վարգով շուտով անցան գնացին, այդ պատճառով ս. Սահակի իսկական տեղակալ համարւում է ս. Մեսրոպը։

բած։ Ժողովը կազմեց «Հաւատոյ հանգանակը» 12 յօն դուածով և ուրիշ կանոններ, այլև սահմանեց՝ հաւատալու թիւսուս Քրիստոս՝ է ճշմարիտ Աստուած և Աստուծոյ Որդի, համագոյակից Հօր և ս. Հոգւոյն և աստուածային բոլոր յատկութիւններով հաւասար Նրանց։

Երկրորդ տիեզերական ժողովը գումարուեց Կոստանդնուպոլսում Մեծն Թէոդոս կայսեր հրամանով 381 թ. 150 հայրապետների մասնակցութեամբ։ Այս ժողովը դատապարտեց հոգեմարտ Մակեղոնին, որ Կ. Պոլսի Յունացպատրիարք էր։ Սա ուրանալով Հոգւոյն Սրբոյ աստուածութիւնը, քարոզում էր, թէ ս. Հոգին հաւասար անձ չէ Հօր և Որդու հետ, այլ Նրանց պաշտօնեայ և Նրանց էրութիւնից իսպառ օտար։ Ժողովը սահմանեց՝ դաւանել ս. Հոգւոյն համագոյակից Հօր և Որդւոյն և աստուածութեամբ հաւասար։ Այս ժողովին ներկայ էր և մեր Հայրապետ Մեծն Ներսէս։

Երրորդ տիեզերական ժողովը գումարուեց Փոքը Ասիայի Եփեսոս քաղաքում 431 թ. 200 հայրապետների մասնակցութեամբ։ Այս ժողովը դատապարտեց Կ. Պոլսի յոյն պատրիարք Նեստորին, որ մոլորուելով Աստուածութիւնը ճշմարիտ մարդեղութիւնից, քարոզում էր, թէ այլ է Աստուածուց և այլ է ս. Կոյս Մարիամից ծնուածը։ Այդպիսով ս. Կոյսին դաւանում էր ոչ թէ Աստուածածին, այլ մարդածին կամ քրիստոսածին, և այդպէս՝ ամենասուրբ Երրորդութեան Երկրորդ անձին՝ Յիսուս Քրիստոսին երկու բաժանելով՝ Երրորդութիւնը դարձնում էր չորրորդութիւն։ Ժողովը գատապարտելով Նեստորին՝ հեռացը նրան պատրիարքական աթոռից, աքսորեց և սահմանեց դաւանել Յիսուս Քրիստոսին՝ մի Որդի Աստուծոյ, իսկ Մարիամ ս. Կոյսին Աստուածածին։ Այս ժողովի վճիռը Հայաստան բերին մեր ս. թարգմանիչները՝ Սահակի և Մեսրոպի աշակերտները։

17.

ԱՌԱՋԻՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԻ ՇԱՐԺԱՌԻԹՔԸ ՀԱՅՈՑ
ԵՒ ՊԱՐՍԻՑ ՄԷՋ. — Ա.ՏՈՎՄԵԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ. —
ԵՒ ԴԵՆՇԱՊՈՒՀԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԼԻ:

Ս. Սահակ և ո. Մեսրոպ թարգմանիչների աշակերտ
Յովակի կաթողիկոսի ժամանակ Պարսկաստանում թագա-
ւորում էր Յազկերտ Բ., երբ Արշակունեաց թագաւորու-
թիւնն արդէն վերացած էր: Երկու դրացի ազգեր՝ յոյ-
ներն ու պարսիկներ, ձգտում էին տիրել Հայաստանին,
բայց որովհետեւ այդ միջոցին պարսիկները յոյներին յաղ-
թելով, նաև մեծաքանակ տուգանքի էին ենթարկել նը-
րանց, ուստի և ամենայարմար ժամանակն էին համա-
րում վճռական քայլն անելու՝ մտադրուած նպատակին
հասնելու համար. այն է՝ իրանց հպատակ բոլոր ազգերին
— հայերին, վրացիներին և աղուաներին դարձնել կրա-
կապաշտ: Առաջին փորձն սկսեցին հայերից, այն յոյսով,
որ եթէ հայերը կրակապաշտ դառնան, վրացիք և աղուանք
կը դառնան ու կը դառնան:

Յազկերտ այս գործում հետեւմ էր իր խորամանկ
հազարապետ Միհրներսեհին, մողերին և մողպետներին:
Առաջին փորձը, որ նրանք մտածեցին անելու, այն
էր, որ հրաման ուղարկուեց Հայաստան, ինչպէս նաև
Վրաստան և Աղուանից աշխարհ, որ այդ հպատակ ազգե-
րի զօրավարներն ու նախարարները իրանց զօրքով գան
և օգնեն Հոնաց հետ սկսած պատերազմում: Հայերը թա-
գաւորի հրամանը հնազանդութեամբ կատարեցին: Որպէս
զի հայերը նչ մի կասկած չը տանեն, Յազկերտը Վասակ
Միւնեաց նախարարին տալիս է երկրի կուսակալութիւնը,
իսկ Վարդան Մամիկոնեանին նշանակում է Հայոց զօրա-
վար: Երկու տարի պատերազմ Հոնաց դէմ շարունակում
է, պարսիկները չեն կարողանում յաղթել: Յազկերտը

հրամայում է հին զօրքերին յետ ուղարկել և նորերին բե-
րել, այսպէս պատերազմը եօթը տարիէ՝ շարունակուեց:
Վերջին տարին, որ պարսիկները յաղթութիւնը տարան,
Յազկերտն ուղղակի առաջարկեց հայերին թողնել քրիս-



ՅՈՒՆԻՑԱԿԱՆ
տոնէութիւնը և ընդունել կրակապաշտութիւնը: Պատե-
րազմի մէջ հայ զօրքին առաջնորդում էին Ատովմ Գնու-
նի զօրավարը և Մանաճիհը Խշտունի նախարարը: Մրանք
իրանց զօրքով արհամարհելով թագաւորի խօսքը, շտա-
վարանց զօրքով արհամարհելով թագաւորի խօսքը, շտա-
վեցին փախչել Հայաստան: Պարսից զօրքերը հասնելով

Ճանապարհին՝ նահատակեցին բոլորին և այս նահատակութիւնը կոչուեց Ատովմեանց նահատակութիւն՝ Ատովմ գօրավարի անունով։ Սրանց յիշատակը մեր եկեղեցին կատարում է Առաջաւորաց պասից յետոյ առաջին երկուշաբթի օրը։

Երբ Յազկերտը իր առաջին փորձով չկարողացաւ նպատակին հասնել, ուղարկեց Հայաստան մի պարսիկ իշխան Դենշապուհ անունով իր թէ նոր աշխարհագիր անելու։ Սա իր դաժան բնաւորութիւնով մեծամեծ չարիքներ հասցը եց հայ ժողովրդին. եկեղեցին՝ որ ազատ էր, հարկատու դարձեց, նախարարներին միմեանց հետ թշնամացը եց և երկրի մէջ ներքին երկպառակութիւն գցեց։ Այս բոլոր չարիքը հայ ժողովուրդն ամենայն համբերութիւնով տարաւ, սակայն և ոչ մինը հաւատափոխ չեղաւ։

18

ՄԻՀՐՆԵՐՍԵՀԻ ՆԱՄՈԿԸ ՅԱԶԿԵՐՏԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ ԵՒ ՀԱՅԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԳՆԱԼԸ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆ. ԱՆԳԴ ԳԻՒՂԱՔԱՂԱՔԻ ԴԻՄՄԴՐՈՒԹԻՒՆԸ ՄՈԳԵՐԻՆ. ՎԱՍԿ ՄԻՀՆԵԱՅ ԻՇԽԱՆԻ ԴԱՀԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ.

Երբ այդ փորձը ևս անյաջող անցաւ, Միհրներսեհ հաղարապեաը թագաւորի հրամանով մի նամակ գրել տուաւ մոգերին և մոգպետներին և ուղարկեց Հայաստան, որի մէջ Պարսից արքունիքն աշխատում էր ցոյց տալ պարսկական կրօնի առաւելութիւնը և քրիստոնէութեան պակաս կողմերը. Նամակը վերջանում էր հետևեալ խօսքերով։

«Հայերը պարտաւոր են կամ կէտ առ կէտ պատասխանել նամակին, կամ գնալ Պարսկաստան և ներկայանալ թագաւորին»։

Երբ այդ նամակն ստացուեց, ս. Յովսէփ կաթողիկոսը քոլոր եպիսկոպոսների, երեցների և նշանաւոր իշխանների ու նախարարների հետ ժողով արաւ 449 թ. Արտաշատ քաղաքում և ժողովը բոլորի հաւանութիւնով գրեց Միհրներսեհի թղթի պատասխանը, որի մէջ զօրաւոր փաստերով ապացուցանում էին քրիստոնէական կրօնի ճշմարտութիւնները. Հայերը իրանց պատասխանը վերջացրին հետևեալ խօսքերով։

«Այս հաւատից մեզ ոչ չի կարող հեռացնել՝ ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր... քո սուրդ և մեր պարանոցը. մենք ամենքս ուրախութիւնով կը մեռնենք, բայց չենք փոխիլ մեր սուրբ հաւատը»։

Այս պատասխանը երբ ստանում է Յազկերտը, հրամայում է հրապարակով կարդալ. լսողները և՛ գովում էին, և՛ զարմանում այդ իմաստուն և համարձակ գրուածքի վրայ. Խոկ Յազկերտը աւելի ևս զարմանալով՝ Պարսկաստան է կանչում հայ նշանաւոր նախարարներին և իշխաններին, որոնց ս. Յովսէփ կաթողիկոսը օրհնելով ճանապարհ է գրցում. Զատկի շաբաթ օրը նախարարները համնում են Պարսից դուռը, բայց ոչ սովորական հանդիսաւորութեամբ, ալ բոլորովին անշքօրէն։ Երբ նախարարները ներկայացան թագաւորին, նա սպանալից եղանակով առաջարկեց նըրանց, որ եթէ հետևեալ օրը արեգակը ծագելիս չեն երկրպագիլ արեգակին և իրեւ Աստուած չեն պաշտիլ, ամենածանը պատիժների կ'արժանանան։ Այս ժամանակ Վարդան Մամիկոնեանը միւս նախարարների հետ միասին ամենամեծ վստահութեամբ յայտնեցին թագաւորին, որ ամենքը պատրաստ են տանել այն բոլոր տանջանքները, ինչ որ կարող է թագաւորի մտքովն անցնել և ամենայն սիրով մեռնել, քան ուրանալ իրանց սուրբ հաւատը և ուրիշ կրօն դաւանել։

Թագաւորը երբ այս խօսքերը լսեց, աւելի ևս բորբո-

քուելով՝ հրամայեց բանտարկել բոլոր նախարարներին և խիստ հսկել, որ ոչ մի մարդ իրաւունք չունենայ նրանց երեսը տեսնել: Բանտարկեալների մօտ երթեւկում էր միայն թագաւորի մտերիմներից մինը, Խուժիկ անունով, որ ծածուկ քրիստոնեայ էր, սա խորհուրդ տուաւ նախարարներին, որ առերեսս թագաւորի հրամանը կատարեն, գնան հայրենիք և այնտեղ միացած ոյժով պաշտպանեն երկիրը: Նախարարները հետեւցին Խուժիկի խորհրդին: Յազկերալ լսելուն պէս, շատ ուրախացաւ և մեծ տօն կատարեց, նախարարներին բանտից ազատեց և բոլորին դաշնագան պարզեցներով վարձատրելով՝ ուղարկեց Հայաստան, նրանց հետ և 700 մոդ, որ Հայաստանում մոգութեան կրօնը տարածեն:

Նախարարների ուրացութեան լուրը նրանցից շուտ հասաւ հայրենիք և գեռ նախարարներն ու մոգերի խումբը տեղ չէին հասած, որ հայ ժողովուրդը՝ մեծ թէ փոքր, մարդ թէ կին՝ բոլոր հոգեորականների հետ մի սիրտ և մի հոգի դարձած՝ սուրբ Խաչի և Աւետարանի վրայ երգուեցին, որ ամենը հաստատ մնալով իրանց հաւատին, զէնք վերցնեն ուրացողների դէմ և ոչ-ոք չխնայէ նոյն իսկ իր ամենամօտիկ սիրելիին, եթէ նա ուրացած լինի իր հաւատը: Նախարարները հասան Ծաղկուն գաւառի Անգղ գիւղաքաղը: 25 օր այդտեղ հանգստանալուց յետոյ, մոգակետը կամեցաւ առաջին վորձն անել, նա իր մոգերով յարձակուեց եկեղեցու վրայ, որ քանդի և նրա տեղը կրակատուն շինէ: Այդ օրը եկեղեցում պատարագիչ էր Ղեռնդ երէցը, որ բոլոր ժողովրդի և հոգեորականների հետ իսկոյն դուրս եկաւ և յարձակուելով մոգերի վրայ, ծեծելով վոնդեց այնտեղից: Մոգակետը զարմանալով Հայոց ժողովրդի հաւատի հաստատութեան վրայ, կամեցաւ գրել Յազկերալն և խորհուրդ տալ, որ հրաժարուի Հայերին կրակապաշտ դարձնելու մտքից, որովհետեւ այդ բանը համարում է անի-

րագործելի. սակայն Վասակը, որ սրտանց ուրացել էր քրիստոնէութիւնը, համոզում է մոգակետին, որ ինքը Հայերի մէջ շատ հեշտութեամբ կարող է տարածել կրակապաշտութիւնը: Սա իր նենգամիտ խորհրդով և շողոքորթութիւնով կարողանում է խաբել միամիտներին, ընդունել է տալիս կրակապաշտութիւնը և շինում են մի քանի կրակատուններ: Ուխտապահ նախարարները Վարդանի հետ իմանալով այս բոլորը, կալանաւորում են ուրացող Վասակին, բայց նա սուրբ Խաչի և Աւետարանի վրայ երդուելով՝ ազատում է բանտից:

Այնուհետև հայերը յարձակուելով մոգերի և պարսկական զօրքերի վրայ, մեծ հարուած են տալիս նըանց, գրաւած տեղերը յետ են խում և շինած կրակատունները քանդում: Երբ այսպէս՝ Հայերը ազատելով երկիրը մոգական կրակապաշտութիւնից, տօնում էին իրանց յաղթութիւնը, յանկարծ լուր են առնում, թէ Պարսից զօրքը մըտել է Աղուանք և ստիպում է ընդունել մոգութիւնը: Վասակը դիտմամբ Հայոց զօրքը բաժին-բաժին է անում՝ նըանց ոյժը թուլացնելու համար: Նա Վարդանին իր գնդով ուղարկում է Աղուանից աշխարհ, ինքը մեծ բանակով մընում է Արարատեան գաւառը, իսկ Ներշապուհ Արծրունի իշխանին յանձնում է Պարսից սահմանագուխը պաշտպանել և իր այս կարգադրութիւնը յայտնում պարսիկներին: Վարդանը Աղուանից աշխարհում կոտորում է մոգերին և քանդում կրակատունները, բայց յանկարծ լուր է ստանում թէ Վասակը Ժիտելով իր երդումը, այրում է Հայոց գիւղերը և կոտորում բնակիչներին, ուստի և անմիջապէս շտապում է իր զօրքով Հայաստանն ազատելու: Վասակը լսելով այդ մասին փախչում է Սիւնիք՝ իր գաւառը, և որովհետև ձմեռը վրայ է հանում, ուստի և զօրքերը հանգստանում են և երկրի մէջ խաղաղութիւն է տիրում: Հայերը զայրանալով Վասակի անհաւատարմութեան


վրայ, խորհուրդ արին և մի պատգամաւոր ուղարկեցին Յազկերտի մօտ ասելով՝ որ պատրաստ են հնագանդել թագաւորին, եթէ ազատութիւն տրուի քրիստոնէութիւնը պաշտել, յայտնելով նաև որ այս բոլոր անկարգութիւնների և մեծամեծ վասների բուն պատճառը Վասակն է։ Այս որ լսեց թագաւորը, փոքր ինչ մեղմացաւ և ազատութեան թուղթ տուաւ, որ քրիստոնէութիւնը ամենայն տեղ պաշտուի համարձակ։ Սակայն այդ ազատութիւնը ժամանակաւոր էր և միայն Հայերին միամտացնելու համար։ Յագկերտը շուտով փոխեց իր միտքը և հրամայեց Միհրներսին հազարապետին մեծ զօրք ժողովել, յարձակուել Հայերի վրայ և զէնքի ուժով ընդունել տալ մոգական կրօնը։ Այս դառն ժամանակին թէկ Հայերը պատգամաւոր ուղարկեցին Յունաց կայսեր մօտ օգնութիւն խնդրելով, բայց մերժումն ստացան և պարտաւորուեցին իրանց սեպելան ուժերով պաշտպանել քրիստոնէութիւնը։

19.

ԱԻԱՐԱՅՐԻ ՊԱՏԵՐԱՋՄԸ ԵՒ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵՒ
ՂԵԽՈՆԴԵԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Զատկական տօնին Միհրներսին հասաւ Սրտագ գաւառի Աւարայրի դաշտը. Հայոց ուխտապահ նախարարներն էլ, մանաւանդ Վարդան Մամիկոննեանը, տեսնելով Վասակի չարութիւններն ու Պարսից ահագին պատրաստութիւնը, պատերազմի հրաւէր կարդացին բոլոր հայ ժողովրդին; Հաւաքուեց 66,000 կամաւոր զօրք և բանակ կազմելով՝ գնաց դէպի Աւարայրի դաշտը և կանգ առաւ Տղմուտ գետի ափին։ Նոյն տեղ եկել էին և ո. Յովսէփ կաթողիկոսը, Ղեռնդ երէցը, Սահակ եպիսկոպոսը և շատ քահանաներ՝ մասնակցելու պատերազմին։ Իսկ պարսից

ահագին բանակը վաղուց անցնելով Հեր և Զարեանդ գաւառներից, բանակ էր գրել նոյն Տղմուտ գետի միւս կողմում։ Պատերազմից առաջ՝ Վարդան Մամիկոնեանը իր ճառով և Ղեռնդ երէցը իր քարոզով ոգևորում են իրանց



սակաւաթիւ զօրքերին և ասում։ «Զվարինանք թշնամու բազմութիւնից, այլ քաջութեամբ պատերազմենք, որ կամ յաղթենք և կամ քաջութեամբ ընդունենք մահը, միայն

թէ մեր տղամարդութեան հետ չխառնենք վատութիւն։ Ղեռնդը և միւս քահանաներն այդ օրը պատարագ մատուցանելով, խոստովանում և հաղորդում են զօրքերին, Միւս առաւօտը՝ որ Հոգեգալստեան տօնի եօթներորդ օրն էր 451 թ. յունիս ամսին, սկսում է արիւնահեղ պատերազմը, որ շարունակւում է մինչև երեկոյ։ Հայոց սպարապետ քաջ Վարդանը, երեկոյեան դէմ ընկաւ պատերազմում և նահատակուեց, Վարդանի հետ նահատակուեցին ութ նախարար և շատ զինուորներ, որոնց թիւը հասնում է 1036 հոգու, իսկ պարսիկների կողմից սպանուեցին 3544 մարդ։ Այսպէս քրիստոնէական հաւատի և ազգային եկեղեցու ազատութեան համար զոհեցին իրանց այն սուրբ նահատակները, որոնց յիշատակը մեր եկեղեցին կատարում է «Վարդանանց զօրավարաց և 1036 վկայից» անունով բուն բարիկենդանի վերջին շաբաթի հինգաբթի օրը։

Պատերազմից յետոյ պարսիկներն աւերեցին Վաղարշապատն ու ս. Եջմիածինը, որ այն ժամանակ կաթուղիկէ էր կոչւում, ուստի և հարկ եղաւ Հայրապետական Աթոռը տեղափոխել Դըւին, որ Վաղարշապատից շատ հեռու չէր։

Պատերազմը վերջանալուց յետոյ Պարսից զօրավարը գնալով թագաւորի մօտ, համոզեց նրան, որ անհնարին է հայերին կրակապաշտ դարձնել. իզուր երկիրն աւերւում է և արքունիքը մեծամեծ ֆնաների ենթարկւում, և բոլոր ֆնաների պատճառը համարելով ուրացող Վասակին, խիստ բողոքեց նրա դէմ։ Յազկերտը հրամայեց Վասակին կանչել, զրկեց նրան բոլոր իրաւունքներից ու պատուից և հրամայեց բանտարկել, ուր նա ամենազառն տանջանքներից յետոյ որդնալից եղաւ և մեռաւ։

Սրանից յետոյ Յազկերտը հրաման հանեց և առերես ազատութիւն տուաւ Հայերին իրանց կրօնը պաշտելու,

նրանց վրայ նշանակելով մի խորամանկ և բռնակալ կառավարիչ Ատրորմիզդ անունով, որ իր խաթերայ և խարդախ բնաւորութեամբ կարողացաւ խաթել նշանաւոր հայ հոգեորականներին ու նախարարներին և ուղարկել Պարսկաստան՝ ներկայանալու թագաւորին։

Միհրներսեհը թէպէտ թագաւորի հրամանով առերես ընդունեց նրանց պատուով, բայց յետոյ նրանց բոլորին բանտարկել տուաւ և ատա հրամայեց տանել նրանց նիւշապուհ քաղաքը և յանձնել մոգպետի հսկողութեան, որ նրանց դարձնի կրակապաշտ։ Սակայն մոգպետը տեսնելով նրանց առաքինի կեանքը, ինքն ընդունեց քրիստոնէութիւնը։ Յազկերտը երբ իմացաւ՝ դառնացած սրտով հրամայեց հանել բանտից հայ հոգեորականներին և բոլորին էլ կոտորել։ Այս նահատակութիւնը Ղեռնդ երէցի անունով կոչուեց «Ղեռնդեանց նահատակութիւն», որոնց յիշատակը մեր եկեղեցին կատարում է բուն բարիկենդանի երեքշաբթի օրը։ Ապա ազատուեցին բանտարկութիւնից յետոյ։

20.

ՍՈՒՐԲ ՅՈՎՈՒՔԻ, ԳԻՒԾ ԵՒ ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

Ս. Յովսէփ կաթողիկոսը՝ Վայոց Զորեցի (Դարալագեազ), ս. Թարգմանիչների նշանաւոր աշակերտաներից միննէ և ս. Մեսրոպի մահից յետոյ համարւում է նրա արժանաւոր յաջորդը։

Սրա իշխանութեան ժամանակ մեր ազգային կեանքը շատ աննախանձելի էր, ժողովուրդը անխտիր, թէ հոգեւորական և թէ աշխարհական ապականութեան էր հասել իւր վարք ու բարքով։ Ս. Յովսէփ եկեղեցուն և եկեղեցը վարք ու բարքով։

ցականներին վայելուչ դիրք տալու համար Շահապիվան քաղաքում ժողով է գումարում 447 թ. նշանաւոր հոգեգորականների, նախարարների ու իշխանների մասնակցութեամբ, ուր սահմանելով կանոններ, վերջ է դնում, եկեղեցու մէջ մտած զանազան անկարգութիւններին:

Վարդանանց պատերազմի ժամանակ 450 թ. իբրև կաթողիկոս նոյնպէս ժողովք արաւ Աշտիշատ քաղաքում, հայ իշխանների ու բազմաթիւ եպիսկոպոսների մասնակցութեամբ, ուր գրուեց Յազկերտի հրովարտակի պատասխանը, բայց պատերազմից յետոյ կալանաւորուեց պարսիկներից ո. Ղեռնդեանց հետ, բանտարկուեց Պարսկաստանում և նահատակուեց:

Դիւտ կաթողիկոսը՝ որ նոյնպէս թարգմանիչների աշակերտներից է, քաջ գիտէր յունական լեզուն, վարում էր բարեպաշտ և սրբակրօն կեանք, կաթողիկոս ընտրուեց 465 թ. եօթանամնամեայ հասակի մէջ։ Սա բարեպաշտ վարք ունէր. եկեղեցական գիտութիւնների մէջ ունեցած հմտութեամբ ճոխացրեց և կարգաւորեց մեր եկեղեցու ժամակարգութիւնը ընտիր աղօթքներով և շարականներով։ Սրա ժամանակ պարսիկները դարձեալ շարունակում էին ստիպել հայերին ուրանալ իրանց հաւատը, բայց կաթողիկոսի կողմից հանդիպում էին մեծ դիմագրութեան։ Սրա ջանքերով շատ կրակատուններ խորտակուեցին. ուրացեալ նախարարներին և այլոց խիստ լեզուով յանդիմանում էր թէ խօսքով և թէ գրով, ուստի և նրանց կողմից ամբաստանուեց և աքսորուեց Պարսկաստան՝ զրկուելով Հայրապետական իշխանութիւնից և վախճանուեց 475 թ. խորին ծերութեան մէջ տասը տարի վարելով Հայրապետական իշխանութիւնը։

Յովհան Մանդակունին՝ որ նոյնպէս համարւում է ո. թարգմանիչների աշակերտ և ընկերակից Գիւտին, կաթողիկոս ընտրուեց 480 թ., եօթանասունինդամեայ հա-

սակում։ Սա իր սրբութեամբ և հմտութեամբ մեծ հոչակ ստացաւ։ Սրա ջանքով պակասեց հաւատութացների թիւը և աւելացաւ ազգային եկեղեցուն հաւատարիմ նախարարների և իշխանների թիւը։ Իր իմաստութեամբ բարեկարգեց Աթոռը և իր հմտութեամբ ու վայելուչ կանոններով զարգարեց մեր եկեղեցու աստուածպաշտութեան կարգեցութքներով, քարոզներով և շարականներով։ Ըլ նորանոր աղօթքներով, քարոզներով և շարականներով։ Վայեց նաև շատ խրատական ճառեր։ Սա իր իմաստալից յորդորներով քաջալերեց Վահան Մամիկոնեանին և հայոց զօրքին, որոնք կարողացան քաջութեամբ յաղթել պարսից արքային և յաղթութիւնից յետոյ՝ եկեղեցու մէջ մի փառաւոր ատենաբանութեամբ օրհնեց բոլորին և վախճանուեց վեցամեայ կաթողիկոսութիւնից յետոյ։

21.

Վ-ՐԴ ԴԱՐՈՒԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

Ա. Սահակ Պարթե, որպէս մատենագիր նշանաւոր է, որ սա եղաւ առաջին հեղինակը ո. Գրքի հայերէն թարգմանութեան, նախ ասորերէն և ապա յունարէն լեզուից, որի ամբողջ թարգմանութեանը մասնակից էր և Ս. Մեսուպի Մաշտոց իւրեանց նշանաւոր աշակերտներով։ Ս. Մեսուպ Մաշտոց իւրեանց նշանաւոր աշակերտներով։ Գրքի թարգմանութիւնից ունի գրած եկեղական կանոններ, շարականներ, որոնց մէջ նշանաւոր գեցական կանոններ, շարականներ, որոնց մէջ նշանաւոր գարականը իւր հոգեբուղիս իմաստներով և վսեմ դարշարականը իւր հոգեբուղիս իմաստներով և վսեմ դարձուածներով, եկեղեցական ժամերգութեան մէջ նշանաւուածներով, երգեց և զանազան մասնաւոր թղթեր։

Ս. Մեսուպ Մաշտոցը, որ անմահացըել է իրեն հայկական նշանագրերի գտնելով և ո. Գրքի թարգմանութեամբ, գրել է շարականներ, որոնց մէջ յայտնի են Մեծի թեամբ, գրել է շարականներ, որոնց մէջ յայտնի են Մեծի

ներ և շարականներ մեր եկեղեցու աստուածպաշտութեան կարգերի մէջ:

Կորիւն, որ գրել է ս. Մեսրոպի կեանքը: Դաւիթ, որ անյաղթ փիլիսոփայ անուան արժանացաւ:

Մամբրէ, Խորենացու փոքր եղբայրը, որ գրել է իւր ժամանակի պատմութիւնը և զանազան ճառեր:

Սրանք են V-րդ դարու այն նշանաւոր մատենագիրները, որոնք Ս. Սահակ և ս. Մեսրոպ թարգմանիչների ջանքով կատարելագործուեցան ժամանակակից գիտութիւններով և իւրեանց երկասիրութիւններով յայտնի եղան:

22.

ՎՐԱՅ ԱԶԳԻ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆԵԼԸ ԵՒ ՀԱՅՈՑ
ԵԿԵՂԵՑՈՒՅ ԲԱԺԱՆՈՒԵԼԸ, ՄՈՎՍԻՍ, ԱԲՐՈՀԱՄ ԵՒ ԿՈ-
ՄԻՏԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

երկու եկեղեցիների բաժանման պատճառը դարձաւ Քաղ-
կեղոնի ժողովի տարածայնութիւնները:

Մովսէս Եղիկարդեցու կաթողիկոսութեան օրով, Վը-
րաց մէջ կաթողիկոսի ընտրութեան համար խոռվութիւն
է ծագում, ուստի առաջարկում են հայոց կաթողիկոսին,
որ ինքն ընտրէ կաթողիկոս վրաց համար, ապա ձեռնա-
որ ինքն ընտրէ կաթողիկոս վրաց համար, ապա ձեռնա-
որ ինքն ընտրէ կաթողիկոսական օծումն ստանալուց
զուներին: Կիւրիոն կաթողիկոսական օծումն ստանալուց
յետոյ գալով Վրաստան, սկսում է քարոզել իր ժողովը-
յին՝ ընդունել Քաղկեդոնի ժողովը, բայց միենոյն ժա-
դանակ պատկառելով Մովսէս կաթողիկոսից, կեղծում էր
ասում, որ ինքը դիտաւորութիւն չունի հեռանալու հա-
կա ասում, որ ինքը վախճանւում է Մով-
յոց եկեղեցու միութիւնից: Իսկ երբ վախճանւում է Մով-
յոց եկեղեցի ժողովը Աբրահամ կաթողիկոսի ժամանակ մի-
սէս, որա յաջորդ Աբրահամ կաթողիկոսի ժամանակ մի-
քանի գրաւոր բանակցութիւններ վարեց: Աբրահամը յոր-
դում էր կիւրիոնին չխախտել հայոց և վրաց դարաւոր
դուրում էր կիւրիոնին չխախտել հայոց և վրաց դարաւոր
դուրում էր կիւրիոնին հրատարակեց հեր-
գումարեց Դըւինում, ուր կիւրիոնին հրատարակեց հեր-
գումարեց եկեղեցին բաժանուած հայոց եկեղեցուց: Որ
ձեալ և վրաց եկեղեցին բաժանուած հայոց եկեղեցուց: Որ
երկու կողմի համար էլ վախճանար եղան, որովհետեւ կրօ-
նական խարութեան հետ, ծագեց նրանց մէջ մի զօրեղ
նական խարութեան: Աբրահամ կաթողիկոսը այսու երկար չ'ապ-
թշնամութիւն: Աբրահամ կաթողիկոսը այսու երկար չ'ապ-
թշնամութիւն է և նրան յաջորդում է Տարոնի
ըելով վախճանուում է և նրան յաջորդում է Տարոնի
կոմիտասը Տէր կոմիտասը, Գլակայ վան-
Մամիկոնէից եպիսկոպոս Տէր կոմիտասը, Գլակայ վան-
կաթողիկոսից, սակայն իւրաքանչիւր ազգ իր մայրենի
լեզուով էր կատարում եկեղեցական պաշտամունքը: Այդ

ղեցական զանազան բարեկարգութիւններ անելով, կը վախճանուի եօթնամեայ կաթողիկոսութիւնից յետոյ 618 թուին մօտաւորապէս:

23.

ՔԱՂԿԵԴՈՆԻ ՃՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ ՄԻ ԱԿՆԱՐԿ: ՔՐԻՍՏՈՓՈՐ
ԵՒ ԵԶՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

Երբ Հայոց աշխարհը պարսկական երկար տարիների կրօնական հալածանքներից փոքր ինչ շունչ առած, հանգիստ կեանք էր վարում, այդ ժամանակներում առաջ է գալի մի նոր յուզմունք, աւելի վատ քան պարսկական հալածանքը: Այդ Քաղկեդոնի ժողովի յուզմունքն էր, որ մտնելով Հայաստան, պատճառ դարձաւ հազարաւոր զոհերի, որովհետեւ հայոց եկեղեցին բնաւ կարօտութիւն չզգալով այդպիսի մի նոր վարդապետութեան, և պաշտպանելով իր առաքելական եկեղեցու անկախութիւնը, իսպառ մերժեց Քաղկեդոնի ժողովը և այս առթիւ ազգային ժողովներ գումարելով, սահմանեց հաստատ մնալ միայն առաքելական քարոզութիւնների վրայ: Այս մերժումով թէպէտ Հայոց եկեղեցին շատ տիսուր հետևանքներ ունեցաւ, բայց մինչև այսօր պահեց իր անկախութիւնը:

Կոմիտաս կաթողիկոսի մահից յետոյ, ազգի և նախարարների հաճութեամբ կաթողիկոս է ընտրւում Քրիստովը Գ. որը լինելով մի սրբակրօն և անաշառ մարդ, շարունակ յանդիմանում էր նախարարներին և բոլոր մեռով, որ իշխանները կամենում են իրեն գահընկէց անել, իր կամքով հրաժարուեց Աթոռից, երեք տարի վարելով

կաթողիկոսական իշխանութիւնը և սկսեց կրօնաւորական կեանք վարել Մասիս լերան մօտ մի վանք շինելով և բնակուելով այնտեղ մինչև իր մահը: Մըան 621 թուին յաջորդում է Եղը կաթողիկոսը: Մըա կաթողիկոսութեան ժամանակ հայոց եկեղեցին չարաչար տանջւում էր Քաղաքականի ժողովի պատճառով: Յունաց Հերակլ կայսրը Քրիստոսի սուրբ խաչը գերութիւնից ազատած պարսից պատերազմից վերադառնալիս կարին քաղաքում ժողով գումարեց: Այդ ժողովին ներկայ էր և Եղը, որին կայսրը ստիպեց ընդունել Քաղկեդոնի ժողովը, յայտնելով, որ հակառակ դէպքում յունաց բաժնի համար կը նշանակէ կաթողիկոս և նըան կը մերժի վարելու կաթողիկութիւն կաթողիկոս և նըան կը մերժի վարելու կաթողիկութիւնը: Եղը կայսրի Երկիւղից ընդունեց Քաղկեդոնի ժողովը և դրա համար իբրև պարզ ստացաւ կողը աւանի աղահանքը:

Երբ Եղը այսպէս մեծամեծ պարգևներով վերադառն ըովին քաղաքը, այդ ժամանակ ս. Գրիգոր եկեղեցու փականը Յովին վարդապէտ, և սովոր կաթողիկոսից ստացաւ մեծ յանդիմարին, և սըա համար կաթողիկոսից ստացաւ մեծ յանդիմարին: Յովին վարդապէտը պատասխանեց կաթողիկոսութիւն: Յովին վարդապէտը լոչուեցաւ Եղը, որովհետեւ սին, ասելով «յիրաւի անունդ լոչուեցաւ Եղը, որովհետեւ սահմանը, Եղը բարկացած հրամայեց ծեփառ եկեղեցու սահմանը, Եղը բարկացած հրամայեց ծեփել և արտաքսել Յովինին, որ գնաց նիգ գաւառի Բջնայ մայրավանքը. սակայն Եղը նըան այնտեղից էլ հալածեցաւ, վանքը անուանեց Մայրագոմ և իրան անուանեց մայրագոմեցի:

Այնուհետեւ հայերը տեսնելով, որ Քաղկեդոնի ժողովն ընդունելով, մեր եկեղեցու կարգ ու կանոնները փոխուում ընդունելով, մեր եկեղեցու կարգ ու կանոնները փոխուում ընդունելով, այն է՝ Ծննդեան ճրագալոյցի տօնը սահմանած օրը չեն, այն է՝ Ծննդեան ճրագալոյցի տօնը սահմանած օրը չեն կատարուում, ս. հաղորդութեան բաժակի հետ ջուր են կատարուում, սուրբ Աստուածը առանց «խաչեցարի» են երախառնում,

գում, իսպառ մերժեցին Քաղկեդոնի ժողովը և իրանց ատելութիւնը ցոյց տալու համար դէպի Եզրը, նրա անունը հայրապետների շարում թարս գրեցին՝ «զզր»: Եզրը կաթողիկոսական Աթոռը 10 տարի վարելուց յետոյ վախճանուեց:

24.

ՆերՍէս Գ. Շինող ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Եզրին յաջորդում է Ներսէս Գ. մի ուսեալ և զինուորական պաշտօն վարած մարդ, որ շատ եկեղեցիներ և վանքեր շինելու համար ստացաւ «Շինող» անունը: Ներսէսը տեսնելով եկեղեցու և ազգի դառն վիճակը՝ մի կողմից Արաբացոց արշաւանքները, միւս կողմից յունական կրօնամոլութիւնը, չեր ցանկանում ընդունել կաթողիկոսութիւնը, սակայն զիջանելով թէոդորոս Ոշտունու և միւս նախարարների թախանձանքին, ընդունում է ազգի առաջարկութիւնը և ձեռնադրում կաթողիկոս:

Մանկութիւնից մեծացել էր Յունաց աշխարհում, քաջ գիտէր յունական լեզուն, իբրև յունական զինուոր շըջել էր շատ տեղեր, բայց լինելով ջերմեռանդ աղօթասէր, թողեց զինուորութիւնը և ընտրեց կրօնաւորական կեանք:

Ներսէսի առաջին գործն եղաւ թաղել այն դիակները, որոնց Արաբացի հրոսակները Յիսուսի ծննդեան օրը կոտորեցին հայ ժողովրդից՝ մօտ 12 հազար մարդ, այրելով շատ շինութիւններ և տանելով 35 հազար գերի:

Այսուհետեւ Ներսէսն ոկսեց շինել և վերանորոգել այրուած ու քանդուած եկեղեցիները, շինեց խորվիրապի վանքը, ո. Գրիգորի անունով եկեղեցին, որ Վաղարշապատից հեռու է կէս ժամու հեռաւորութեամբ: Ներսէս՝ բացի եկեղեցական շինութիւններից, ձեռնարկեց բարեկարգել եկեղեցիքը և եկեղեցական ժամակարգութիւնը: Իր հայրապե-

տութեան վեցերորդ տարին գումարեց Դըմսայ Ե. Ժողովը՝ շատ եպիսկոպոսների և ուրիշ եկեղեցականների ու աշխարհականների մասնակցութեամբ. ժողովը նզովեց բոլոր հերետիկոսներին, մերժեց Քաղկեդոնի ժողովը և 12 յօդուածով կանոններ հաստատեց եկեղեցականների և աշխարհականների համար:

Այս ժամանակներում Արաբացիք կրկին յարձակուեցան Հայաստանի վրայ: Թէոդորոս Ոշտունին և միւս հայ վրայ կոստանդինին կայսրը, յարձակուելով Հայաստանի յունաց կոստանդինին կայսրը, յարձակուելով Հայաստանի վրայ՝ ուզում էր կործանել, բայց զիջանելով Ներսէս հայ վրայ՝ ուզում էր կործանել, բայց զիջանելով Ներսէս հայ վրայ կութիւնի միջնորդութեանը, նրան առաջարկեց ընդունել բապետի միջնորդութեանը, Ներսէսը և իր եպիսկոպոսները առ ահինական միութեան: Ներսէսը և իր եպիսկոպոսները առ ահինական միութեան կայսեր առաջարկութիւնը և հաղորդուեցին ընդունեցին կայսեր առաջարկութիւնը և հաղորդուեցին յոյն քահանայի մատուցած պատարգին, բացի մի եպիսկոպոսից, որ կայսեր պատասխանել է՝ թէ կաթողիկոսն էլ կոպոսից, որ կայսեր պատասխանել է՝ թէ կաթողիկոսն էլ կամաց է հաղորդուել, որովհետև ինքն է ժողովով մերժել քաղկեդոնականութիւնը:

Կայսրը՝ հայերին ընտելացնելու համար քաղկեդոնականութեանը, զանազան բռնի միջոցների էր դիմում. բայց կամութեանը, զանազան բռնի միջոցների էր դիմում. բայց կարողացաւ համոզել, զայրացաւ, թղթով պատուի երբ չկարողացաւ համոզել, զայրացաւ, թղթով պատուի երբ չկամութեանը գրաւոր յայտնեն: Ներսէս կայսեր պատասխանելու համար 648 թ. Դըմսայ նորից ժողով գումարեց և հետևեալ վճիռը կայացրեց.

«Մէնք նոր դաւանութիւն չենք ընդունում, միայն հաստատապէս հաւատում ենք այն վարդապետութեանը, որ ընդունեցինք ո. Գրիգոր Լուսաւորչից, երեք տիեզեր և լուսաւորչից ո. Գրիգոր Լուսաւորչից, երեք տիեզեր և լուսաւորչից ո. Թարգմանիչներից»: Ապա բական ժողովներից և մեր ո. Թարգմանիչներից»: Ապա ներսէս մի ընդարձակ զրութեամբ Նիկոյ ո. ժողովի հան-ներսէս մի ընդարձակ զրութեամբ Նիկոյ ո. ժողովի հան-

գանակն ուղարկեց կայսեր և խնդրեց, որ թոյլ տան հայերին ազատ պաշտել իրենց կրօնը:

Սրանից յետոյ յոյն վերակացուները աւելի սկսեցին տանջել հայերին: Ներսէսն ստիպուած եղաւ հրաժարուել պաշտօնից և հայրապետական Աթոռի տեղակալութիւնը յանձնեց Յովհաննէս Մանագկերացուն: Սա ժողով կազմելով, մերժեց Քաղկեդոնի և Եղբի ժամանակով եղած ժողովները և յոյներից ջոկուելու համար որոշ կանոններ սահմանեց:

Ապա Ներսէս Գ. վեցամեայ բացակայութիւնից յետոյ, նորից վերադարձաւ Դրւին և կանոն վարելիր հայրապետական գահը: Սահմանեց Վարագայ և. Խաչի տօնը, և քսանամեայ իշխանութիւնից յետոյ վախճանուեց 661 թուին:

25.

ՅՈՎՀԱՆ 02ՆԵՑԻ

Եղիա կաթողիկոսի մահից յետոյ 718 թ. հայրապետական գահը ժառանգում է Յովհաննէս Դ. Օձնեցի, Տաշրաց գաւառի Օձուն գիւղից, սա համարւում է հայ եկեղեցու ամենանշանաւոր հայրապետներից մինը, որ իւր առաքինի և սուրբ կեանքի համար սրբոց կարգը դասուեց: Մանկութիւնից ընտիր կրթութիւն ստանալով և ընական տաղանդունենալով հոգետորի և իմաստասէրի անուն ժառանգեց:

Յովհան Օձնեցու առաջին գործն եղաւ ժողով գումարել Թըւին մայրաքաղաքում, ուր ընդարձակ ատենաբանութեամբ պատկերացնելով եկեղեցու վիճակը, կամենում էր կրօնական ներքին երկառակութեանց առաջն առնել: Որովհետեւ Քաղկեդոնի ժողովի պատճառով սկսուել էր եկեղեցու ծխակատարութեանց ու կարգ ու կանոնների մէջ շփոթութիւն ընկնել, որով և աղջի մէջ ատե-

լութիւն և խոռվութիւն էր տեղի ունենում: Ժողովս ընդունելով կաթողիկոսի առաջարկած 32 կանոնները, որոնք գրուած էին եկեղեցու ներքին բարեկարգութեան վերաբերմամբ, միանգամայն մերժեց քաղկեդոնականութիւնը, որ մի քանի տեղ արդէն մտած էր հայոց մէջ՝ յունաց բաժնում: Յովհան իմաստասէր կաթողիկոսը յայտնի է բաժնում: Յովհան իմաստասէր կաթողիկոսը յայտնի է նաև իւր գրուածքներով, նա զրել է շատ ընտիր ճառեր, և իրեւ հոգետոր ատենախօսել է Դրւնայ ժողովում եկեղեցու բարեկարգութեանց մասին: Աւագ տօների շարականները և եկեղեցու հիմնարկութեան կարգն է յօրինել:

Մի անգամ Արարացոց մի ոստիկան ջատագովում է Յովհան Օձնեցուն Օմար Բ. ամիրապետի առաջնորդ պարզ կեանքի և անփառասիրութեան համար: Ամիրապետը հետաքրքրուելով հրաւիրում է կաթողիկոսին իր մօտ. կատաքրքրուելով գնում է նրա մօտ շատ շքեղ հազնուած: Ամիթողիկոսը գնում է նրա մօտ շատ շքեղ հազնուած: Ամիթողիկոսին մեծ ընդունելութիւն անելուց յետոյ, նկարապետը նրան մեծ ընդունելութիւնը, հարցնում է իմաստելով նրա արտաքին շքեղութիւնը, հարցնում է հակառակ տասէր կաթողիկոսին՝ ինչ է պատճառը որ դուք հակառակ ձեր կրօնի քարոզած պարզութեան, ինքներդ փայլում էք արտաքին շքեղութեամբ: Կաթողիկոսը պատասխանում է՝ արտաքին շքեղութեամբ: Կաթողիկոսը պատասխանում է այժմ չեն որովհետեւ առաջուան հրաշքները մեր ձեռքով այժմ չեն կատարւում այլս, մեզ մնում է ժողովրդի սիրտը զբաւել կատարւում այլս, մեզ մնում է ժողովրդի սիրտը զբաւել կատարւում այլս, և ապա ամիրապետին առանձէպիքարին մեր արտաքինով: Կաթողիկոսը պատասխանում է հայրապետը իր զգեստից և ցոյց նացնելով մերկանում է հայրապետը իր զգեստից և ցոյց նացնելով մերկանում է հայրապետը իր զգեստից: Ամիթէ տալիս, որ ներքուստ հազար է մազէ զգեստներ: Ամիթէ տալիս, որ ներքուստ հազար է մազէ զգեստներ: Ամիթէ տալիս, որ ներքուստ հազար է մազէ զգեստներ:

Կոսութիւնից յետոյ վախճանուում է 729 թուին:

26.

ՅՈՎՀԱՆՆԵՍ Զ. ԴՐԱՄԻԱՆԱԿԵՐՏՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Ութերորդ դարի երկրորդ կիսից սկսւում է մեր եկեղեցու և ազգի հալածանքի ամենադառն օրերը, մի կողմից Արաբացոց յարձակումները, միւս կողմից հայ և յոյն եկեղեցիների միութեան խնդրի փորձերը, որը շարունակուց գրեթէ մի դար աւելի: Այսպիսի թշուառ ժամանակամիջոցում միմեանց յաջորդող հայրապետներից յետոյ իններորդ դարու վերջին, (897 թ.) ընտրուում և օծւում է կաթողիկոս Մաշտոց բ. Եղիվարդեցի կաթողիկոսի մահից յետոյ, նրա աշակերտ և ազգական Յովհաննէս Զ. Դրամիանակերտ աւանից: Այս ինչպէս ականատես պատմաբան, մանրամասն կերպով գրել է իր ժամանակուայ բոլոր անցքերն ու տառապանքները, որ կը ել են հայոց եկեղեցին ու ժողովուրդը. իբրև հաշտարար հայր ամբողջ ազգի համար, միշտ միջամտում էր թագաւորի և նախարարների միջև պատահած վէճերին և վերջ էր տալի արդարութեամբ:

Մմբատթագաւորից ուղարկուեց Ատրպատականի Յոււսուփի ոստիկանի մօտ իբրև դեսպան, խաղաղութեան և հաշտութեան դաշն կապելու համար նրա և Հայոց նախարարների և աշխարհի հետ: Ոստիկանը թէպէտ սկզբումը սիրով ընդունեց կաթողիկոսին, բայց յետոյ կալանաւորեց և բանտարկեց նրան:

Այնուհետև Յոււսուփ բազմաթիւ զօրքով արշաւում է դէպի Հայաստան՝ բերելով իր հետ կալանաւորուած կաթողիկոսին և Զատկի տօնին, 909 թուին, Սիւնեաց աշխարհի վրայ յարձակուելով և շատ մարդկանց սըի անցնելով, յարձակուում է նաև Մմբատթագաւորի վրայ և չը-

կարողանալով բոնել նրան, ամբողջ ամառ աւերում է Հայաստանը, որին ականատես է լինում շղթայակապ հայրապելու: Երանելի կաթողիկոսը՝ կապանքներից ազատուելու համար ստիպուած է լինում, պահապանների հսկողութեամբ շրջել և ազգից դրամ ժողովել անգութ բոնաւորին վճարելու համար:

Ապա Յուսուփի միանում է Վասպուրականի ինքնակոչ թագաւոր Գաղիկ Արծրունունետ, որպէսզի Մմբատին կարողանան սպանել: Այս ժամանակներում Հայաստանում ամենուրեք հուր և սուր էր շողում. կողոպտեցին բոլոր եկեղեցիք, գերեցին շատ եկեղեցականներ ու աշխարհականներ, ձերբակալեցին շատ իշխաններ և շատերին սպանեցին, որոնց հետ և Սմբատ թագաւորին ենթարկեցին մեծ տանջանքի, իր հաւատը չուրանալու համար, բայց երբ բոլորովին մերժում է անտանելի տանջանքներից յետոյ, գըշուխը կտրում են և մարմինը տանելով Դըլին, խաչում են խաչափայտի վրայ 914 թ.: Այնուհետև կաթողիկոսը՝ տանդական կեանք վարելուց յետոյ գնում է Վասպուրական, տանդական կեանք վարելուց յետոյ գնում է Վասպուրական, ուր աւարտելով իր պատմութիւնը, վախճանուեց 924 թ. 27 տարի կաթողիկոսական պաշտօնը վարելուց յետոյ:

27.

ԱՆԱՆԻԱ. ՄՈԿԱՅԻ

Անանիան Վարագայ միաբանութեան առաջնորդը, ընտառում է կաթողիկոս 942 թ. Աղթամարում: Սա ճամարում է Սիւնեաց աշխարհները՝ նապահորդում է Սիւնեաց աշխարհները՝ խաղաղացնելու այն տեղերում տարածուած Յակոբ և նրա կողծակից Խոսրով Եպիսկոպոսներից ներմուծուած աղանդութեամբ: Յիշեալ անձինք ապստամբութեան ցոյցեր արին կաները:

մար եպիսկոպոսներ էր ձեռնադրում և ուղարկում, որ
'ի մի ժողովելով հովուէ նրանց: Ինքն էլ շարունակ նրանց
այցելում էր իբրև խնամակալ հայր, ազատում էր նրանց
օտարի գիրկը ընկնելուց: Սրա ժամանակ ևս յոյները ա-
մեն կերպով նեղելով հայերին կամենում էին գաւանա-
փոխ անել և ընդունել տալ քաղկեդոնի ժողովը, որի հա-
մար այն ժամանակուայ հոգեորականներին ենթարկում
էին զանազան տանջանքների: Խաչիկը հայրապետական
իշխանութիւնը վարելով 19 տարի՝ վախճանուեց 992 թուին
և թաղուեց իր շինուած Արգինա քաղաքի եկեղեցու գաւ-
թում, որ Անի քաղաքին մօս էր:

Սրա կաթողիկոսութեան օրով մեծ հոչակ ստացաւ
Անձնացեաց Խոսրով եպիսկոպոսի որդի Գրիգոր Նարե-
կացին, որ մանկութիւնից ստանալով իր կրթութիւնը
Նարեկայ վանքում իր քեռի Անանիա Նարեկացու ձեռքի
տակ, շատ յայտնի դարձաւ իր իմաստուն և սուրբ վար-
քով և իր գրուածքի խորիմաստ զգացմունքով: Նարեկա-
ցին գրել է մի նշանաւոր ազօթագիրք. «Նարեկ» անու-
ով, որ աւարտեց 1002 թուին, գրեց շատ ճառեր և կրօ-
նական ուրիշ գրքեր և 1003 թուին մեռաւ Նարեկայ վան-
քում, ուր վանահայր էր և որի համար էլ կոչում է Նա-
րեկացի: Սա համարւում է տասներորդ դարու նշանա-
ւոր և յայտնի կրօնական բանաստեղծը:

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ

Պետրոս Ա. կաթողիկոսը, որ կոչում էր Գետադարձ,
Սարգիս կաթողիկոսի մահից յետոյ 1019 թ. օծումն ստա-

նալով, յաջորդեց վերջնոյս, որ դեռ իր կենդանութեան
ժամանակ ծերութեան պատճառով ազգի հաւանութեամբ
իրան յաջորդ էր ընտրել Պետրոսին: Սա իր բարք ու վարքի
և իմաստութեան համար մեծ հոչակ ստացաւ յունաց և
ուրիշ ազգերի առաջ, իսկ Գետադարձ կոչուեց այն պատ-
ճառով, որ մի անգամ յունաց Վասիլ կայսեր խնդրելով
ջրօրհնէքի օրը Հայաստանեայց եկեղեցու ծիսով հանդէսը
կատարելու ժամանակ, եղբ կենաց վայտով ջրին խաչա-
կնքում է, ջուրը կանգնում է և այստեղի վրայ երկնքից
լոյս է իշնում և փայլում, Կաթողիկոսը կայսրից մեծամեծ
պարգևներով վարձատրուած վերադառնում է Հայաստան:

Պետրոս Գետադարձը, որ իր կենաց մեծ մասն անց էր
կացնում զանազան տեղեր, վերագանալով Անի, տեսնում
է, որ երկար ժամանակուայ բացակայութեան պատճառով
ազգի մէջ մեծ տրտունջ է ծագել, ստիպուած է լինում
զնալ վասպուրական և թէպէտ թագաւորի և իշխանների
խնդրանօք, կրկին հրաւիրւում է Անի՝ շարունակելու իր կա-
թողիկոսական պաշտօնը, սակայն քաղաք չմտած Յովհան-
նէս թագաւորի հրամանով Բջնայ բերդի մէջ արգելում է
իբրև կալանաւոր: Այդ ժամանակ Սանահնու վանքի առաջ-
նորդ Դէսկորոսը թագաւորի հրամանով ընտրւում է կա-
թողիկոս, որի պատճառով ժողովրդի մէջ երկպառակու-
թիւն ընկնելով 1036 թ. Անի քաղաքի մէջ գումարւում է
մի մեծ ժողով 4000 հոգերական և աշխարհական անձինք-
ներից, ուր գտնուում է և Աղուանից Յովհանի կաթողիկո-
սը իր եպիսկոպոսներով: Ժողովը՝ Դէսկորոսին պաշտօնից
հրաժարեցներով իբրև հակաթոռ, Պետրոս Գետադարձն
կրկին հրաւիրում է կաթողիկոսական պաշտօնը վարելու,
ազատելով բանափառ, մի տարի և հինգ ամիս մնալուց յետոյ:

Պետրոս իր կաթողիկոսութիւնն սկսեց վարել շատ
գերազ ժամանակներում, որովհետեւ նոյն 1036 թ. Դըլ-
նայ Աղուանի ստիկանը պարսից թագաւորի օգնու-

թեամբ յարձակուելով հայերի վրայ, սկսեց եկեղեցիներն այրել, եկեղեցական սրբութիւններն անպատռել: Հայերը՝ իրանց կրօնի ազատութիւնը պաշտպանելու համար, մեծ ոյժով ընդդիմանում են՝ աշխարհականները զէնքով, իսկ հոգեորականները խաչով և աւետարանով: Այդ տագնապալից ժամանակում յունաց Միքայէլ կայսրը լսելով Յովհաննէս թագաւորի մահը, դեսպան է ուղարկում և պահանջում է Անի քաղաքը՝ Յովհաննէսի ձեռագիրը դաշնագրի համաձայն, սակայն հայերը ընդդիմանում են, որի պատճառով սկսում է արիւնահեղ կոհիւներ և սարսափելի կոտորածներ: Հայոց նախարարները Վահրամ սպարապետի խորհրդով 1042 թ. ազգի հաւանութեամբ և Պետրոս կաթողիկոսի ձեռքով Յովհաննէս թագաւորի Աշոտ եղբօրորդի 17-ամեայ Գագիկին թագաւոր են օծում: Յոյները Գագիկից ևս պահանջում են Անին, և երբ սա էլ է ընդդիմանում, կայսրը Գագիկին կանչում է Պոլիս՝ Անի քաղաքի դաշնագրերը յանձնելու համար: Գագիկ չի կամենում գնալ, սակայն ազգի գաւաճան վեստ Սարգիսը յորդուում է նախարարներին և Պետրոս կաթողիկոսին՝ կայսեր աւելի չգրգռելու համար թագաւորին համոզել Պոլիս գնալու: Գագիկ գնալով Պոլիս և կայսեր առաջ պաշտպանելով իր իրաւունքը Անիի վերաբերմամբ, իբրև կալանաւոր աքսորւում է մի կղզի: Այս լուրը երբ Հայատան է հասնում, կաթողիկոսը և նախարարները փոխանակ պաշտպանելու իրանց թագաւորին, վեստ Սարգսի ձեռքով Անի քաղաքի 40 բանալիները ուղարկում են կայսեր:

Այսպէս հայոց մեծահոչակ Անին անցնում է յունաց ձեռքը, որով և բարձւում է Բագրատունեաց ցեղի թագաւորութիւնը, որ տեսք միայն 160 տարի:

Յոյները Անիի թագաւորութիւնը վերջացնելուց յետոյ սկսում են աշխատել որ կաթողիկոսութիւնն էլ վերջաց-

նեն: Այդ նպատակին հասնելու համար Պետրոս կաթողիկոսին կալանաւորում են, որպէս թէ նա հայերին ապըստամբեցնում է. իսկ Խաչիկ եպիսկոպոսին՝ որ համարում էր տեղակալ, ուղարկում են Սեաւ-քար: Մի քանի ժամանակից յետոյ կաթողիկոսին կայսեր հրամանով տարան Պոլիս, իսկ Խաչիկին էլ Անի: Կաթողիկոսը երեք տարի մնաց Պոլիս, յետոյ Գագիկ թագաւորի խնդրանաց համաձայն թոյլաւութիւն ստացաւ գնալ Սերբատիա, ուր հինգ տարուց յետոյ վախճանուեց և թաղուեց տեղոյն ս. Նշանի վանքում, 40 տարի հայրապետական իշխանութիւնը վարելուց յետոյ:

Սա գրեց զանազան ճառեր և շարականներից՝ մարտիրոսաց, հանգստեան և «Մանկունք» ասուած շարականները:

30.

Խ Ա Զ Ի Կ Բ. Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս

Պետրոս Գետաղարձին յաջորդում է Անիում իր տեղակալ և քեռորդի Խաչիկ Բ. 1058 թ., որի կաթողիկոսութեան ժամանակ յունաց կոստանդին կամ Տուկիծ առուանուած կայսրը սկսեց շատ նեղել հայերին: Գրաւեց կաթողիկոսի թողած կալուածներն ու ստացուածները, կանչեց Պոլիս կաթողիկոսին և պահանջեց նրանից այն բոլոր գանձերը, որ իբրև թէ Գագիկ թագաւորը և Պետրոս կաթողիկոսը թողել են նրան օտա: Երբ ոչինչ չըգտան, ստիպեցին որ կաթողիկոսը իւրաքանչիւր տարի հարկ տայ կայսեր: Կաթողիկոսը չհամաձայնելով այս բանին, երեք տարի արգելուում է Պոլսում:

Յունաց կայսրութիւնը, որ անիրաւաբար գրաւեց Հայաստանը, փոխանակ պաշտպանելու, ամեն ջանք գործ էր

դնում հայերին դաւանափոխ անելու, ուստի և կրօնական խնդիրների մասին կայսրը կանչեց Փռքը Հայոց իշխանական Սենեքերիմ թագաւորի որդոց, որոնք իմանալով կայսեր նպատակը՝ հետները տարան գիտնական կարծեցեալ ոմն Յակոբ վարդապետին. սա կայսեր հաճոյանալու համար ընդունելով նրա առաջարկութիւնը, բոլոր հայերի կողմից ստորագրութիւն է տալիս յունադաւան լինելու Գագիկ լսելուն պէս գնում է Պօլիս, ներկայանում է կայսեր և ապացուցանելով Յակոբ վարդապետի տուած թղթի ապօրինութիւնը, առնում է և պատռում այդ ստորագրութիւնը և ինքը գրելով մի դաւանաբանական թուղթ Հայոց եկեղեցու ուղղափառութեան վերաբերութեամբ, կարդում է յոյն կղերի առաջ՝ ամենայն իմաստութեամբ պաշտպանելով Հայոց եկեղեցու ուղղափառ դաւանութիւնը:

Այնուհետև կրօնական վէճերի առիթով հայերի և յոյների միջև ծագած ատելութիւնը այն աստիճան սաստկացաւ, որ արքունիքից տարածուեց բոլոր դաւաները. սկսեցին կոտորել միմեանց և ամեն կերպ իրար տանջել. Այդ կրօնական կուիւներից յետոյ կայսրը թոյլ տուեց Խաչիկ կաթողիկոսին երեքամեայ արգելանքից յետոյ վերադառնալ Փռքը Հայոց Զահան գաւառի Թաւբլուր գիւղաքաղաքը և ոչ Անի: Այդտեղ կաթողիկոսը լսելով Հայոց Աշխարհի կոտորածը և աւերմունքը, տրտմութիւնից հիւանդացաւ և վախճանուեց վեցամեայ կաթողիկոսութիւնից յետոյ,

Խաչիկ կաթողիկոսի մահից յետոյ, յոյները մի ամբողջ տարի յետաձգում էին հայոց կաթողիկոսի ընտրու-

թիւնը, որպէս զի կամաց-կամաց հայ ժողովրդին դարձնեն յունադաւան: Այս երկոյթը նկատելով Գաղիկ Արասեան կարսի թագաւորը՝ որ իւր թագաւորութիւնը յունաց յանձնելով, տիրում էր մի քանի քաղաքների ու գիւղերի, բազմաթիւ եպիսկոպոսների և վարդապետներիներկայութեամբ ժողով կազմելով 1065 թ. կաթողիկոս է ընտրել տալիս Գրիգոր Մագիստրոսի որդի Գրիգոր Վկայասէրին, որ ինքնակամ հրաժարուելով իշխանական փառքից և իր ամուսնուց, մտել էր կրօնական կեանքի մէջ: Սա ունեցաւ զանազան հեղինակութիւններ և շատ տօնելի սրբոց վարքագրութիւնը թարգմանելով, անուանուեցաւ Վկայասէր: Վեց տարի հայրապետական գահը վարելուց յետոյ, տեսնելով հայոց կրած նեղութիւնները յունաց և պարսից ձեռքից չկարողանալով տանել այդ վիշտը, հայ իշխանների ցանկութեան համաձայն կաթողիկոս է օծում Լուսեցի Գէորգ կութեան գաղաքանականում է Սեաւ լեռան մեջ վարդապետին և ինքն առանձնանում է Եղաւ լեռան մեջ պատահան գահը՝ պահպանելու ազգը զանազան խոռվութիւններից: Իր կենդանութեան ժամանակ Անի քաղաքում կաթողիկոսական տեղապահ դրաւ իր քեռորդի Տէր-Բարկաթողիկոսական մելին և յետոյ ազգի խնդրանօք վերին Հայաստանում կաթողիկոս կարգեց. սակայն իր կենդանութեան ժամանակ ամբողջ հայ ազգի կաթողիկոսը համարւում էր ինքը՝ Գրիգոր Վկայասէրը, որ քառասուն տարի վարելով հայրագութեց 1105 թ.: Նրան պետական իշխանութիւնը վախճանուեց 1105 թ.: Նրան յաջորդեց Տէր-Բարսեղը: Այս ժամանակից սկսած հայերը գաղթեցին Կիլիկիա, ուր փոխադրուեց և կաթողիկոսական Աթոռը:

Բարսեղ հայրապետի մահից յետոյ, կաթողիկոս է ընտրում Գրիգոր Գ. վարդապետ Պահլաւունին, Սպիրատիշխանի որդին՝ քսան տարեկան հասակում. միևնույն օրը ձեռնադրում է եպիսկոպոս և կաթողիկոս (1113 թ.), թէպէտ սրա կաթողիկոսանալուն հակառակ էր Դաւիթ Աղթամարայ եպիսկոպոսը, որ իր կուսակցութիւնը գորացնելով օծուեց կաթողիկոս և նստեց Աղթամար, որպիսի Աթոռ մինչև այսօր գոյութիւն ունի, սակայն Գրիգոր Գ. օրինաւոր ժողով գումարեց Սևաւլեռուան Կարմիր վանքում և անվաւեր հրատարակելով Դաւիթի կաթողիկոսութիւնը, ինըը հաստատուեց կաթողիկոսական իշխանութեան մէջ և Աթոռը զանազան տեղեր փոխադրելով, վերջին անգամ 1146 թ. գնաց Հռոմէլայ քաղաքը և այնտեղ հաստատեց Հայրապետական Աթոռը:

Մինչ Գրիգոր Գ. եկեղեցու պայծառութեան և ժողովրդի բարոյական կրթութեան մասին էր մտածում, արևմուտքից սկսուեց մի արշաւանք, որ յայտնի է «Խաչակրաց արշաւանք» անունով, որի նպատակն էր Երուսաղէմի ազատել մահմեդականների բռնակալութիւնից:

Խաչակրաց արշաւանք կազմողներն էին Հռովմայ պապերը, որոնց նպատակն էր Երուսաղէմը ազատելու պատրուակով իրանց գերիշխանութիւնը տարածել և արևելեան քրիստոնէից վրայ: Սակայն յոյները միանդամայն հակառակ լինելով այդ բանին, ամեն ջանք գործ են զնում խափանել այդ արշաւանքը: Հայերը, որ այդ ժամանակ Փոքր-Ասիայում և Կիլիկիայում նշանաւոր տեղ էին բռնում և Ռուբինեանց թագաւորութեան հիմն էին զրել, յունաց հակառակ վարուելով, ամեն կերպ օգնութիւն են տալիս

Խաչակրաց արշաւանքին, կարծելով թէ դրանով կ'ազատուին յոյների և մահմեդականների մոլեռանդութիւնից: Սակայն սխալուեցին, որովհետև այդ ժամանակն էլ Հռովմայ պապերն էին աշխատում արևելեան քրիստոնեաներին ի մի ձուլել կաթոլիկութեան հետ և մանաւանդ հայերիս ազգային առանձնայատկութիւնները չնշել, օգուտ քաղելով մերոնց ցոյց տուած մտերմութիւնից: Այս արշաւանքում պատերազմ է կոչւում նրա համար, որ քը խաչակրաց պատերազմ է կոչւում: Յիշեալ արշաւանքների ժամանակը խաչ էին կրում: Յիշեալ արշաւանքների ժամանակը սկսվում էր, միլիօնակ, որ երկար տարիներ անընդհատ կրկնում էր, միլիօնաւոր զոհեր եղան քրիստոնեայ ժողովրդի կողմից, սահայն Երուսաղէմը և սուրբ գերեզմանը դարձեալ միաց մահմեդականների ձեռքը:

Գրիգոր Պահլաւունի կաթողիկոսի ժամանակ նորից սուրբ կերպարանք առաւ հայոց եկեղեցու միութեան խընդիլը յունաց հետ:

Գրիգոր կաթողիկոսը յիսուն և երեք տարի վարելով հայրապետական իշխանութիւնը վախճանուեց և թաղուեց Հռոմէլայում:

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Երբ Կիլիկիայում կազմուեց հայկական նոր իշխանութիւն՝ «Ռուբինեան հարստութիւն» անունով, և Կիլիկիան դարձաւ հայկական մի մեծ գաղթավայր, Հայրապետիկան դարձաւ հայկական մի մեծ գաղթավայր, Հայրապետիկան Աթոռն էլ, ինչպէս ասուեց վերը, տեղափոխուեց տական Աթոռն էլ, ինչպէս ասուեց վերը, տեղափոխուեց այնտեղ: Բուն Հայաստանում մնացածները կոչւում էին Արևելեան հայք, իսկ դէպի արևմուտք և Կիլիկիա գաղթած-Արևելեան հայք, Արևելեան հայք: Արևելեան հայք թանգ գնահաները՝ Արևմտեան հայք:

տելով իրանց ազգային եկեղեցու ինքնուրոյնութիւնը՝ չէին կամենում որևէ ուրիշ եկեղեցու հետ միանալ, իսկ Արևմտեան հայք, յատկապէս Պահլաւունի կաթողիկոսները, ձգտում էին միութեան:

Տասներկուերրոդ դարում իր սրբակրօն և առաքինի կեանքով փայլում է Ներսէս Կայեցին, որ իր իմաստալից գրուածքների համար անուանուեց Շնորհալի: Գրիգոր Պահլաւունի կաթողիկոսը խորին ծերութեան համնելով, Հոռմկլայում ժողովականների համաձայնութեամբ Ներսէս Կայեցուն, որ իր եղբայրն էր, առաջարկեց ընդունել կաթողիկոսութիւնը: Ներսէսը սկզբում յանձն չէր առնում այդ վսեմ պաշտօնը, շատ բարձր համարելով իւր արժանաւորութիւնից, բայց ժողովականների միահամուռ ցանկութեան առաջ խոնարհելով, ակամայից յանձն առաւ իւր եղբօր ձեռքից ընդունել կաթողիկոսութիւնը 1166 թ. իսկ Գրիգորը երեք ամսից յետոյ վախճանուելով Հայրապետական Պահի իշխանութիւնը թողնում է Ներսէսին:

Չնայելով որ նորընտիր հայրապետի առաջ դրուած էր յունաց եկեղեցու հետ միութեան մեծ և աղմկալից խնդիրը, որի դէմ պարտաւոր էր միշտ մաքառելու, այնուամենայնիւ նախ և առաջ իր մեծ ուշադրութիւնը դարձեց Ազգի և Եկեղեցու ներքին գործերի վրայ:

Ներսէսը գրեց մի «Ընդհանրական» կոնդակ՝ Աստուածային հոգով և լի իմաստութեամբ. նա իր քաղցր և ազդու խօսքերով ու յորդորներով խրատում է Եկեղեցու առանձին-առանձին դասակարգերին՝ իւրաքանչիւրին հասկացնելով իր պարտականութիւնը առ Աստուած, առ Ազգն և Եկեղեցին, յորդորելով ամենքին միաբան սիրով դէպի գործունէութիւն:

Ներսէս Շնորհալին չբաւականացաւ իր հայրապետական ներքին գործերի բարեկարգութիւններով, այլ թողեց նաև շատ գրաւոր աշխատութիւններ, այն է՝ շատ հոգելից

երգեր ու շաբականներ. Հայոց համառօտ պատմութիւն, մի չափաբերական գրուածք, որ կոչվում է «Յիսուս Որդի» և այլ գրուածքներ:

Ապա զբաղուեց յունաց կողմից առաջարկուած՝ եկեղեցիների միութեան խնդրով, որ սկիզբն էր առել դեռ իր նախորդի ժամանակ: Ներսէս յաջորդելով իր եղբայր Գրիգոր Պահլաւունուն, զանազան նամակներ գրեց յունաց Մանուէլ կայսեր և Միքայէլ պատրիարքին՝ ներկայացնելով նըրանց Հայոց եկեղեցու դաւանութիւնը: Կայսրը և պատրիարքը սիրտ առնելով ներսէսի նամակներից՝ պատգամաւոր ուղարկեցին նըրա մօտ, որոնք եկան Հոռմկլայ և Երկար խօսեցին հաւատի և եկեղեցու արարողութիւնների վրայ, որի միջոցին պարզուեց մի քանի թիւրիմացութիւններ, որ երկու եկեղեցիների մէջ վէճերի առարկայ էին գարձել զարերի ընթացքում: Պատգամաւորները Հայ եկեղեցու դաւանութեան և եկեղեցական կարգերի մասին մէջ իմաստուն Հայրապետը գրում է թէ առանց առելեան եպիսկոպոսների և ժողովրդի համաձայնութեան, անկարող է միութեան գործին վերջ տալ միմիայն Միջանկարող է միութեան գործին վերջ տալ միմիայն Միջանկարող է միութեան գործի յաջորդութիւնը, Հայաստանի բոլոր եպիսկոպոսների խորհրդով: Յոյները հաւանութիւն տուին: Կայսրը և Կ. Պօլսիյոյն պատրիարքը ևս միութեան գործը ի կատար ածելու համար թուղթ ուղարկեցին: Այս միջոցին Ներսէս Շնորհալի կաթողիկոսը նկատելով գործի յաջորդութիւնը, Հայաստանի բոլոր եպիսկոպոսներին միաբան ժողովով նամակներ գրեց և խնդրեց նըրանց համաձայնութիւնը այս խնդրում: Սակայն դեռ պատասխան չստացած՝ վախճանում է 1173 թ. 75 տարեամսին կան հասակում, եօթը տարի վարելով իր իշխանութիւնը, և Եկեղեցիների միութեան խնդրիրը մնում է անկատար:

բոլոր եպիսկոպոսները տաճում են եկեղեցի և օծում կաթողիկոս։ Մեր եկեղեցին Շնորհալուն դասեց սրբոց կարգը։

34.

ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ

Գրիգոր կաթողիկոսը՝ մականուանեալն Տղայ, յաջորդելով Շնորհալուն, հետեւց իր նախորդին՝ յունաց հետ միաբանական սէր և համերաշխութիւն ունենալու խնդրում։ հաստատեց եկեղեցական այն բոլոր կարգերը, ինչ որ սահմանել էր Շնորհալին։ Միութեան գործը ի կատար ածելու համար հայ եպիսկոպոսների հետ թղթակցութիւն անելուց յետոյ, Հռոմկլայում ժողով գումարեց 1179 թուին։ Այս ժողովում Տարսոնի եպիսկոպոս Ներսէս Լամբրոնացին, որ բոլոր քրիստոնեայ եկեղեցիների սիրոյ և հաշտութեան ջերմ պաշտպան էր, մի ազգու ատենաբանութեամբ կամենում էր ցոյց տալ անմիաբանութիւնից առաջ գալիք վընամները և միաբանութիւնից՝ մեծամեծ օգուտները։ Այս խնդրի առիթով յունաց մետրօպօլիտները ևս ժողովք արին կ. Պօլառմ և առաջարկեցին հայոց՝ ընդունել Քաղկեդոնի ժողովը։ Կաթողիկոսը ժողով գումարելով՝ հաւանութիւն տուաւ այս առաջարկութեանը և միայն 33 եպիսկոպոսների ստորագրութեամբ ժողովի վճիռն ուղարկեց կ. Պօլիս յատուկ թղթատարներով, որոնք արգելիք հանդիպելով՝ կեսարիայից վերադարձան։ Երբ Գրիգոր Տղան պատրաստում էր նորից ժողովի վճիռն ուղարկել, լսուեց Մանուէլ կայսեր մահը, որով և միութեան խնդիրը դարձեալ մնաց անկատար։

Թէև կայսեր և պատրիարքի մահով միութեան խնդիրը մնաց առկախ, այնուամենայնիւ Հռոմկլայի ժողովի վճիռը

և Լամբրոնացու ատենաբանութիւնը մեծ դժգոհութեան առիթ էր առւել մանաւանդ Արևելեան հայերին։ Բուն Հայաստանցիք, այն է՝ Զորագետցիք, Սիւնեցիք, Շիրակեցիք և Սանահնեցիք, որսնց գլխաւորն էր Սանահնու վանքի վանահայր Գրիգոր Տուտէրդին, միութեան մասին լսել անգամ չէին կամենում։ Գրիգոր Տուտէրդին մի շատ համարձակ նամակով յանդիմանում է Գրիգոր կաթողիկոսին և նրա բոլոր խորհրդակիցներին։ Արևելեան Հայք այլհս չէին ցանկանում Գրիգորին կաթողիկոս ճանաչել, այլ կամենում էին Անի քաղաքի Բարսեղ անունով մի եպիսկոպոս օծել կաթողիկոս։

Յունական եկեղեցու հետ միութեան խնդիրը առկախ մնալուց յետոյ ատելութիւնն աւելի ևս բորբոքուեց հայերի և յոյների մէջ նամանաւանդ այն ժամանակ, երբ հայերը համակրութիւն ցոյց տուին դէպի խաչակիրները, որովհետեւ Հայերը միութիւն ասելով հասկանում էին երկու եկեղեցիների քրիստոնէական սիրոյ միութիւն, իսկ յոյները Հայաստանեայց եկեղեցու ինքնուրոյնութեան ջնջում։ միութեան խնդիրը որքան յուզում էր, այնքան էլ ատելութիւնը երկու ազգերի մէջ սաստկանում էր։ Մրա հետ միասին և Հայաստանեայց եկեղեցու հարազատ զաւակների մէջ ևս առաջ էր գալիս մեծամեծ խոսվութիւններ ու երկպառակութիւններ։ Հայոց Լեռն իշխանը և Գրիգոր կաթողիկոսը խաչակիրներին ընդառաջ գնացին մինչև Սելևկիա քաղաքը և բերին կիլիկիա։ ուր և տալովնը բանց մեծ պաշար, սիրով հիւրընկալեցին։ Մրա համար Գերմանիայի Ֆրիդրիկոս կայսը հայոց կաթողիկոսին և իշխանին մեծամեծ խոստումներ է անում, բայց տակաւին եւրոպա չերադարձած՝ մեռնում է և բոլոր խոստումները մնում են անկատար։

Գրիգոր Տղան 20 տարի Հայրապետական իշխանութիւնը վարելուց յետոյ 1193 թ. վախճանուեց և թաղուեց

Հոռմկլայում իր նախորդների մօտ, որին յաջորդեց իւր եղբօրորդին Գրիգոր Ե. Գահավէժ կամ Քարավէժ անունով:

Սորակաթողիկոսութեանը եպիսկոպոսներից և իշխաններից ոմանք հակառակ լինելով, ամբաստանում են Աբան իշխանի մօտ և նա ստիպուած կաթողիկոսին արգելանոցի մէջ է դնում, մինչև որ նրա մասին եպիսկոպոսների ժողովը որոշումն անի, սակայն մինչև այդ ժողովի գումարելը Գրիգոր կաթողիկոսը կամենալով արգելանոցի պարսպի բարձրութիւնից փախչել, պարանը կտրւում է և ընկնելով քարերի վրայ, ջախջախւում է ու հոգին աւանդում, որի համար և պատմութեան մէջ յիշատակւում է «Քարավէժ» անունով:

ՇՐՋԱՆ Դ.

35.

(1441—1800 թ.)

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՓՈԽԱԴՐՈՒԻԼԸ ԵՒ ԿՐԿԻՆ ՀԱՅ-
ՏԱՏՈՒԻԼԸ Ս. ԷՃՄԻԱԾՆՈՒՄ, ԳՐԻԳՈՐ ՄՈՒՍԱԲԵԿԵԱՆ,
ԵՒ ԿԻՐԱԿՈՍ Ա. ՎԻՐԱՊԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ. ՊԱՏ-
ՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ:

Տասնեչորսերորդ դարու վերջումը Ռուբինեանց հարա-
տութեան վերջին թագաւորը Լեռն Զ. Լուսինեան՝ քանի
մի արիւնահեղ պատերազմներ վարելուց յետոյ, կալանա-
ռուում է արտաքին թշնամիներից. իսկ երբ ազատում
է Երուսաղէմի վրայով անցնում է Եւրոպա, շրջում է շատ
երկիրներ իր իշխանութիւնը վերականգնելու համար, բայց
չհասնելով իր նպատակին, վախճանում է Փարիզի մէջ
1393 թուին և թաղւում է Կելեստինեան վանքում, որով
և վերջանում է Ռուբինեանց թագաւորութիւնը:

Այդ ժամանակներում մի կողմից Ունիթոռները, իսկ
միւս կողմից Լանկթամուրեան արիւնալի արշաւանքները
չայստանի վրայ, վրդովում էին Հայոց եկեղեցուներքին
խաղաղութիւնը, որովհետեւ Ռուբինեանց թագաւորու-
թիւնը վերջանալուց յետոյ Հայաստանի վիճակը արդարե
մատնուում է վերջին թշուառութեան, Ունիթոռները ի-
րենց հետեղներ գտնելով Ուրմիոյ Ներսէս և Կարնոյ

Սիմէօն-Բէկ եպիսկոպոսներին, ամէն կերպ աշխատում էին լատինական նոր աղանդը տարածել Հայերի մէջ։ Նրանք հայ եկեղեցու խորհուրդները չընդունելով, այն է մկրտութիւնը և ո. պատարագը, երկբայելի էին համարում և մի անգամ մկրտուածին նորից մկրտում էին, եկեղեցականներին նորից ձեռնադրում և աշխատում էին հայ ժողովրդի մէջ տարածել այն գաղափարը, թէ առանց կաթոլիկ եկեղեցու չկայ հոգու փրկութիւն։ Սրանց գըլխաւոր գործիչները մեծ եռանդով հայ եկեղեցու դէմ ամէն տեսակ յարձակումներ էին գործում, իսկ Հայոց եկեղեցին այս հակառակորդների դէմ խօսքով և գրութիւններով կռւում էր երկու քաջ ախոյեանների ձեռքով, որոնք էին Յովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին։ Սրանց մեր եկեղեցին դասեց սրբոց կարգը։

Պակաս ազգեցութիւն չունեցաւնաև այն հանգամանքը, որ վերջին մի քանի կաթողիկոսներ ընտրւում էին առանց ազգի հաւանութեան, որով և Կիլիկիայի Հայրապետական Աթոռը խոպառ համարւում էր օտարացած։ Սրա համար շատ ցաւում էին առաւել ևս Արևելեան հայերը, ուստի մտածեցին հայրապետական Աթոռը կրկին փռխագրել Վաղարշապատ—ս. Էջմիածին *):

Յովհէփ Գ.ի կարճօրեայ կաթողիկոսութիւնից յետոյ Գրիգոր Մուսաբէկեանց 1400 թուին ընտրւում է կաթողիկոս և մի օրուայ մէջ ձեռնադրում է հինգ եպիսկոպոս առանց ազգի ընտրութեան։ Կիլիկիայի միւս եպիսկոպոսները լսելով այս զեղծումն, բողոքում են Արևելեան հայե-

*) Արշակունեաց թագաւորութեան անկումից յետոյ պարսից և յունաց արշաւանքների ժամանակ Հայրապետական Աթոռը փոխադրուեց Դըլին։ Բագրատունեաց թագաւորութեան օրով Դըլինից փոխադրուեց Սսի, իսկ Բագրատունեաց անկումից յետոյ մնաց աստանդական, և երբ զօրացան Ռուբինեանք, 1294 թուին հաստատուեց Սիս մայրաքաղաքում։ Յանք յամբուծած ըստ

թին և խնդրում, որպէսզի հոգ տանեն Հայրապետական Աթոռի վրայ, որ այդ ժամանակ իսպառ անշքացած էր վերջին միքանի փառասէր և շահամոլ կաթողիկոսների շնորհիւ։ Արևելեան հայերն ու առաջնորդները վաղուց ծանօթ լինելով կաթողիկոսութեան տիսուր վիճակին, երբ ստանում են բողոքագիրը, իսկոյն միաձայն խորհրդով վաղարշապատում ժողով կազմելով թուով մօտ 700 հոգի՝ եպիսկոպոսներ, վարդապետներ և երէցներ, թուղթ են գըրում Գրիգոր կաթողիկոսին և հրաւիրում են գալ և նստել ա. Էջմիածնում, բայց նա չի ընդունում ազգի հրաւէրը։ Ազգը 1441 թուին գումարելով առաւել մի բազմամարդ ժողով ընտրում է կաթողիկոս Կիրակոս Վիրապեցուն, որ միենոյն օրը օծուեց եպիսկոպոս և կաթողիկոս։ Սա Աթոռը փոխադրեց Սսից ս. Էջմիածին։ Սյդ ընտրութեանը հաւանութիւն ցոյց տուաւ Աղթամարայ Դաւիթ կաթողիկոսը իր բոլոր եպիսկոպոսներով և այնուհետև թէպէտ Սսի Աթոռը ճանաչուեց իբրև հակաթոռ, բայց այնուամենայնիւ չդադարեց մինչև այսօր սոյն տեղի մասնաւոր կաթողիկոսութիւնը։ Եւ երբոր Հայաստանեայց եկեղեցու Հայրապետական աթոռը կրկին ս. Էջմիածին փոխադրուեց և Կիրակոս Վիրապեցին կաթողիկոսացաւ, Գրիգոր Մուսաբէկեանց ևս մնաց կաթողիկոս Սսի մէջ։ Սյսպիսով ազգը երեք կաթողիկոսական աթոռներ ունեցաւ, այն է՝ ս. Էջմիածնի, Սսի և Աղթամարայ. սակայն ս. Էջմիածնի Աթոռը համարւում է «Ամենայն Հայոց Աթոռ», իսկ Սսի և Աղթամարայ աթոռները՝ մասնաւոր։ Կիրակոս Վիրապեցին՝ ս. Էջմիածնում կաթողիկոսական օծումն ընդունելուց յետոյ, զանազան շըջաբերական կոնդակներ է ուղարկում հայոց բոլոր եպիսկոպոսներին, նոյնպէս Սսի և Աղթամարայ կաթողիկոսներին՝ ազգի մէջ աէր և միաբանութիւն հաստատելու համար և ապա Թոմա Մեծոփեցի վարդապետի գործակցութեամբ ըստ ամենայնի

Կարգաւորում է Հայրապետական Աթոռը, Նորոգում է ս-
էջմիածնում ս. Հոփիսիմէի և այլ հինօրեայ վանքերն ու
եկեղեցիները։ Երբ կաթողիկոսը զբաղուած էր այսօրինակ
բարի գործերով, յանկարծ միքանի եպիսկոպոսներ և վա-
նականներ զբարարելով նրան իբրև կախարդ և հերձուա-
ծող, չարախօսեցին երեանի իշխողի առաջ, Եւ երբ մօտ
երեսուն չարախօս անձինք յարձակուեցին և կամենում էին
գահընկց անել կաթողիկոսին, նա վախաւ թաքկացաւ և
ապա իր երկամեայ կաթողիկոսութիւնից յետոյ հրաժա-
րուեց և սկսեց առանձին կեանք վարել։ Նրա տեղ կարգ-
ւում է՝ առանց ազգի հաւանութեան Գրիգոր Փ. Մակուե-
ցի, որ իր կաթողիկոսութեան ժամանակ շարունակեց կի-
րակոս Վիրապեցու սկսած բոլոր բարի գործերը, նորոգեց
ս. էջմիածինը, հարստացրեց նրան՝ զանազան կալուածք-
ներ ձեռք բերելով։ Գրիգոր Փ. կաթողիկոսութեան օլով
Օամանցիք տիրում են կ. Պոլսին և Սուլթան Մեհմէնէդ
Ֆաթիի արքունի հրովարտակով Պուրսայի Յովակիմ եպիս-
կոպոսը կարգւում է պատրիարք տիտղոսով առաջնորդ, որով
և 1461 թուից սկսւում է կ. Պոլսում Հայոց պատրիար-
քութիւնը, որ տեսում է մինչև հիմա։

36.

ՄՈՎՍԵՍ Գ. ԵՒ ՓԻԼԻՊՈՂՈՍ ԱՂԲԱԿԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

Մահակ Գ. Ա. Մելքիսէթ կաթողիկոսի եղբօր որդին
1624 թուին պարսից հարկապահան ջութիւնից ընկնելով
մեծ պարտքի տակ, թաքուն վախաւ վան քաղաքը, ուր
մնաց հինգ տարի, Այդ միջոցին ազգը լսելով էջմիածնի
փակակալ Մովսէս Գ. ի համբաւը, որ արդէն տարածուել
էր ամենայն տեղ, միաձայն հաւանութեամբ ընտրեցին
կաթողիկոս և նա խոնարհուելով ամբողջ ազգի թախան-

ձագին խնդրանաց 1629 թուին ընդունեց կաթողիկոսա-
կան ս. օծումը, Բայց որովհետև այդ միջոցին վախճա-
նուած էր պարսից Շահաբաս թագաւորը և նրան յաջոր-
դել էր Շահ Սէֆի, ուստի հայ իշխանները կանչում են
նրան Ասպահան քաղաք և թագաւորից ստանում են Մով-
սէսի կաթողիկոսութեան հաստատութեան հրովարտակ. մի-
անգամայն և ազատութիւն արքունական ամեն տեսակ
հարկերից, որով ս. էջմիածինը ազատուեց պարտքերից և
Մովսէս կաթողիկոսը դարձաւ իր Աթոռը՝ վարելու իր Հայ-
րապետական ծանր պաշտօնը։

Մահակը 1630 թուին լսելով Մովսէսի կաթողիկոսա-
կան աշխատեց իր կաթողիկոսական իշխանութիւնը վա-
րել Օսմանեան տէրութեան մէջ, բայց յաջողութիւն չու-
նեցաւ. ուստի խոնարհուելով Մովսէսի առաջ հրաժար-
ւեց Աթոռից և առանձնացաւ ս. էջմիածին մինչև իր
մահը։

Մովսէս Գ. ս. օծումն ընդունելուց յետոյ զբաղուեց
ս. էջմիածնում վայելուշ շինութիւններ անելով և ներ-
քին բարեկարգութիւններով, հաստատեց և բարեկարգեց
ս. էջմիածինը, եկեղեցական ժամակարգութիւնն ընդար-
ձակեց։ Երեքևելէս տարի միայն վարելով կաթողիկոսական
իշխանութիւնը՝ վախճանուեց Երեանում և թաղուեց տե-
ղոյն գերեզմանոցում 1632 թ., որի մահից յետոյ ընտր-
ւում է կաթողիկոս նրա աշակերտ Փիլիպպոս Աղբակե-
ցին։

Փիլիպպոս վարդապետ Աղբակեցին, որ մի սրբակրօն
և խաղաղասէր հոգևորական էր, կաթողիկոսական ս. օ-
ծումն ընդունելուց յետոյ, հոգ տարաւ իր նախորդի սկը-
սած գործերը վերջացնելու. էջմիածնի աւերուած շինու-
թիւնները և ս. Հոփիսիմէի ու ս. Գայիանէի վանքերը, որ

կիսաւեր էին՝ նորոգեց։ Այդ ժամանակներում մեծ խռովութիւն էր ծագել կ. Պօլսում, ուր պատրիարքական Աթոռը խլում էին միմեանց ձեռքից։ Նոյնիսկ աշխարհականները ձգտում էին բարձրանալ պատրիարքական Աթոռ՝ մեծ-մեծ գումարներ վատնելով, որով եկեղեցին ընկնում է ծանր պարտքերի տակ։ Փիլիպոս կաթողիկոսը առաջ գնաց Երուսաղէմ, ուր ժողով գումարելով Եպիսկոպոսներից ու վարդապետներից, սէր և մտերմական յարաբերութիւն հաստատեց Էջմիածնի ու Սսի կաթողիկոսական Աթոռների միջև։ Ապա զնաց Պօլիս ուր ազդուքարողներով նոր պատրիարք կարգելով այնուեղ ոմն Յովհաննէս Մուղնեցի վարդապետին և բոլորովին հաշտեցնելով, ազգային և եկեղեցական գործերին առուց կանոնաւոր ուղղութիւն։ Փիլիպոսի Տաճկաստան եղած ժամանակ Լեհաստանի Նիկոլեպիսկոպոսը, որ եպիսկոպոսական կոչումից զրկուած էր իր նախորդ Մովսէս կաթողիկոսից, դիմեց կաթողիկոսին և խորամանկութեամբ ստացաւ հայրապետից ներումն, ապա դառնալով Լեհաստան, սկսեց աւելի դաւանափոխութեան առիթ տալ ժողովրդին։ Հայերը թէպէտ երկար ժամանակ մեծամեծ հալածանքների ենթարկուելով ընդդիմացան, սակայն շատերը ձուլուեցին կաթոլիկութեան մէջ, իսկ Նիկոլ 53 տարի մնալով հայ ժողովրդին մոլորեցնող, մեռաւ ամէնքից արհամարհուած և ատուած։ Եւ այսպէս Փիլիպոս կաթողիկոսը կ. Պօլսում խռովութիւնները դադարեցնելով, եկեղեցիների պարտքերը վճարելով, առատաձեռն նուէրներ ժողովեց և 1654 թուին վերադարձաւ։ Էջմիածնին ու սկսեց Էջմիածնի զանգակատունը շինել, բայց դեռ չաւարտած 1655 թ. վախճանւում է 22 տարի Հայրապետական իշխանութիւնը վարելուց յետոյ և թաղում է ս. Հուիփսիմէի վանքում։

37.
ՅԱԿՈԲ ԶՈՒՂԱՅԵՑԻ ԵՀ ԵՂԻՍԶԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

Փիլիպոսի մահից յետոյ կաթողիկոս է ընտրւում ս. Էջմիածնում Յակոբ Դ. Զուղայեցին և 1656 թուին օծւում է։ Սա իր նախորդի ժամանակուայ սկսած բոլոր գործերն ու շինութիւնները վերջացրեց, շատ վայելուչ կերպով պատրաստեց կաթողիկոսարանը և նորանոր շէնքեր աւելացրեց, հայկական գրքերի տպագրութիւնը ծաղկեցրեց, իսկ Մատթէոս Ծորեցի սարկաւագին ուղարկելով Ամստերդամ և հմուտ արուեստաւորների ձեռքով գեղեցկացրեց տառերի ձևը։ Յակոբի կաթողիկոսութեան ժամանակ կրկին նորոգւում է Պօլսոյ պատրիարքական Աթոռի խոռովութիւնները, որովհետև Օսմանեան տէրութեան հրովարտակների համաձայն աշխարհական անձինք ևս պաշտօն էին վարում տեղակալ անունով։ Այդ խռովութիւնների ժամանակ Այսթապցի Եղիազար վարդապետը, որ երբեմն Պօլսոյ պատրիարք էր, կարգւում է Երուսաղէմի պատրիարքութեան փոխանորդ։ Սա հետաքրքրուելով Երուսաղէմի սուրբ Յակոբեանց վանքի յիշատակարաններով և տեսնելով, որ յոյները ամեն կերպ աշխատում են տիրել տեսնելով, Յակոբայ վանքին և յափշտակել Հայոց նուիրական ուխտատեղին, յաջողեցնում է յոյներին յաղթել։ Բայց նրա ցանկութիւնն էր ոչ միայն պատրիարքութիւնն ստանալ, այլև Օսմանեան տէրութեան մէջ ընակուած հայերի վրայ կաթողիկոս լինել։ Սակայն այդ չէ յաջողում, որովհետև թէպէտ Սսի Խաչատուր կաթողիկոսի միջոցով օծւում է, բայց Երուսաղէմի Աստուածատուր պատրիարքը իսպառ մերժում է նրան։

Յակոբը զնալով Պօլիս և իմանալով Եղիազարի վարձունքը, գնում է այնտեղից Աղքանուապոլիս, խափանում է

Եղիազարի հաստատութեան հրովարտակը և ինքը՝ իշխանութիւնից նոր հրովարտակ ստանալով իրան համար որպէս կաթողիկոս ամենայն Հայոց, վերադառնում է ս. Էջմիածին:

Այս ժամանակներում նորոգուեց դարձեալ երուսաղէմի և Պօլսոյ աթոռների շփոթութիւնները: Յակոբ կաթողիկոսը 1679 թ. կրկին անգամ գնաց Էջմիածին Պօլիս և առանձին նամակով հրաւիրեց Եղիազարին, որպէսզի խաղաղութիւն ձգէ երկու Աթոռների մէջ, Սակայն Զատկի տօների պատճառով Եղիազարը ուշացաւ և երբ տօներից յետոյ ուղևորուեց, Յակոբ կաթողիկոսը հիւանդացաւ և վաճանուեց ու թաղուեց Բերայի հայոց գերեզմանատանը՝ Հայրապետական Աթոռը 25 տարի վարելուց յետոյ: Մրանից յետոյ Եղիազարը կրկին գնաց Երուսաղէմ և համարձակ կերպով սկսեց վարել կաթողիկոսական իշխանութիւնը Երուսաղէմի մէջ յատուկ մի եկեղեցի շիներով և անուանելով նրան Էջմիածին:

Յակոբ կաթ. մահից յետոյ ս. Էջմիածնի Աթոռը երկու տարի մնաց պարապ. ապա Էջմիածնի միաբանութեան խորհրդով և Երևանի պարսից իշխանի հաճութեամբ հրաւիրեցին Եղիազարին ս. Էջմիածին՝ կաթողիկոսական պաշտօնը վարելու համար, և սա գնալով կ. Պօլիս, ստացաւ հրովարտակ և գնաց ս. Էջմիածին, ուր ձեռնամուխ Եղաւդանագան շինութիւնների և նորոգութիւնների: Եղիազարը՝ ինը տարի վարելով Հայրապետական Աթոռը վախճանւում է 1691 թուին:

38.

Սիմէօն երեհանջի եկ ջոհկաս կԱՐՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

Շամախեցի Յակոբ Ե. կաթող. մահից յետոյ ս. Էջմիածնի մէջ դուժարուած ժողովով և աղգի ցանկութեամբ

ընտրւում է կաթողիկոս Սիմէօն Երևանցին և օծւում է 1763 թ. ապրիլի 20-ին. Սա իր ընտրութիւնից յետոյ անմիջապէս թուղթ է գրում Տաճկահայաստանի ազգայիններին և յայտնում է նրանց և նրանցից ևս ստանում է հաւանութիւն իր ընտրութեան մասին: Սիմէօնի նշանաւոր գործերի թւում կարելի է համարել և այն, որ նրան յաջողուեց՝ ի թիւս նրա զանազան օգտակար շինութիւնների, ս. Էջմիածնում տպարան հաստատել և տօնացոյց սահմանել, որպէսզի Աղքը Լատինահայոց տօնացոյցներից ազատ մնայ. շինել տուաւ նաև թղթի գործարան և այդ գործարանից ստացած թղթով տպագրում էր թէ տօնացոյցը, թէ ուրիշ օգտակար գրքեր և թէ իր հեղինակութիւնները: Եւ ապա ներքին զանազան կնճռուտ խնդիրներին վերջ տալուց յետոյ, ձեռք զարկեց և ուրիշ նշանաւոր շինութիւններ անելու, այն է՝ Վաղարշապատ գիւղը բաւական հեռաւորութեամբ վանքից զատեց, գիւղում շինեց ծխական եկեղեցի, վանքը շրջապատեց ամուր և ընդարձակ պարիսպներով, շինեց սեղանատուն, միաբանութեան սենեակներ և վերջապէս Էջմիածինը հարստացընց նոր կալուածքներ ձեռք բերելով: Նա նոյնպէս կարգադրեց, որ մեծի պահոց մէջ ս. Յովհաննէս Երևանակէմի հայրապետի և ս. Յովհաննէս Օձնեցու հետ տօնեն Յովհաննէս Որոտնեցու, Գրիգոր և Մովսէս Տաթևացու յիշատակնէս Ուրեմ, իբրև քաջախոյեանների ընդդէմ Ունիթոռների: Կաները, մասնաւոր կաթողիկոսների ու պատրիարքների ունենալիք յարաբերութեան ձերը և այլն:

Սիմէօն կաթողիկոսը, Աղուանից կաթողիկոսութեան

ղեր՝ բնակեցնելով այնտեղ հայ ժողովուրդ և ձեռք բերաւ նրանց համար զանազան արտօնութիւններ. շինեց ս. Խաչ վանքը, որ քաղաքից հեռու է մի ժամով. իսկ Հաշտարխան քաղաքում շինեց մի եկեղեցի՝ Պետրոս և Պողոս առաքեալների անունով:

Յովսէփ Արդութեան Արք-Եպիսկոպոսի թախանձանքով Ռուսաց արքունիքը Եկատարինէ թ. Կայսրուհու ժամանակ ցանկանում էր Սնդրկովկասը և յատկապէս Հայաստանը ազատել տիրապետող մահմեդական խաների բռնութիւնից, որոնք նկատելով հայ ժողովը այսպիսի ձրգումը, աւելի ևս սկսեցին նեղել և տանջել նրանց. Հայերը համբերութեամբ տանում էին բոլոր նեղութիւնները, այն յոյսով թէ շուտով Վրաստանի հետ միասին Ռուսաստանի խնամակալութեան տակ վայելելու են ազատութիւն: Սակայն մի անակնկալ դէպէ՝ այն է՝ իշխան Գրիգոր Պատեմկինի մահը խանգարեց, որի մտերմութեան շնորհիւ միայն յոյս ունէր Յովսէփ Արքեպիսկոպոսի կատար ածել իւր մտադրեալ նպատակը: Թէպէտ այս նպատակը, որ էր Հայաստանը մահմետականների բռնութիւնից ազատել, չյաջողուեց, սակայն յիշեալ հանգամանքը մեծ վստահութիւն էր ներշնչում ձգտել կաթողիկոսական գահին և դեռ Ղուկաս կաթողիկոսի կենդանութեան ժամանակ նա էջմիածնի կաթողիկոսական տեղապահ նշանակուեց:

Յովսէփ Արք-Եպիսկոպոսի կաթողիկոսանալուն, նոյն իսկ Ղուկաս կաթողիկոսը և էջմիածնի նշանաւոր Եպիսկոպոսները գրեթէ հակառակ էին, կասկածելով թէ մի գուցէ Տաճկաց և Պարսից կառավարութիւնները իբրև տիրող պետութիւններ, որոնց հետ Յովսէփ արքեպիսկոպոսը թշնամական յարաբերութեան մէջ էր, հայ ժողովրդից հանէին իրենց վրէժը:

Յովսէփի մահից յետոյ կաթողիկոս ընտրուեց Կ. Պոլ-

սի Դանիէլ պատրիարքը, սակայն մինչեւ սրա ս. Էջմիածնին հասնելը, էջմիածնի միաբան, կնեգէթցի Դաւիթի Եպիսկոպոսը իր ազգականների ձեռնտւութեամբ և Երեւանի պարսիկ սարգարի հրամանով կաթողիկոսութիւնը գրաւեց և նոյն թուի ապրիլի 28-ին օծումն ընդունեց, որով և ծագեց Դաւիթ Դանիէլեան վէճը և շարունակուեց բաւական ժամանակ, մինչեւ որ Ազգի իշխանների միջոցով Դանիէլը՝ 1802 թ. մայիսի 25-ին իւչ Քիլիսայի ս. Յովհաննէսի վանքում օծուել էր, ժառանգեց կաթողիկոսական գահը և վախճանուեց 1810 թուին: Սրան յաջորդեց նոյն թուի նոյեմբերի 6-ին Հաշտարխանի Եփրեմ արքեպիսկոպոսը:

Եփրեմ կաթողիկոսը, պարզամիտ և հեղաբարոյ մարդ էր: Սրա ժամանակ ընդարձակուեց էջմիածնի գրատունը և նորոգուեց տաճարի տանիքը. բայց մի կողմից իր առատաձեռնութիւնը և միւս կողմից պարսկական բռնութիւնները պատճառ դարձան Աթոռի ծանր պարտքերի տակ ընկնելուն: Եփրեմ կաթողիկոսը չկարողանալով վճարել այդ պարտքը, դիմեց Ռուսաց տէրութեան սահմանը, ըստ Շուշի, յետոյ 1822-ին Հախպատ և ապա Տփիս, և երբ Ռուսաց տէրութիւնը նուածեց Երևանը, այնուհետև միայն կաթողիկոսը վերադարձաւ իր Հայրապետական Աթոռը ս. Էջմիածին. բայց որովհետեւ ծերութեան պատճառով արդէն աչքերի լոյսը պակասել էր, ուստի 1830 թ. հրաժարուեց գահից, քսան տարի Հայրապետական իշխանութիւնը վարելուց յետոյ: Այնուհետեւ ապրեց հինգ տարի, վախճանուեց 1835 թ. և թաղուեց միաբանութեանը, վախճանուեց 1835 թ. և թաղուեց միաբանութեանը, ինչպէս որ ինքն առաջուց կտակել էր:

40.

ՅՈՎՀԱՆՆԵՍ Հ. ԿԱՐԲԵՑՈՒԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎՈՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ԹԻՒՆԸ ՌՈՒՍՈՍՏԱՆՈՒՄ

Եփրեմ կաթողիկոսի կենդանութեան ժամանակ 1831 թ. ս. էջմիածնում գումարուած ժողովով կաթողիկոս ընտրուեց Յովհաննէս արքեպիսկոպոսը, որ նոյն տարին կայսերական հրովարտակով հաստատուեց և ընդունեց կաթողիկոսական սուրբ օծումն. Կաթողիկոսն այնուհետեւ միքանի կարևոր կարգադրութիւններ անելուց յետոյ՝ որոնք վերաբերում էին ս. էջմիածնի ընդհանրական կաթողիկոսի գերիշխանութեանն ու Տաճկաստանի յարաբերութեանը, սկսեց զբաղուել ներքին կարգադրութեամբ, այն է՝ վերանորոգեց տպարանը և տպագրեց եկեղեցական գրքերը, վճարեց ս. էջմիածնի բոլոր պարտքերը և մինչև անդամ մի գումար ևս յետաձգելով, գրեց արքունական գանձարանը՝ Մայր Սթոռի անունով. շինեց նաև ս. էջմիածնում մի քանի կարևոր շինութիւններ. Սըա կաթողիկոսութեան օրով 1836 թ. գրուեց և կայսրից հաստատուեց այն գրաւոր Սահմանադրութիւնը (Պոլոժենիա), որով պէտք է կառավարուէին Ռուսաստանի Հայոց եկեղեցիները և եկեղեցական վարչութիւնները. Ահա այդ կանոնադրութեան հիման վրայ 1837 թուին փետրուարի 22-ին ս. էջմիածնում բացուեց Սինօդը:

Յիշեալ Բարձրագոյն կարգադրութեան համաձայն Ռուսահայերն ունեցան հետևեալ հոգեոր հաստատութիւնները. Ս. էջմիածնում Սինօդ, որի նախագահն է Վեհափառ Հայրապետը ութ անդամներով, որոնք կարող են լինել եպիսկոպոսներ և թէ վարդապետներ:

Ռուսաստանի վեց վիճակում բացուեցին Կոնսիստօ-

րիաներ, որոնց նախագահում են թեմակալ առաջնորդ՝ ները չորս անդամներով. Անդամներից մինը լինում է վարդապետ կամ աւագ քահանայ, իսկ մնացածները քահանաներ. Ռուսաստանի վեց վիճակները կազմում են հետեւեալ թեմերը.

1) Երևանայ վիճակ, 2) Նոր-Նախիջևանի կամ Բեսաբարիայի, 3) Հաշտարիսանի, 4) Վրաստանի և Իմերէթի, 5) Շիրուանու կամ Շամախու և 6) Ղարաբաղի վիճակ:

Իւրաքանչյուր թեմի մէջ՝ որոշուած գաւառական քաղաքներում բացուած են Հոգեոր կառավարութիւններ, որոնց նախագահում են տեղական յաջորդները, որ սովորաբար լինում են վարդապետ կամ աւագ-քահանայ երկու քահանայ անդամներով:

Գործակալները կամ եկեղեցիների բարեկարգութեան վերատեսուչները՝ մնած քաղաքներում ընտրուում են Առաջնորդից, իսկ գաւառական քաղաքներում Յաջորդից, կամ Հոգեոր կառավարութիւնից, որոնք կատարում են իրանց մերձաւոր Հոգեոր իշխանութեան յանձնալարութիւնները և հակում եկեղեցիների և եկեղեցականների բարեկարգութեան վրայ. սրանք սովորաբար լինում են քահանաները:

Յովհաննէս Կարբեցին՝ վարելով իր իշխանութիւնը տասնեմի տարի, վախճանուեց 26 մարտի 1842 թ. և թաղուեց ս. էջմիածնում:

ՆԵՐՍԻՍ Ե. ԱՇՏԱՐԱԿԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Յովհաննէս Կարբեցու մահից յետոյ նոր Պոլոժենիայի համաձայն 1843 թուին Ռուսաստանի, Տաճկաստանի և Պարսկաստանի ազգայինների պատգամաւորների տանիակցութեամբ միաձայն ընտրուեց կաթողիկոս Նորմանակցութեամբ. միաձայն նաև կաթողիկոս Նորմանակցութեամբ:

Նախիջևանի և Բեսարաբիայի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոս Աշտարակեցին և Նիկողայոս Ա. կայսրից հաստատուեց նոյն թուականին:

Ներսէսը՝ իր հանձարեղ և գործունեայ հոգեորական շատ յարգուած էր ամենքից: Սա Վրաստանի և Խմերեթի թեմի առաջնորդութեան ժամանակ 1822 թ. Թիֆլիզում հիմնեց մի հոյակապ ուսումնարան, որ կոչւում է այժմ Ներսիսեան Ազգային Հոգեոր Դպրոց՝ հիմնադրի անունով, որպէսզի Հայոց լեզուն և կրօնի ուսումնական առաջ տարուի: Նա կարողացաւ նիւթական ապահովութիւն տալ դպրոցին՝ ձեռք բերելով զանազան անշարժ կալուածներ՝ թէ սր. Էջմիածնի կալուածների արդիւնքով և թէ ժողովրդի առատածեռն նուիրատութեամբ: Սա էր, որ առաջին անգամից սահմանեց եկեղեցիներում չափաբերական մա-



տեաններ ծնուածներին, պսակուածներին և վախճանուածներին՝ գրելու համար. նոյնպէս երէցփոխներ՝ իւրաքանչիւր եկեղեցում, տալով նրանց հաշուեմատեաններ՝ գրելու եկեղեցական ամեն տեսակ արդիւնքները. Ներսէսը

Ներսիսը կ. ս. Էջմիածնի ազատութեան համար բաւական աշխատեց ուսուաց զօրքի հետ, և երբ նա նուիրուած էր հիմնած դպրոցին աշխատում էր նրան բարեկարգել՝ հրաւիրելով Փարիզից Շահան-Ջրպետ գիտնականին և Մոսկովայից Ալամդարեան հոչակաւոր վարդապետին կրօնուսոյց և ուրիշ բանիմաց անձանց, յանկարծ 1828 թ. նշանակում է Բեսարաբիայի առաջնորդ և ուղեսորւում է իր նոր պաշտօնատեղին:

Ներսէսը իր կաթողիկոս՝ աշխատում էր Կ. Պոլսի պատրիարքարանի հետ նախկին յարաբերութիւնները վերահստատել և նրա առաջարկութիւններից պատրիարքարանը Մատթէոս պատրիարքի միջոցով համաձայնեց ըսդունել հետեւալները — որ պատրիարքը համարուի կաթողիկոսի փոխանորդ, որ սուրբ Միւռոնը պատրիարքի անունով ուղարկուի և պատրիարքարանից բաժանուի ուրոց հարկաւոր է և որ կաթողիկոսը համարուի Լուսաւորչի օրինաւոր յաջորդ և ընդհանրական հայրապետ: Յիշեալ յարաբերութիւնները վերականգնելուց յետոյ սկսեց զբաղուել ս. Էջմիածնի շինութիւններով, ս. Գայիանէի վանքին մօտիկ մի անտառ ձգեց և անտառին կից շինեց միածնի ծանրատար օդը, մի մշակած կանոնադրութեամբ հաստատեց ս. Էջմիածնում Վանական կառավարութիւն, այստեղ նա հիմնեց նաև շերամապահութեան շաքարի գործարան, բայց յաջողութիւն չունենալով դարեց: Եւ որովհետեւ Ներսէսը իր գլխաւոր ուշադրութիւնը դարձրեց Աթոռի տնտեսական մասը կանոնաւորելու, այս դարձրեց Աթոռի տնտեսական մասը կառավարելու, այս պատճառով դպրոցի և տպարանի գործերը մնացին անխրանակում նշանակում էր կառավարիչներ, փոխանական հաստատուն առաջնորդների, յաջորդների ու գործակալների պաշտօնի մէջ կարգում էր աշխարհական մարդկան գիւղիկութիւն պահպանութիւն վիճակային բոլոր արդիւնքները, որոնցից ստանալով վիճակային բոլոր արդիւնքները,

գործադրում էր իր ձեռնարկած շինութիւնների վրայ։
Ներսէս կաթողիկոսը իրեն տեղակալ նշանակելով էջ-
միածնի Սինօդի աւագ անդամ Ղուկաս Արք. Եպիսկոպոսին,
ինքը մեծ մասը անց էր կացնում Թիֆլիզում, ուր և վախ-
ճանուեց յանկարծակի մահուամբ 13-ն փետրուարի 1857
թուի։ Մարմինը մեծ հանդէսով փոխադրեցին ս. էջմիածնին
և թաղեցին Դանիէլ կաթողիկոսի գերեզմանի մօտ։

42.

ՄԱՏԹԷՈՍ ԵՒ ԳԵՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

Ներսէս Ե. կաթողիկոսի մահից յետոյ ս. էջմիածնի
ընտրողական ժողովում կաթողիկոս ընտրուեց կոստանդ-
նուպոլիսի նախկին պատրիարք Մատթէոսը 1858 թուին և
կայսերական հրովարտակով հաստատուելով, 1859 թ. ըն-
դունեց Հայրապետական ս. Օծում։

Մատթէոս կաթողիկոսը՝ իր իշխանութիւնը ստանձնե-
լուց յետոյ աւելի զբաղւում էր գրական գործերով։ Ունի
հայերէն գրաբար և աշխարհաբար զանազան կրօնական բո-
վանդակութեամբ 12 հատոր գիրք, որոնց մէջ նշանաւոր
են «Հանդէս ուղղափառութեան Հայաստանեայց ս. եկե-
ղեցւոյ» և «Բարի մարդ և բարի քրիստոնեայ» գրքերը։
Ներսիսեան դպրոցի կառավարութեան համար տուաւ մի
նոր կանոնադրութիւն՝ տպագրուած 1861 թուին, թէ թե-
մական և թէ գաւառական քաղաքներում բաց արաւերկ-
ուեռ ծխական դպրոցներ և իր ժողովրդասէր բնաւորու-
թիւնով վանքերի եկամուտները յատկացրեց դպրոցներին
և այսպէս վեց տարի կառավարելով ս. էջմիածնայ Աթոռը,
վախճանուեց 1865 թուին և թաղուեց ս. Գայիանէի վան-
քի գաւթում։

ՀՈԳԵԻՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՅԿԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ
ՊԱՐՄԿԱՍՏԱՆՈՒՄ

Որովհետև հայ ժողովուրդը բացի Ռուսաստանից գտն-
ուում է նաև Տաճկաստանում և Պարսկաստանում, ուստի ա-
մենայն Հայոց կաթողիկոսը բոլոր հոգեսոր գործերը իր անմի-
ջական իշխանութեամբ է կառավարում, իսկ Տաճկաստանի-
նը՝ կոստանդնուպոլիսի պատրիարքի, որ սովորաբար լինում է
արքեպիսկոպոս՝ ձեռնադրուած ս. էջմիածնում ամենայն
Հայոց կաթողիկոսից և համարուում է փոխանորդ կաթո-
ղիկոսի։ Բացի կ.-Պօլսի պատրիարքից կայ և Երուսաղէմի
պատրիարք, որ կառավարում է Պաղեստինէի հայոց եկե-
ղեցիները՝ կոստանդնուպոլիսի կեղրոնական իշխանութեան
ղեցիները։ Կոստանդնուպոլիսի կեղրոնական իշխանութեան
հակողութեան տակ։ Կ. Պօլսի հայոց պատրիարքը եկեղե-
չական վարչական մասը կառավարում է ինքնին, իսկ կրօ-
ցական խնդիրներում հրահանգւում է ս. էջմիածնի ամե-
նայն Հայոց կաթողիկոսից։

Բացի կ.-Պօլսի և Երուսաղէմի պատրիարքներից Տաճ-
կաստանում կան նաև երկու մասնաւոր կաթողիկոսներ,
այն է՝ Սահ և Աղթամարի, որոնք իբրև վիճակաւորներ՝
թեմերում գործում են կ.-Պօլսի պատրիարքի իրա-
ւանց թեմերում գործում են կ.-Պօլսի պատրիարքի իրա-
ւասութեան տակ, միայն իրաւունք ունին իրենց վիճակ-
ների համար ս. մեռն օրէնել և պատրիարքի կարգադրու-
թեամբ եպիսկոպոսներ ձեռնադրել։

Տաճկաստանում սահմանուած են հետևեալ հոգեսոր-
վարչական հաստատութիւնները։ 1) Ազգային ընդհանուր
ժողով, որ գումարուում է կ. Պօլսում պատրիարքի նախա-
ժողովական մի աշխարհականի ատենապետութեամբ և
120 անդամների մասնակցութեամբ։ 2) Կրօնական ժողով
նախագահութեամբ պատրիարքի և ատենապետութեամբ
մի եպիսկոպոսի, որի անդամները հոգեսորական են։ 3) Քա-
ղաքական ժողով՝ նախագահութեամբ գարձեալ պատրիար-

քի և աշխարհական ատենապետի. անդամներն են աշխարհական անձինք, և 4) Խառն ժողով՝ երբ կրօնական և քաղաքական ժողովները միանում են:

Պարսկաստանունի երկու առաջնորդ. առաջինը Ասլրպատականի, որի առաջնորդանիստն է Թաւրիզը, երկրորդը Պարսկաստանի և Հնդկաստանի, որի առաջնորդանիստն է Սպահանը: Սրանք անկախ միմեանցից՝ ազատ կերպով կառավարում են իրանց թեմերը և միայն պատասխանատու են ամենայն Հայոց կաթողիկոսի առաջ:

Մատթէոս կաթողիկոսի մահից յետոյ 1866 թուին ս. Էջմիածնում գումարուած Ազգային ժողովում ընտրուեց Գէորգ արքեպիսկոպոս, Բրուսայի վիճակի առաջնորդը՝ որ նոյնպէս եղած էր Կ. Պօլսի պատրիարք և հաստատուելուց յետոյ 1867 թ. ս. Էջմիածնում ընդունեց Հայրապետական ս. օծումն Գէորգ Դ. անունով:

Գէորգ Դ. իր օծումից յետոյ, առաջին գործը համարեց ներկայանալ կայսեր և ապա 1868 թուին վերադառնալով ս. Էջմիածին, զբաղուեց Աթոռի ներքին բարեկարգութեամբ: Նրա ձեռնարկած նշանաւոր գործերն են «Արարատ» ամսագլի հրատարակութիւնը. թանգարանը. Գէորգեան ճեմարանը և այլ շինութիւնները ս. Էջմիածնում: Սրա ժամանակ հայկական ձայնագրութիւնը պարտառական դարձաւ իւրաքանչիւր քահանայացուի համար: Ուրոշ կանոններ հրատարակեց նշանագրութեան, տգէտ քահանայացուների և այլ ներքին բարեկարգութիւնների համար. բայց և ոչ մինը գործնական նպատակի չհասաւ, կանոնաւորեց վիճակային և Աթոռապատկան եկամուտները և վանականների գոյքը իւրեանց մահից յետոյ վանքերին մնալու համար. 1868 թ. փոխել տուեց Պօլօժենիայի այն յօդուածները, որոնցով վանականների գոյքը մնում էր

իրենց ազգականներին: Կարգեց թեմական տեսուչներ և դպրոցների համար կանոններ հրատարակելով և թեմական տեսուչների համար հրահանգներ, բաւական կանոնաւորեց




գլուխական գործը: 1871 թ. շինել առւաւ Բիւրականի հայ-րապետական ամարանոցը; Ընդարձակեց ներսէսի տնկած անտառը. իւր ժամանակ վերաշինել տուաւ Օշականայ եկեղեցին, ուր Ս. Մեսրոպ թարգմանչի գերեզմանն է, սահմանելով ուխտ և տօն կատարել ամենայն տարի:

Այսպէս վարելով Հայրապետական գահը 1867—1882 թ. վախճանուեց նոյն թուին և թաղուեց ու էջմիածնում:

43.

ՄԱԿԱՐ ԵՒ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՐԻԿ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ:

Գէորգ Դ.-ի մահից յետոյ ո. էջմիածնում կատարուեց կաթողիկոսական ընտրութիւն և այս անգամ միաձայն




ընտրուեց Զմիւռնիայի առաջնորդ Մելքիսեդէկ եպիսկոպոս Մուրադեանը և ձայնից համեմատական առաւելութեամբ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Մահմէտ Աբրամի կար արքեպիսկոպոսը. վերջինս հաստատուեց 1886 թուին: Կար կաթողիկոսը իբրև խիստ կրօնական՝ շատ նախանձակնիր էր գէպի մեր եկեղեցական աւանդութիւնները, որի համար նա յայտնի էր իբրև աւանդապահ եկեղեցու, ինչպէս որ ինքն էլ իր համար շատ անգամ ասում էր. «Թողղ ժողովուրդը ինձանից ոչ մի նոր բան չսպասէ. բաւական է, որ կարողանամ եղածը պահպանել»: Այդ խօսքերն ուղղակի բնորոշում են նրան: Նա բնաւորութեամբ լինելով վերին աստիճանի զգոյշ, շատ անվստահ էր մի գործի ձեռնարկութեան ժամանակ: Սրա միջնորդութեամբ բացուեցան մեր փակուած ծխական դպրոցները, որոնց բարեկարգութեան համար կանոններ և ուսուցիչների համար վարկ սահմանուեց: Հինգ տարի վարելով Հայների համար վարկ սահմանուեց: Հինգ տարի վարելով Հայրապետական իշխանութիւնը, վախճանուեց 1891 թ. ո. էջմիածնում:

Մակար կաթողիկոսի մահից յետոյ ո. էջմիածնի ժողովը մեծ ոգեսրութեամբ ընտրեց Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեան Հայրիկին և Մատթէոս եպիսկոպոս Իզմիրեանին:

1893 թ. Խրիմեան Հայրիկը հաստատուեց կայսրից կաթողիկոս ամենայն հայոց. ուս ունէր բարի և մարդասէր բնաւորութիւն, որի համար և Մուշի առաջնորդութեան ժամանակ ստացաւ ժողովրդից «Հայրիկ» անունը: Նախքան կաթողիկոսութիւնը յայտնի էր իւր գրաւոր աշխատութիւններով և քարոզչութեան մեծ տաղանդով. վարդապետ ժամանակ իբրև վանահայր Վարագայ վանքի, բացապետ ժամանակ այստեղ տպարան, տպագրում է «Արծիւ Վասպուրականի» թերթը, և հիմնում է գիշերօթիկ ուսումնական: Մորա կաթողիկոսութեան օրով Հայոց եկեղեցու հարան:

մար իբրև մի նշանաւոր դէպք համարւում է կառավարութիւնից զրաւուած եկեղեցական կալուածների ու գոյերի վերադարձնելը:



Մկրտիչ կաթողիկոսը 15 տարի վարելով Հայրապետական գահը, վախճանւում է 1907 թ. և թաղւում ու էջմիածնում 87 տարեկան հասակում:

44.
ՄԱՏԹԵՈՍ Բ. ԵՒ ՆԵՐԿԱՅ ԳԵՈՐԳ Ե. ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ:
Խրիմեան Հայրիկին յաջորդեց 1909 թ. Տ. Մատթէ-



ու Բ. Իգմիրլեան Կ.-Պօլսի պատրիարքը: Նորին ո. Օծու-
թիւնը իւր պատրիարքութեան ժամանակ ցոյց տուեց, ոք

Ժողովրդի իսկական ներկայացուցիչն է և իւր զգայուն սրտի և տոկուն բնաւորութեան շնորհիւ եղել է միշտ ժողովրդի համարձակ պաշտպանը։ 1896 թուին հարկադրուեց հեռանալ պատրիարքութեան գահից և Սուլթանից ենթարկուեց աքսորի Երուսաղէմ։ Այդտեղ մնաց մինչև Տաճկաստանի սահմանադրութեան հաստատուելը և Երբ ընդհանուր ներման շնորհիւ վերադարձաւ Պօլիս, ժողովուրդը ցոյց տուեց մեծ ընդունելութիւն, որ ապացոյց էր նորա ժողովրդականութեան։ Մատթէոս Բ. իւր հայրապետական իշխանութիւնը վարեց շատ կարճ ժամանակ, դեռ չ'ըրացրած գահակալութեան երկու տարին, 1910 թ. դեկտեմբերի 11-ին վախճանուեց սրտի կաթուածից, որի մեծաշուրջ թաղումը կատարուեց Ս. Էջմիածնում բազմաթիւ հոգևորական և աշխարհական պատգամաւորների ներկայութեամբ։

Մատթէոս Բ.-ի մահից յետոյ ս. Էջմիածնի տաճարում Համազգային ժողովով 80 հոգևորական և աշխարհական պատգամաւորների մասնակցութեամբ 1911 թ. դեկտեմբերի 13-ին գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցին կաթողիկոսական երկու թեկնածուներ՝ կաթողիկոսական տեղակալ Գէորգ արք եպիսկոպոս Սուրէնեան և Կ. Պօլսոյ նախկին պատրիարք Եղիշէ արք Եպիսկոպոս Դուրեան։ Առաջին թեկնածուն Գէորգ արք եպիսկոպոսը հաստատուելով Ռուսաց Կայսրից, օծուեց ս. Էջմիածնում, անուանուելով Գէորգ Ե. Կաթողիկոս Ամենայն Հայոց։

Գէորգ Ե.-րդ կաթողիկոսը, որ իւր սկզբնական կըրթութիւնը ստացել է Թիֆլիսի գիմազիօնում, առանձին սէր և համակրութիւն է ունեցել դէպի հոգևոր կոչումն և Գէորգ Դ. կաթողիկոսի օրով ստանալով այդ կոչումն, թէ Էջմիածնում և թէ Էջմիածնից դուրս նա վարել է

զանազան պաշտօններ, Նա սահանձնել է առաջնորդական պաշտօն Երևանի, Հաշտարխանի և Թիֆլիսի թեմերի շարունակական հետեւութեան։



Նորին Ս. Օծութիւնը, որ այժմ վարում է Հայրապետական իշխանութիւնը դարձեալ շարունակ հետամուտ է պղային և կրթական գործերի ձեռնարկութեանց։



ՉՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Ց Ա Ն Կ Ը

Երես

Մի քանի խօսք գրքոյի լոյս ընծայելու առիթով. 3

Շ Ր Զ Ա Ն Ա

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՌԱՔԵԱԼԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

1. Քրիստոնէական եկեղեցու սկզբնաւորութիւնը, Մատա-	թիայի ընտրութիւնը և սուրբ Հոգու գալուստը	5
2. Քրիստոնէութեան առաջին տարածումն երուսաղէմում	և հօթն սարկաւագների ընտրութիւնը	6
3. Քրիստոնէական եկեղեցու առաջին թշուառութիւնը,	սուրբ Ստեփանոսի նահատակութիւնը և հալածանք-	
ները հրէից և հնթանոս ազգերից	ները հրէից և հնթանոս ազգերից	8
4. Սոլոսի դարձը և Քրիստոնէութեան տարածուիլը ե-		
րուսաղէմից դուրս	րուսաղէմից դուրս	9
5. Պողոս առաքեալի ճանապարհորդութիւնը և միւս առա-		
քեալների վախճանը	քեալների վախճանը	12

Շ Ր Զ Ա Ն Բ

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐԻՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

6. Քրիստոնէական եկեղեցու սկզբնաւորութիւնը Հայաս-		
տանի եղեսիա քաղաքում և նախկին Լուսաւորիչներ.		
— Ս. Թաղէսս և Բարդողիմէոս առաքեալներ	14	
7. Անակի Հայաստան գալը և ս. Քրիգոր երկրորդ Լուսա-		
ւորչի Խորվիրապ զցուիլը	18	
8. Ս. Հովհաննիս Հայաստան գալը, նահատակութիւնը		
և սուրբ Գրիգորի Խորվիրապից դուրս ելնելը	20	

Երես

9. Սուրբ Լուսաւորչի տեսիլը և Հայրապետութիւնը	23
10. Սուրբ Գրիգորը մկրտում է Տրդատին և նրա ընտանի- քին: — Ս. Էջմիածնի շինութիւնը և Հայաստանի լու-	24
սաւորութիւնը:	26
11. Լուսաւորչի առանձնանալը և մահը	28
12. Սուրբ Խաչի գիւտը, գերութիւնը և վերադարձը	29
13. Սուրբ Գրիգոր Լուսաւորչի յաջորդներ՝ Արիստակէս, Վլթանէս, Յովսիկ և Դանիէլ կաթողիկոսները	32
14. Մեծն Ներսէս	

Շ Ր Զ Ա Ն Գ

15. Սուրբ Սահակ Պարթև. — Ս. Մեսրոպ Մաշտոց. — Հայկա-	36
կան տառերի գիւտը և Ս. Գրքի թարգմանութիւնը	42
16. Տիեզերական ժողովները	
17. Առաջին կրօնական պատերազմի շարժառիթը հայոց և պարսից մէջ. — Ատովմեանց նահատակութիւնը. — Եւ	44
դեմշապուհի Հայաստան դալը	
18. Միհրներսեհի նամակը Յաղկերտի կողմից հայ նախա-	
րալներին և հայերի պատասխանը, նախարարների Պարսկաստան գնալը և վերադարձը Հայաստան: Անգղ	46
Պիւղաքաղաքի դիմադրութիւնը մոգերին: Վասակ Սիւ-	
նեաց իշխանի դաւաճանութիւնը	
19. Աւարայրի պատերազմը և սուրբ Վարդանանց և Դեռ-	50
դեանց նահատակութիւնը	
20. Սուրբ Յովսէփ, Գիւտ և Յովհան Մանդակունի կաթո-	53
ղիկոսները	
21. Վ-րդ դարու եկեղեցական մատենագիրներ	55
22. Վրաց ազգի քրիստոնէութիւն ընդունելը և Հայոց եկե-	
ղաց ազգի քրիստոնէութիւնը ընդունելը, Մովսէս, Արքահամ և Կոմիտաս	58
դեցուց բաժանուելը	
23. Քաղկեդոնի ժողովի մասին մի ակնարկ. Քրիստափոր և եզր կաթողիկոսներ	60
24. Ներսէս Գ. Շինող կաթողիկոս	62
25. Յովհան Օձնեցի	64
26. Յովհաննէս Զ. Դարասխանակերտցի կաթողիկոսը	66
27. Անանիա Մոկացի	67

Երես

28. Խաչիկ Ա.	կաթողիկոս	և Գրիգոր Նաբեկացի	69
29. Պետրոս	Դեմագարձ		70
30. Խաչիկ Բ.	կաթողիկոս		73
31. Գրիգոր Վկայամէր			74
32. Գրիգոր Պահլաւունի			76
33. Ներսէս Շնորհալի			77
34. Գրիգոր Տղայ			80

Ճ Ր Զ Ա Ն Դ թ թիւն աճանդակ

35. Հայրապետական	Աթոռի փոխադրուիլը	և կրկին հաստատուիլը	ս. էջմիածնում, Գրիգոր Մուսաբէկիան, և	
Կիրակոս Ա.	վկրապեցի	կաթողիկոսներ:	Պատրիարքութեան սկիզբը կ. Պօլսում.	
36. Մովսէս Գ.	և Փիլիպպոս	Աղքակեցի	կաթողիկոսները	
37. Յակոբ Զուղայեցի	և Եղիազար	կաթողիկոսները	89	
38. Միմէօն Երևանցի	և Ղուկաս	Կարնեցի	կաթողիկոսները	90

Ճ Ր Զ Ա Ն Ե

19-րդ ԴԱՐԻ ՄԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԵՐԸ

39. Յովհէփ	արքեպիսկոպոս	Արդութեան,	Դաւիթ, Դանիէլ
և Եփրեմ	կաթողիկոսները		93
40. Յովհաննէս Հ.	Կարբեցու	կաթողիկոսութիւնը	և հայոց
Եկեղեցական	վարչութեան	կազմակերպութիւնը	Առևսասանում
41. Ներսէս Ե.	Աշտարակցի	կաթողիկոսը	97
42. Մատթէոս և Գէորգ	կաթողիկոսները		100




Հոգեւոր հաստատութիւնները Տաճկաստանում՝ եւ Պարսկաստանում՝

101

43. Մակար և Մկրտիչ Հայրիկ	կաթողիկոսներ	104
44. Մատթէոս Բ. և Ներկայ Գէորգ Ե.	հայրապետները	107







ՀՀ Ազգային գրա



